

Շքարային

Արքայ Լին



YEGHISHE CHARENTS MUSEUM
OF LITERATURE AND ART

SHAKESPEARE
KING LEAR




Publishing House of Museum of Literature and Art
Yerevan - 2006

82
2-53

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

ՇԷՔՍՊԻՐ
ԱՐՔԱՅ ԼԻՐ

Թարգմանությունը
Յովհաննէս Խան-Մասեհեանի
Եղիշէ Չարենցի ստեղծագործական
խմբագրութեամբ



Գրականութեան եւ արուեստի թանգարանի հրատարակչություն
Երեւան - 2006

ՀՏԴ 820-2 Շեքսպիր
ԳՄԴ 84.4 Մք
Շ 537

**ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼ Է
ԱՐՄԷՆ ԵՒ ՄԻՄԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐԻ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ**


Հրատարակության պատրաստեց
ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ

Շ 537 Շեքսպիր, Արքայ Լիր: Ողբերգություն. - Եր.:
ԳԱԹ հրատ., 2006, 222 էջ:

Գիրքը ներկայացնում է Շեքսպիրի «Արքայ Լիր»
ողբերգության Յովհաննես Խան-Մասեհեանի թարգմանությունը՝
Ե. Չարենցի ստեղծագործական խմբագրությամբ: Հատորն ունի
սուաչաբան: Տեքստը տպագրում է սուաչին անգամ:

Շ 4703010300 2006
841(01)2006

ԳՄԴ 84.4Մք



ISBN 99930-60-64-X

© Գրականության և արուեստի թանգարան, 2006

ՉԱՐԵՆՑ ԵՒ «ԱՐՔԱՅ ԼԻՐ»

1928–1935 թուականներին վարելով Պետհրատի գեղարուեստա-
կան գրականության բաժինը՝ Եղիշե Չարենցն իր մշակած ծրագրով
հրատարակել է հրատարակության է պատրաստել հայ եւ համաշ-
խարհային գրականության բազմաթիւ ընտիր նմուշներ: Նա հան-
դես է եկել թե՛ որպէս թարգմանիչ եւ թե՛ որպէս կազմող ու խմբա-
գիր: Այսպէս, 1934-ին նրա խմբագրությամբ լոյս է տեսել Շեքսպիրի
«Մակբէթը» (թարգմանիչ՝ Յովհաննես Խան-Մասեհեան): Նոյն թը-
ականին մեծ բանաստեղծը ձեռնարկել է նաեւ տպագրել Շեքսպիրի
իր նախասիրած մէկ այլ ողբերգությունը՝ «Արքայ Լիրը»: Այս կապակ-
ցությամբ նա խնդրել է Ռուբէն Չարենան գտնել ողբերգության
Յովհ. Խան-Մասեհեանի թարգմանությունը՝ խմբագրելու համար¹:

«Տարայ գիրքը:– Պատմում է Ռուբէն Չարենան իր լուշերում²:–
Ասաց, որ մի երկու օրից կսկսի: Եւ, իսկապէս, սկսեց: Տողած թուղթը
դրեց սուաչը, Խան-Մասեհեանի թարգմանությունը՝ մյուս կողմը եւ
սկսեց արտագրել՝ տեղնուտեղը խմբագրական փոփոխության են-
թարկելով: Սկզբում բառական հարազատ մնաց թարգմանութեանը,
փոխում էր քիչ, իսկ յետոյ փոփոխությունները շատացան: Թարգմա-
նությունը մաքրում էր հնաբանություններից՝ պահպանելով ոճի վե-
հույունը, լեզուն այժմեացնում էր, մի բառի տեղ դնում էր մի ուրիշը,
աշխատում մտքին հաղորդել շեշտակի եւ դիպուկ արտայայտու-
թիւն»:

¹ Խօսքը «Արքայ Լիրի» 1898 թ. թիֆլիսեան հրատարակության մասին է:

² Ռ. Չարենանի լուշերից այս եւ յաջորդ մէջբերումները կատարում ենք
«Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին» գրքից (Երևան, 1961, էջ 365–367):

Խմբագրական առաել հիմնաւոր աշխատանք կատարելու համար Չարենցը, Ռ. Չարեանի վկայութեամբ, օգտուել է նաեւ ռուսերէն թարգմանութիւններէից եւ անգամ դիմել է գերմաներէն թարգմանութեան... «Ինչ-որ կասկածներ էին ծագել, որ հանգիստ չէին տալիս նրան... ամբողջապէս համակուած էր Օէքսպիրի ողբերգութեամբ»: Երբեմն Չարենցն ինքը թելադրել է, իսկ Ռ. Չարեանը՝ գրել: Միասին քննարկել են որոշ խմբագրուած հատուածներ...

Չարենցն ամբողջապէս աւարտել է Խան-Մասեհեանի թարգմանութեան իր խմբագրութիւնը եւ այդ աշխատանքով ռզւորուած՝ հաստատապէս վճռել է նորովի թարգմանել «Արքայ Լիրը», որի սասեհեանական թարգմանութիւնը, իր հիմնաւոր խմբագրութեամբ հանդերձ, նրան չի բաւարարել: «Ես այս կյանքս, կարող եմ տպել: Սա առաջին էտապն է, յետոյ ինքս կթարգմաննմ: Անպայման կթարգմաննմ: Ոչինչ, որ անգլերէն չգիտնմ: Զգում եմ, որ Լիրը հոգուս մէջ է, կարծես մի հարազատ անձ լինի, այնպէս եմ զգում նրան»:

Որ Չարենցն արդէն 1934 թուականին ցանկութիւն է ունեցել թարգմանել «Արքայ Լիրը», ինչպէս նաեւ «Համլետը», վկայել է նաեւ բանաստեղծի ժամանակակիցներից մէկ ուրիշը՝ Սարգիս Մելիքեթեանը³:

Ըստ Ռ. Չարեանի, Չարենցը որոշ ժամանակ անց իսկապէս անցել է «երկրորդ էտապին», այսինքն՝ սկսել է թարգմանել «Արքայ Լիրը»: «Զեմ ուզում մթնոլորտից դուրս գալ, – ասել է բանաստեղծը, – լաւ կլինի հիմի անեմ, թէ չէ վախենում եմ յետոյ սատչեմ»: Ռ. Չարեանը յաճախ ներկայ է եղել նաեւ թարգմանութեան ընթացքին: Նրա վկայութեամբ, Չարենցն «աշխատում էր արագ թափով, բայց երբեմն կանգ էր առնում, մի ձեւով փորձում, այլ կերպ զգում, եւ երբ չէր ստացում՝ ջղայնանում էր, վրդովում... Լիրի կերպարը դարձել էր նրան հարազատ, մօտ ու սիրելի: Ծատ էր խօսում նրանից, հազար ու մի դիտողութիւն անում: – «Լիրը» Օէքսպիրի ամենալաւ գործն է, ամենախոր, ամենաընդգրկուն: Իսկ մի օր էլ ասաց.

– Գիտե՞ս, թէ եւ սքանչելի գործ է՝ անհնար է խաղալ: Ամբողջը միտք է, փիլիսոփայութիւն, ինչպէ՞ս խաղաս: Ուզես-չուզես՝ գործողութիւնն առաջ կընկնի եւ կդառնայ մի սովորական սրտառուչ պատ-

³ Տես «Բանբեր պետական արխիւներ», 1966, թիւ 3, էջ 196:

մութիւն: Զեմ պատկերացնում բեմում: Կարդալ, միայն կարդալով կարելի է սրա ողջ խորութեանը հասնել»:

Հաւանաբար 1934-ից յետոյ բանաստեղծի կեանքի ողբերգական ընթացքը խանգարել է նրան շարունակել եւ ամբողջացնել աշխատանքը, ինչպէս որ անաւարտ է մնացել Գեօթէի «Ֆաուստի» նրա թարգմանութիւնը:

Յամենայն դէպս, առ այսօր չի յայտնաբերուել «Արքայ Լիրի» (ոչ էլ «Համլետի») նրա թարգմանութիւնը, չունենք նաեւ ոչ մի տուեալ, որ նա ամբողջապէս թարգմանել է այդ գործերը: Թերեւս մի օր երջանիկ պատահականութեամբ յայտնաբերուեն «Արքայ Լիրի» նրա սկսած եւ հաւանաբար անաւարտ մնացած թարգմանութեան էջերը...

Ինչ վերաբերում է Յովհ. Խան-Մասեհեանի թարգմանութեան նրա խմբագրութեանը, ապա դրա ձեռագիրը Ռ. Չարեանը, իր իսկ վկայութեամբ, յանձնել է Պետհրատի այն ժամանակուայ տնօրէն Էդուարդ Չոփուրեանին: «Յիշում եմ, առաջին էջի վրայ գրել էր խնդրանք – չկորցնել ձեռագիրը եւ օգտագործելուց յետոյ անպայման վերադարձնել իրեն»:

Չարենցի այդ ձեռագիրը դեռևս 1938 թուականի ամռանը գտնուել է Պետհրատի գեղարուեստական գրականութեան բաժնում: Այստեղ այն տեսել եւ մասամբ արտագրել է արժանաշիշատակ գրականագէտ Արամ Ինճիկեանը: Նա իր արտագրութիւնը, մի համառօտ ծանօթագրութեամբ, 1956-ին յանձնել է Գրականութեան եւ արուեստի թանգարանին (ԳԱԹ). որը պիտի շուրջ մէկ տասնամեակ անց կոչուէր Չարենցի անունով: Յետագայում Թանգարանի ձեռագրատան վարիչ Գոհար Ազնաւուրեանի խնդրանքով Ա. Ինճիկեանն այդ կապակցութեամբ գրել է մի համեմատաբար աւելի ծաւալուն ծանօթութիւն, որ հարկ ենք համարում բերել ստորև.

«1938 թ. ամռանն էր: Տպագրութեան էի պատրաստում Ազարիա Աղէլեանի Երկերի ժողովածուն եւ այդ առթիւ երբեմն լինում էի Պետհրատի գեղարուեստական գրականութեան բաժնում: Բաժնի քարտուղարն էր Վահան Տէրեանի եղբօր՝ Արամի կինը՝ Հայկանուշ Տէր-Գրիգորեանը, մի շատ բարեկիրթ, ազնուաբարոյ, կարեկից հոգու տէր անձնատրութիւն: Նա բացառիկ ուշադիր եւ հոգատար էր մանաւանդ երիտասարդ այցելուների նկատմամբ: Մի անգամ, սովորական գրոյցի ժամանակ, հայեացքս ընկաւ նրա սեղանի վրայ գտնուած ձեռագրի անուանաթերթին՝ «Արքայ Լիր»... Չարենցի

ծանօթ ինքնագիրն էր եւ ստորագրութիւնը՝ նոյն անուանաթերթի վրայ գրուած երկտողի տակ. «Ընկ. Չոփուրեանին, խնդրում եմ չկորցնել ձեռագիրը եւ օգտագործելուց յետոյ անպայման վերադարձնել: Ե. Չարենց»:

Չարենց եւ «Արքայ Լիր»...

Ինձ համար շատ գայթակղիչ անակնկալ էր:

Իմ հարցումին, թէ ինչպէ՞ս եւ որտեղի՞ց է յայտնաբերուել Չարենցի ձեռագիրը, եւ Պետհրատն ի՞նչ է մտադիր անելու, տիկին Հայկանուշը տխուր պատասխանեց, թէ կարգադրուած է բաժնի արխիւից առանձնացնել «Ժողովրդի թշնամիների» ձեռագրերը, ցուցակագրել եւ սպասել յետագայ կարգադրութեան:

Պարզ էր, թէ ի՞նչ էր սպասում Չարենցի ձեռագրին...

– Հնարատր չէ՞, արդէօք, թաքցնել մի տեղ, չյանձնել:

Տիկին Հայկանուշն ասաց, որ ցուցակն արդէն կազմուած է:

Ես խնդրեցի թոյլ տալ ձեռագիրը տուն տանել, ընդօրինակել եւ վերադարձնել:

Տիկին Հայկանուշը համաձայնուեց, պայմանով, որ աշխատանքի վերջին տանեմ եւ առաւօտեան վաղ բերեմ, քանի որ յանկարծ կարող եմ պահանջել:

Մեր պայմանաւորութեան համաձայն, մի քանի օր, հիմնարկը փակելուց առաջ, ձեռագիրը թերթի մէջ փաթաթած՝ տիկին Հայկանուշը տալիս էր ինձ. գիշերները տանը ընդօրինակում էի նոյնութեամբ, ուղիղ փակագծերի մէջ վերցնելով ջնջուած տեղերը եւ հետևեալ առաւօտեան տանում Պետհրատ:

Երեք թէ չորս օրից յետոյ տիկին Հայկանուշն ասաց, որ ցուցակում նշուած ձեռագիրն արդէն յանձնելու են, եւ շատ ցաւում է, որ այլեւս հնարատր չէ Չարենցի ձեռագիրը տուն տանել:

Այդպիսով, ես հնարատրութիւն ունեցայ ընդօրինակելու Ծէքսպիրի հանձարեղ երկի հայերէն թարգմանութեան Չարենցի խմբագրութիւնից երկու արարուած միայն... Ա. Ինճիկեան⁴:

Ուրեմն, Ա. Ինճիկեանի և Հ. Տէր-Գրիգորեանի շնորհիւ փրկուել է Չարենցի խմբագրած «Արքայ Լիրի» երկու արարուած (առանց «Գործող անձերի») և 1956-ին բերուել ԳԱԹ՝ ընդգրկուելու Չարենցի ֆոնդում:

⁴ ԳԱԹ, Չարենցի ֆոնդ, 139 ա: «Բանբեր պետական արխիվների», 1966, թիւ 3, էջ 194:

Այնուհետեւ Գ. Ազնաւորեանի ջանքերով Թանգարանի թատերական ֆոնդերի տպագիր եւ անտիպ պիեսների հաւաքածոյի մէջ յայտնաբերուեցին Չարենցի խմբագրութեամբ «Արքայ Լիրի» երեք նոյնական մեքենագիր կազմուած ամբողջական օրինակներ (դարձեալ առանց «Գործող անձերի»): Այս առթիւ Գ. Ազնաւորեանը «Բանբեր պետական արխիվների» հանդէտում տպագրեց մի յօդուած՝ «Ծէքսպիրը Չարենցի թարգմանութեամբ», որտեղ անդրադարձել է թէ՛ Ա. Ինճիկեանի արտագրութեանը և թէ՛ յայտնաբերուած մեքենագիր օրինակներին՝ նշելով դրանց բովանդակութեան համապատասխանութիւնը: Ինչպէս իր յօդուածի վերնագրում, այնպէս էլ շարադրանքի մէջ Գ. Ազնաւորեանը բազմիցս Չարենցի խմբագրութիւնը համարել է թարգմանութիւն, թէև վերջում գրել է. «Այն հարցը, թէ Չարենցի ձեռագիրը ստեղծագործական-խմբագրական աշխատանք պէտք է համարել, թէ՞ թարգմանութիւն, թողնում ենք մասնագետների քննութեանը»⁵: Ազնաւորեանն ինքը զուգադրել է Խանկապետի թարգմանութիւնից եւ Չարենցի խմբագրած օրինակից որոշ հատուածներ՝ ցույց տալու համար դրանց միջև եղած տարբերութիւնը, այն է՝ Չարենցի կատարած փոփոխութիւնները, որոնց շնորհիւ «ստացուել է փաստօրէն մի նոր թարգմանութիւն, վայել Չարենցի գրչին ու անուանը»: Չարենցի կատարած փոփոխութիւններն, անշուշտ, բաւական շատ են, բայց այդքանն էլ իրատեքն չի տալիս նրա աշխատանքն անվերապահ թարգմանութիւն կոչել. այն ւսելի շուտ *ստեղծագործական խմբագրութիւն* է:

Փորձելով պատասխանել այն հարցին, թէ Չարենցը երբ է կատարել այդ աշխատանքը, Գ. Ազնաւորեանը ենթադրել է, որ այն սկսուել է «1935 թ. և վերջացել 1936 թ.», երբ դեռևս իր պաշտօնում էր Պետհրատի այն ժամանակուայ դիրեկտոր Էդուարդ Չոփուրեանը, որին ներկայացուել էր թարգմանութիւնը ինքնագիր վիճակում»: Գ. Ազնաւորեանը, փաստօրէն ծանօթ չի եղել Ռ. Չարեանի այդ ժամանակ արդէն տպագրուած յուշերին, որոնց համաձայն «Արքայ Լիրի» խմբագրութիւնը Չարենցը սկսել է 1934-ին: Մեր կարծիքով այդ թուականին էլ (կամ ամենաուշը 1935-ի սկզբին) աւարտուել է խմբագրական աշխատանքը՝ նկատի ունենալով Չարենցի արագ աշխատանքը...

⁵ «Բանբեր պետական արխիվների», 1966, թիւ 3, էջ 197: Գոհար Ազնաւորեանից լաջորդ մէջբերումները նոյնպէս կատարուած են այս աղբիւրից:

Ազնաւորեանն իր կատարած համեմատութիւնների միջոցով պարզել է, որ Չարենցը ձեռքի տակ է ունեցել Յովհ. Խան-Մասեհեանի թարգմանութիւնը եւ օգտուելով «նրա աշխատանքից՝ հիմնականում արձակ հատուածները թողել է նոյնը, առանձին անբաշղբառերը փոխարինելով անելի յարմար բառերի, իսկ ստեղծագործական աշխատանքը մեծ մասամբ կենտրոնացրել է չափածոյ հատուածների վրայ, որոնց տարբերութիւնն ակնբախ է»:

Գ. Ազնաւորեանը փորձել է պարզաբանել նաև, թէ յիշեալ մեքենագիր օրինակները ե՞րբ եւ ո՞ւմ կողմից են յանձնուել Թանգարանի թատերական ֆոնդերին: Սակայն նրա որոնումները արդիւնք չեն տուել, եւ նա միայն ենթադրել է, որ Չարենցի խմբագրած օրինակի ձեռագիրը «գտնուել է ինչ-որ անհատի մօտ, եւ նա, երկիւղ կրելով ձեռագրի անյայտացման վտանգից, մի կերպ մեքենագրել է այն եւ յանձնել ինչ-որ համապատասխան հիմնարկի, նկատի ունենալով նրա կարեւորութիւնը»: Այդ «համապատասխան հիմնարկից» էլ Ս. Մելիքսեօեանի տնօրինութեան օրոք այդ մեքենագիր օրինակները յայտնուել են Գրականութեան եւ արուեստի թանգարանում, եւ այժմ դրանցից մէկն ընդգրկուել է Չարենցի ֆոնդում (139 ք):

Չարենցի, որպէս «ժողովրդի թշնամու», ձեռագիրը Պետհրատից բռնագրաւուել է եւ ամենայն հաւանականութեամբ ոչնչացուել... Եւ մեզ անյայտ մէկի, Ա. Ինճիկեանի նման մէկ այլ չարենցաւերի ձեռքով մեքենագրուելով՝ փաստօրէն այդ աշխատանքը փրկուել է անդարձ կորստից: Ռ. Չարեանի յուշերից եւ Գ. Ազնաւորեանի յօդուածից մէջբերումներ կատարելով՝ արդէն տեսանք, թէ ինչ կարգի աշխատանք է կատարել Չարենցը. նա ըստ էութեան նոր կեանք է տուել «Արքայ Լիքի» մասեհեանական թարգմանութեանը՝ այն դարձնելով շատ անելի հնչելոյ ու բանաստեղծական, ներարկելով իր անհատական շունչն ու ոգին:

Ռ. Չարեանն իր յուշերում, ըստ երեւոյթին իր կատարած գրաւումներից, բերել է Չարենցի մշակած օրինակներից մի հատուած, որը ողբերգութեան հինգերորդ արարուածի երրորդ տեսարանից է: Բերենք այդ խմբագրուած հատուածը՝ զուգադրելով այն Յովհաննէս Խան-Մասեհեանի՝ համապատասխան հատուածի թարգմանութեանը:

ՉԱՐԵՆՑ

ԽԱՆ-ՄԱՍԵՀԵԱՆ

<i>Երբ դու ինձանից օրհնութիւն խնդրես,</i>	<i>Երբ դու ինձանից օրհնութիւն խնդրես,</i>
<i>Ձեռքս քո առջեւ՝ ինքս քեզանից</i>	<i>Կը չորքս քո առջեւ, ներում կը հայցեմ,</i>
<i>Կերում կհայցեմ. այսպէս մենք կապրենք,</i>	<i>Այսպէս մենք կ'ապրենք, կ'աղօթենք,</i>
<i>Կաղորենք, կերգենք եւ հին հէքեաթենք</i>	<i>կ'երգենք</i>
<i>Կպատմենք իրար եւ կծծաղենք</i>	<i>Եւ հին հէքիաթենք կը պատմենք</i>
	<i>միմեանց</i>
<i>Այն թիթեռների վրայ ոսկեթել,</i>	<i>Եւ կը ծծաղենք այն ոսկեթելիկ</i>
<i>Որ որպէս խղճուկ թշուառականներ</i>	<i>Թիթեռների վրայ. ականջ կը դնենք,</i>
<i>Խօսում են ճղճիմ գործերի մասին,</i>	<i>Թէ ինչպէս խեղճուկ թշուառականներ</i>
<i>Լորերի մասին այն պալատական.</i>	<i>Խօսում են պալատի լուրերի վերայ.</i>
<i>Մենք էլ նրանցից կիմանանք այդ սին</i>	<i>– Մենք ինքներս էլ նրանց հետ</i>
<i>Գործերի մասին՝ թէ ով է ընկել.</i>	<i>կը խօսենք,</i>
	<i>Թէ ո'վ է շահում, ո'վ է կորցընում,</i>
<i>Ով է բարձրացել կամ հարստացել,</i>	<i>Ո'վ է բարձրանում. կամ ո'վ է ընկնում.</i>
<i>Ում գործերն են վատ եւ ո'ւմ՝ յաջողակ,</i>	<i>Եւ կը բացատրենք իրերի գաղտնիքն</i>
<i>Եւ այդ գործերի էութիւնը չոկ</i>	<i>Որպէս թէ Աստուծոյ լրտեսներն էինք.</i>
<i>Գիտելով՝ մենք մեզ կբացատրենք</i>	<i>Այսպէս մի բանտի պարիսպների մէջ</i>
<i>Իրերի գաղտնիքն, ինչպէս Աստուծոյ</i>	<i>կը մաշենք մեծերի խմբեր եւ դասեր,</i>
<i>Երկու ընտրեալներ կամ առաքեալներ...</i>	<i>Որոնք լուսնի հետ կ'ելնեն</i>
<i>Եւ այսպէս, բանտի պարիսպների մէջ</i>	<i>եւ կ'իջնեն...⁶</i>
<i>Կմաշենք բազում մեծամեծների</i>	
<i>Խմբեր ու դասեր, որոնք լուսնի հետ</i>	
<i>Կկնեն ու կիջնեն, կելնեն ու կիջնեն...</i>	

Չարենցի խմբագրած տարբերակն, ինչպէս տեսնում ենք, անհամեմատ անելի գեղեցիկ է, սակայն տողերի քանակով անելի շատ է ստացուել⁷: Երբ Ռ. Չարեանն այդ մասին ասել է նրան, բանաստեղծը պնտապխանել է. «Բայց դա ի՞նչ կարեւոր է, հաշուապահութիւն հո չէ: Էականը ոգին է: Եթէ դա կայ՝ լաւ է»:

⁶ Շեքսպիր, Արքայ Լիք, թարգմ. անգլիերէնից Յովհ. Խան-Մասեհեան, Թիֆլիս, 1898, էջ 163:

⁷ Ուշագրաւ է, որ Խաչիկ Դաշտենցի թարգմանութեան մէջ նշուած հատուածը Մասեհեանի թարգմանութեան համեմատ անելի քիչ տողեր է ընդգրկում (տես Վիլյամ Շեքսպիր, Ընտիր երկեր, հտ. 1, Երեւան, 1964, էջ 606–607):

Արհայ Ջիր

Խղրեքցութիւն հիւց արարումով



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԼԻՐ, թագաւոր Բրիտանիայի
 ԹԱԳԱԻՈՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ
 ԴՈՒՔՍ ԲՈՒՐԳՈՆԴԻԱՅԻ
 ԴՈՒՔՍ ԿՈՐՆՎԱԼԻ
 ԴՈՒՔՍ ԱԼԲԱՆԻԻ
 ԿՈՄՍ ՔԷՆՏԻ
 ԿՈՄՍ ԳԼՈՍԷՐԻ
 ԷԴԳԱՐ, Գլխաւորի որդին
 ԷԴՄՈՆԴ, Գլխաւորի ապօրինի զաւակը
 ԽԵՂԿԱՏԱԿ
 ԿՈՒՐԱՆ, մի պալատական
 ՄԻ ԾԵՐՈՒՆԻ, Գլխաւորի հպատակ
 ՄԻ ԲԺԻԾԿ
 ՕՍՎԱԼԴ, Գոներիլի տան վերակացու
 ՄԻ ՍՊԱՅ, Էդմոնդի հրամանի տակ
 ՄԻ ԱՍՊԵՏ, Կորդելիայի ծառայութեան մէջ
 ՄԻ ՄՈՒՆԵՏԻԿ
 ԿՈՐՆՎԱԼԻ ԾԱՌԱՆԵՐ
 ԳՈՆԵՐԻԼ }
 ՌԵԳԱՆ } Լիրի աղջիկները
 ԿՈՐԴԵԼԻԱ }

Լիրի սուպետները, սպաներ, սուրհանդակներ, զինուորներ եւ սպասաւորներ

Տեսարանն է Բրիտանիայում:



ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Լիր արքայի պալատը
Մտնում են Քէնտը, Գլխաւորը եւ Էդմոնդը:

ՔԷՆՏ

Ես կարծում էի թագաւորը Ալբանիի դուքսին աւելի է սիրում, քան Կորնվալին:

ԳԼՈՍԷՐ

Մեզ էլ միշտ այդպէս էր թում, բայց այժմ, երբ նա բաժանում է իր թագաւորութիւնը, ամենեւին չի երեւում, թէ դուքսերից որին է աւելի գնահատում, որովհետեւ բաժիններն այնքան հաւասար կ'ստանան, որ բժայկնորութիւնն անգամ չի կարող գերադասել մի բաժինը միւսից:

ՔԷՆՏ

Արդեօք սա ձեր որդին չէ՞, միլո՛րդ:

ԳԼՈՍԷՐ

Այո՛ պարո՛ն, նրան ես եմ մեծացրել: Ես այնքան յաճախ եմ կարմրել նրան իմ որդին ճանաչելու համար, որ հիմա երեսու պնդացել է:

ՔԷՆՏ

Ես ձեզ չեմ հասկանում:



ԳԼՈՍՏԷՐ

Սակայն այս պատահու մայրը ինձ լաւ էր հասկանում, այն-
քան լաւ, որ նրա փորը կլորեց, եւ նա ունեցաւ մի զաւակ՝ օրօ-
րոցում, նախքան կունենար մի ամուսին՝ իր անկողնում: Հաս-
կացա՞ր յանցանքը:

ՔԷՆՏ

Ես չէի ուզենայ, որ այդ յանցանքը կատարուած չլինէր.
նրա արգասիքն այնքա՛ն գեղեցիկ է:

ԳԼՈՍՏԷՐ

Բայց, տէ՛ր իմ, ես ունեմ մի օրինաւոր զաւակ՝ մի քանի
տարով աւելի մեծ, քան սա, սակայն նա աւելի սիրելի չէ, թէեւ
այս անպիտանը մի քիչ աներեսութեամբ աշխարհ եկաւ,
նախքան իրեն կկանչէին: Բայց մայրը գեղեցիկ էր. եւ մենք
այնքան էինք զուարճանում սրան արտադրելիս, որ այժմ
պարտաւոր եմ ճանաչել այս անպատկառի ձագին: Ծանա-
չո՞ւմ ես այս ազնիւ պարոնին, Էդմո՛նդ:

ԷԴՄՈՆԴ

Ո՛չ, տէ՛ր իմ:

ԳԼՈՍՏԷՐ

Քէնտի կոմսն է: Այսուհետեւ լա՛ւ հիշի՛ր նրան, որպէս իմ
յարգելի բարեկամին:

ԷԴՄՈՆԴ

Ես միշտ պատրաստ եմ ծառայելու բարոնին, լորդին:

ՔԷՆՏ

Դուք ինձ դուր էք գալիս, եւ յոյս ունեմ, որ ձեզ աւելի մօտի-
կից կծանօթանամ:

ԷԴՄՈՆԴ

Կաշխատեմ արժանանալ ձեր ուշադրութեանը:

ԳԼՈՍՏԷՐ

Ինը տարի է, որ նա չի եղել հայրենիքում եւ շուտով կրկին
վախու է: Արքան գալիս է:

Փողի ձայներ. մտնում են Լիբը, Կորնվալը, Ալբանին, Գոներիլը,
Թեզանը, Կորդելիան:

ԼԻԲ

Գլո՛ստեր, ընկերացի՛ր Ֆրանսիայի թագաւորին եւ Բուր-
գոնդի դուքսին:

ԳԼՈՍՏԷՐ

Ես պատրաստ եմ, տէ՛ր:

Գլոստերը գնում է:

ԼԻԲ

Իսկ մինչ այդ՝ հիմա մենք պէտք է յայտնենք
Աւելի գաղտնի մեր նպատակը:
Տուէ՛ք քարտէզը: Թող յայտնի լինի,
Որ բաժանել ենք մեր պետութիւնը
Երեք մասերի եւ հաստատ վճուել
Թօթափել ամէն հոգս ու տքնութիւն
Մեր ծեր ուսերից եւ յանձնել դրանք
Մեզանից կայտաւ ուժերի, իսկ մենք
Այդ մեծ հոգսերից թեթեւանալով՝
Կընթանանք դէպ մահ: Մեր որդի Կորնվա՛լ,
Եւ դու սիրելի որդի Ալբա՛նի,
Որոշել ենք մենք յայտնել նախապէս
Մեր մեծ դուստրերի օժիտն ամենայն,
Որ ապագայում որեւէ վէճի
Առիթ չմնայ: Արքան Ֆրանսիայի
Եւ բուրգոնիացին՝ երկու մրցակից
Մեր փոքր դստեր սիրո պայքարում,
Արդէն վաղուց է, որ սպասում են
Սիրային յոյսով մեր արքունիքում:

Եւ արդ՝ պատասխան պէտք է տալ նրանց:
Ասացէ՛ք, սակայն, դստերք սիրասուն
(Քանզի մենք շուտով թօթափելու ենք
Թէ՛ իշխանութիւն, թէ՛ հոգս պետական
Եւ թէ՛ պետութեան տքնութիւն անհինջ),
Ո՞րը ձեզանից, թոյլ տուէք ասել,
Ունի դէպի մեզ ատելի մեծ սէր,
Որ մենք էլ սփռենք ատելի բարիք...
Քանզի արծանիքն իրաւունք ունի
Իր առանձնակի վարձը պահանջել.
Իհարկէ, բացի այն գորովանքից,
Որ բնութիւնն է պահանջում ինքնին:
Առաջ, Գոնէրի՛լ, իբրեւ անդրանիկ,
Առաջ դո՛ւ խօսիր:

ԳՈՆԵՐԻԼ

Ես սիրում եմ ձեզ,
Տէ՛ր իմ, առաւել, քան բառերը սին
Կարող են յայտնել, եւ դուք ինձ համար
Թանկ էք առաւել, քան լոյսն աչքերի,
Քան ազատութիւն, քան ամենայն ինչ,
Որ համարում է հազուագիտ եւ ճոխ:
Ես սիրում եմ ձեզ, որքան որ կեանքը՝
Լի երջանկութեամբ, փառքով ու շուքով,
Լի գեղեցկութեամբ ու առողջութեամբ:
Ես սիրում եմ ձեզ, որքան երբեւէ
Սիրուել է մի հայր, մի զաւակ սիրել,
Մի սէր, որի մօտ տկար է շունչը,
Եւ խօսքը՝ անգօր. մի խօսքով, տէ՛ր իմ,
Ես սիրում եմ ձեզ առաւել, քան մի
Չափելի սահման:

ԿՈՐԴԵԼԻԱ

(Առանձին).

Էլ ի՞նչ կարող է
Կորդելիան ասել. սիրել եւ լռել:

ԼԻՐ

Այս սահմաններում՝ այստեղից այստեղ,
Լի անտառներով՝ խիտ եւ հովասուն,
Բերրի դաշտերով, առատ գետերով
Եւ անծայրածիր մարգագետինով
Քեզ եմ սահմանում ես արդ տիրուհի:
Թող Ալբանիի եւ քո սերնդին
Պատկանեն դրանք մինչեւ յափտեան:
Ի՞նչ է ասում արդ իմ դուստրը երկրորդ՝
Կորնվալի կին քնքուշ Ռեզա՛նս:

ՌԵԳԱՆ

Ես ստեղծուած եմ միեւնոյն միտքից,
Ինչպէս եւ քոյրս, միեւնոյն ենք մենք.
Եւ գտնում եմ ես իմ անկեղծ սրտում,
Ամբողջ այն սէրը, որ յայտնեց նա ձեզ.
Իսկ մի յաւելում ես պիտի անեմ.
Ես թշնամի եմ ինձ յայտարարում
Քոյր երկրային նուրբ վայելքներիս,
Եւ գտնում եմ իմ երջանկութիւնը
Դէպի ձեզ տածած սիրոյ մէջ միայն:

ԿՈՐԴԵԼԻԱ

Վա՛յ քեզ, ուրեմն. խղճո՛ւկ Կորդելիա,
Բայց ո՛չ, ո՛չ խղճուկ, քանզի վստահ եմ,
Որ սէրս մեծ է, քան լեզուս տկար:

ԼԻՐ

Քեզ եւ սերնդիդ իբր ժառանգութիւն
Թող մեր գեղեցիկ թագաւորութեան
Այս երրորդ մասը մնայ յափտեան,
Ո՛չ տարածութեամբ, կամ գեղեցկութեամբ,
Ո՛չ էլ արժէքով պակաս չէ սա քո
Քոյր Գոնէրիլին վիճակուած մասից:
Այժմ դո՛ւ խօսիր, սիրելի դստրի՛կ,
Որ վերջինն ես մեր, բայց ոչ չնչինը.

Դու, որի քնքուշ սիրո պատճառով
Ֆրանսիայի որթն ու Բուրգոնի կաթը
Մրցում են հիմա: Ի՞նչ պիտի ասես,
Որ արժանանաս մի երրորդ բաժնի,
Աւելի շքեղ, քան քոյրերինդ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ոչինչ, տէ՛ր:

ԼԻՐ

Ոչի՞նչ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Այո, տէ՛ր, ոչինչ:

ԼԻՐ

Ոչնչից միայն ոչինչ դուրս կգայ:
Խօսի՛ր դու սակայն:

ԿՈՐԴԵԼԻԱ

Որքա՛ն դժբախտ եմ,
Որ չեմ կարենում բարձրացնել սիրտս
Մի՛նչեւ շուրթերս: Ես քեզ սիրում եմ,
Ինչպէս իմ պարտքն է պահանջում, արքա՛յ,
Օ՛, ոչ աւելի եւ ոչ էլ պակաս:

ԼԻՐ

Ի՞նչ է, Կորդելիա, ուղղի՛ր խօսքերդ,
Թէ չես կամենում՝ բախտդ կործանել:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛վ հայր իմ բարի, դուք ծնել էք ինձ,
Կրթել եւ սիրել: Դրա փոխարէն
Հատուցանում եմ ինչպէս որ հարկն է,
Սիրում եմ եւ ձեզ, յարգում ու լսում:
Ինչո՞ւ իմ քոյրերն ամուսին ունեն,

Եթէ իսկապէս ձեզ եմ լուր սիրում:
Եթէ պատահմամբ ես ամուսնանամ,
Նա, ով ստացաւ իմ առհասարակեան,
Կտանի իր հետ ճաւի իմ սէրը,
Պարտականութեան, խնամքի կէտը:
Եթէ սիրէի եւ հօրս միայն,
Հա՛յր, չէի երբէք ես ամուսնանայ
Քոյրերիս նման:

ԼԻՐ

Սի՞րտդ էլ է միթէ
Խօսքերիդ նման:

ԿՈՐԴԵԼԻԱ

Այո՛, ազնիւ տէ՛ր:

ԼԻՐ

Այսքան դեռ փոքրիկ եւ մանկահասակ
Եւ այսքան անսէ՞ր:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛չ. մանկահասակ,
Տէր իմ, բայց՝ անկեղծ:

ԼԻՐ

Թող այդպէս լինի:
Անկեղծութիւնդ լինի քեզ օժիտ:
Թող վկայ լինի լուրը արեւի,
Հեկատի խորհուրդն ու գիշերը մութ,
Մոլորակների պտոյտը, որ մեզ
Կեանք է պարգևում եւ տարածում մահ,
Երդում եմ, ահա, որ այսօր: անից
Զրկում եմ եւ քեզ ամէն հայրական
Խնամքից, սիրուց եւ ազգակցական
Ամենայն կապից, եւ այս վայրկեանից
Օտար ես դու ինձ: Վայրենի սկիւթը

Եւ զաւակներին լափող մարդակերն
Աւելի արտիս կլինեն մօտիկ,
Կգտնեն իմ մէջ զուր, կարեկցութիւն,
Քան դու, իմ նախկին դո՛ւստր անզգայ:

ՔԷՆՏ

Մեր արքայ:

ԼԻՐ

Լոհ՛ր, մի՛ մտնիր դու, ՔԷ՛նտ,

Վիշապի եւ իր կատաղութեան մէջ.
Ես սիրում էի նրան ջերմագին
Եւ յոյս ունէի գտնել հանգիստս
Նրա կաթոգին խնամքների մէջ:
(Կորդելիային).
Հեռո՛ւ այստեղից, աչքիս շերեւա՛ւ,
Մահից աւելի ճիշտ է, որ այժմ
Ես ետ եմ մղում արտիցս հայրական
Նրան առընդմիջտ: Կանչեցէ՛ք իսկոյն
Այստեղ ֆրանսիացուն, բերեցէ՛ք այստեղ
Բուրգոնդի դուքսին: Կորնվա՛լ, Ալբանի՛,
Իմ երկու դասեր օժիտների հետ
Վերցրէ՛ք նաեւ դուք մասը երրորդ:
Թող նրա համար հպարտութիւնը,
Որ նա կոչում է պարզախօսութիւն,
Դառնայ ամուսին ե՛ր փա՛ռք, ե՛ր օժիտ:
Ես ձեզ եմ յանձնում իշխանութիւնս,
Առաջնութիւնը նաեւ տիտղոսիս
Եւ բոլոր այն մեծ իրաւունքները,
Որ յատուկ է մեր թագաւորութեան:
Իսկ մենք թողնելով մի հարիւր ասպետ,
Որոնց ապրուստը դուք պիտի հոգաք,
Հերթով կմնանք ամէն մէկիդ մօտ:
Մենք մեզ պահում ենք միայն արքայի
Վսեմ անունը եւ տիտղոսները,
Իսկ իշխանութիւն, եկամտս, օրէնք, ✓

2 Song

Սիրելի որդի՛ք, ձերն եմ այժմեանից:
Ի Ռաստատութիւն մեր այս որոշման՝
Առէ՛ք այս թագը եւ բաժանեցէ՛ք
Երկուսիդ միջեւ:

ՔԷՆՏ

Օ՛, վեհափառ Լիւր,

Ձեզ յարգել եմ միշտ՝ իբրեւ արքայիս,
Սիրել իբրեւ հայր եւ հնազանդուել,
Իբրեւ իմ տիրոջ, աղօթքներիս մէջ
Միշտ՝ ձեզ եմ դիտել, իբրեւ պաշտպանիս:

ԼԻՐ

Մի՛ կանգնիր լարուած աղեղի առաջ՝
Խուսափի՛ր նետից:

ՔԷՆՏ

Ո՛չ, թող սլանայ,

Թէկուզ սլաքը արտիս մէջ մտնի:
Քձնող չի եղել ՔԷ՛նտը երբեւէ
Եւ չի լինի արդ, երբ արգոյ արքան
Քայլեր է անում խելագարային:
Արդ, ի՞նչ ես անում, ծերո՛ւկ, մի՞թէ դու
Կարծում ես, թէ ուր շողոքորթն է իր
Օլիւքը ծոռւմ, կարո՞ղ է լռել
Քո ազնիւ ծառան: Ազնութիւնը
Պարտաւոր է միշտ լինել պարզախօս,
Անմտութիւն է երբ անում արքան,
ՔԷ՛նտը չի լռի, երբ արքան՝ Լիւրը,
Նուաստանում է, ե՛տ առ վճիռդ.
Քանի դեռ ուշ չէ, հեռատեսութեամբ
Փոխի՛ր հրէշաւոր քո հրամանը.
Երդում եմ կեանքով, որ դուստրդ կրտսեր
Քիչ չի սիրում քեզ, քան միաները,
Անսիրտ չեն նոքա, ով չի որոտում
Փքուն խօսքերով:

ԼԻՐ

Լոհ'ր, Քէնտ, եթէ
Սիրում ես կեանքդ:

ՔԷՆՏ

Ես իմ կեանքը միշտ
Պահել եմ քո նենգ ոտխների դէմ
Կռուելու համար եւ չեմ վախենում
Կորցնել ես այն, երբ պահանջում է
Քո՛ փրկութիւնը:

ԼԻՐ

Հեռո՛ւ իմ աչքից:

ՔԷՆՏ

Աչքդ բա՛ց, ո՛վ տէր, եւ շո՛ւրջդ նայիր
Պայծառ հայեացքով...

ԼԻՐ

Երդում եմ, ահա,
Ես Ապոլոնով...

ՔԷՆՏ

Ես էլ եմ ահա
Երդում նրանով, որ զուր ես երդում
Դու աստուածներով...

ԼԻՐ

Ստոր՛ւյ, անհաստ...

Վերցնում է սուրը:

ԱԼԲԱՆԻ ԵՒ ԿՈՐՆՎԱԼ
Խնայեցէ՛ք, տէ՛ր:

ՔԷՆՏ

Ո՛չ, սպանի՛ր ինձ,
Միակ բժշկիդ, եւ վարձը նրա
Տո՛ւր մոլեգնութեան ախտիդ ժանտաժանտ.
Ե՛տ առ նուիրած քո պարգեւները,
Եթէ ո՛չ՝ որքան կարող եմ ես դեռ
Գէթ մի ձայն հանել կոկորդից իմ, միշտ
Կրկնելու եմ, որ սխալ ես անում:

ԼԻՐ

Լոհ'ր խոովարա՛ր, յանուն քո ուխտած
Հպատակութեան՝ ակա՛նջ դիր դու ինձ:
Քանի որ դու արդ ջանքեր թափեցիր
Բեկանել տալ մեր դատավճիռը
(Ինչ որ մենք երբէք չենք կարող ներել),
Քանի որ անչափ քո գոռոզութեամբ
Միջամտեցիր մեր իշխանութեան
Եւ մեր արձակած վճիռի միջեւ
(Ինչ չի հանդուրժի մեր տիտղոսը, ո՛չ),
Ճաշակի՛ր, ապա, մեր զօրութիւնը,
Վարձդ ստացի՛ր, շնորհում ենք քեզ
Մենք հինգ օր միայն, որ այդ հինգ օրում
Նախապատրաստուես արքորի համար,
Իսկ վեցերորդին ընդմիջտ ազատես
Ներկայութիւնդ մեր պետութիւնից,
Եթէ տաս օր անց լէշդ վտարուած
Գտնուի յանկարծ մեր պետութեան մէջ,
Այդ վայրկեանը հէնց մահ է քեզ համար,
Հեռացի՛ր հիմա. երկինքը վկայ՝
Անդարձ է խօսքս:

ՔԷՆՏ

Մնա՛ս բարով, արքա՛յ,
Երբ կամենում ես այդպէս ընթանալ,
Եւ այսօրուանից ազատութիւնը
Դուրս է այստեղից, արքորն է այստեղ:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱԻՈՐ

Ջարմանալի է. նա, որ մինչև այս,
Արարածն էր ձեր այնքա՛ն սիրելի,
Միակ առարկան ձեր գովեստների
Եւ ձեր ծերութեան միակ սփոփանքն,
Ինչպիսի՞ յանցանք արդեօք կատարեց
Մի ակնթարթում, որ զրկուեց յաւետ
Այդքան անսահման ձեր շնորհներից:
Անշուշտ, այդ մեղքը պետք է որ լինի
Խիստ անբնական կամ հրեշտոր,
Եւ կամ ձեր նախկին սերը դէպի նա
Եղել է անհիմն... բայց նրա կողմից
Այդպիսի մի բան թույլ տալու համար
Հարկաւոր է մի այնպիսի հաւատ,
Որ առանց վերին հրաշագործութեան
Դատողութիւնը չի կարող ինձ տալ:

ԿՈՐԳԵԼԻԱ,

Ես աղերսում եմ, ձե՛րդ մեծութիւն,
Մի վերջին շնորհ, եթէ իմ մեղքը
Այն է, որ չունեմ ես սահուն արուեստ՝
Մի բան մտածել, բայց այլ բան ասել
(Քանզի իմ բարի կամքը ես միայն
Կատարում եմ միշտ եւ ապա խօսում),
Խնդրում եմ ապա, որ յայտարարեք,
Որ ոչ մի յանցանք կամ սպանութիւն,
Եւ ոչ գարշելի կամ լկտի մի գործ,
Կամ քայլ անպատիւ չի եղել պատճառ
Ինձ՝ ձեր շնորհից զրկելու համար:
Գիտեմ, իմ մեղքը այն է, որ չունեմ
Ես աչք աղերսող կամ քծնող լեզու,
Եւ այդ պատճառով զրկում եմ ահա
Սիրուց հայրական, բայց չեմ ափսոսում,
Որ չունեմ դրանք:

ԼԻՐ

Լաւ էր առաւել,
Դու չլինէիր ծնուած, քան այսքան
Ատել տայիր քեզ:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱԻՈՐ

Հէնց ա՞յդ է միայն:

Բնական անմեղ ամօթխածութիւն,
Որ խանգարում է յաճախ ասելու
Այն, որ սրտագին ուզում ես ասել.
Ի՞նչ կասէք սրան, իշխա՛ն Բուրգունդի,
Եթէ ձեր սերը հեռու է ուրիշ
Նկատումներից եւ հաշիւներից,
Վերցրէ՛ք նրան. իր օժիտն ինքն է:

ԲՈՒՐԳՈՆԴ

Ո՛վ, վեհափառ Լիր, տուէ՛ք ինձ միայն
Այն, որ նախապէս խոստացել էք դուք,
Եւ նրա ձեռքից կրօնեմ իսկոյն
Եւ Բուրգունդիայի դքսուհի կանեմ:

ԼԻՐ

Ո՛չ, իմ երդումը անդրդուելի է:

ԲՈՒՐԳՈՆԴ

(Կորդելիայիւն).

Ափսո՛ս, որ ահա կորցնելով մի հայր՝
Կորցնում էք դուք եւ մի ամուսին:

ԿՈՐԳԵԼԻԱ,

Տէր ընդ ձեզ, ո՛վ դուքս, եթէ ձեր սերը
Հարստանալու հաշիւ է միայն,
Ես էլ ձեր կինը չեմ կարող լինել:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱԻՈՐ

Չքնա՛ղ Կորդելիա, դու հարուստ ես շատ,

Թէպէտ ե՛ր լքուած, ե՛ր աղքատ, բայց դու
Զնաշխարհիկ ես, թէպէտ անարգուած,
Սակայն պաշտելի. ես տէր եմ կանգնում
Քեզ եւ քո բոլոր առաքինութեան:
Թող թոյլ տրուի ինձ ընտրել ինձ համար
Արհամարհուածին, օ՛հ, դուք, աստուածներ,
Զարմանալի է, որ նրանց անսիրտ
Ե՛ր ասող, ե՛ր բիրտ անարգանքներից
Իմ սէրը վառուս եւ բորբոքում է:
(*Լիբիմ*).

Ո՛վ արքայ, քո այս դուստրը անօժիտ
Թագուհի է արդ թէ՛ ինձ, թէ՛ չքնաղ
Ֆրանսիայի համար: Բուրգոնդի բոլոր
Դուքսերը ջլոտ անգօր են այլեւս
Գնել ինձանից չզնահատուած
Այս անգին կոյսին:
(*Կորդելիային*).

Կորդելիա, սրանց
Հրածե՛շտ տուր արդ, թէպէտ դաժան են:
Զրկուելով հիմա այս դաժան տեղից,
Դու գտնելու ես առաել լաւ տեղ:

ԼԻՐ

Թող քոնը լինի նա այսուհետեւ,
Արքայ՝ Ֆրանսիայի, մենք չունենք այլեւս
Այդպիսի աղջիկ, եւ նրա դէմքը
Էլ չենք տեսնելու: Գնա՛ ուրեմն՝
Առանց մեր սիրոյ, առանց օրհնութեան:
Ե՛կ, Բուրգոնդի դուքս:

Փողեր: Լիբը եւ Բուրգոնդի դուքսը դուքս են գնում:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱԻՈՐ

Դէ, հրածե՛շտ տուր քոյրերիդ ես:

ԿՈՐԴԵԼԻԱ

Իմ հօր զոհարանէ՛ր, խոնաւ աչքերով,

Հրածեշտ է ձեզ տալիս Կորդելիան.
Ծանաչում եմ ձեզ, սակայն, իբրեւ քոյր,
Խորշում եմ կոչել իրենց անունով
Արատները ձեր: Սիրեցէ՛ք հօրս,
Յանձնում եմ նրան ձեր խոստումնալից,
Սիրազեղ կրօքին, բայց, աւա՛ղ, եթէ
Ես վայելէի նրա շնորհը,
Աւելի լաւ տեղ կտայի նրան:
Դէ, մնա՛ք բարով:

ՌԵԳԱՆ

Մի՛ սովորեցնի

Դու մեր պարտքը մեզ:

ԳՈՆԵՐԻԼ

Լաւ է, աշխատի՛ր

Հաճելի լինել քո այդ ամուսնուն,
Որ քեզ ընդունեց ողորմաժաբար:
Դու չկամեցար լինել հնազանդ
Եւ արժանի ես, որ քեզ զլացուի
Այն, որ զլացար դու քո հօրն անգամ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Լաւ... Ժամանակը ի յայտ կբերի,
Ինչ որ խորամանկ սիրտն է թաքցնում
Իր ծայքերի տակ, ով ծածկում է իր
Մոլութիւնները, ամօթը նրան
Ծաղր ու ծանակ է վերջում դարձնում:
Յաջողութի՛ւն ձեզ:

Դուքս է գնում Ֆրանսիայի թագաւորի հետ:

ԳՈՆԵՐԻԼ

Քո՛յր, շատ բան ունեմ քեզ ասելու մի բանի մասին, որ
շատ սերտ կապ ունի մեզ՝ երկուսիս հետ: Կարծեմ մեր հայրն
այս գիշեր հեռանալու է այստեղից:

(Կորդելիային)։

Իսկ դու, մանկամա՛րդ, աստուածները թող
Քեզ պատսպարեն, դու ճիշտ խորհեցիր
Եւ ճիշտ խօսեցիր։

(Ռեզանին եւ Գոններիլին)։

Թող գործերը ձեր

Լինեն համեմատ ձեր մեծ ճատերին,
Բարի արդիւնքներ թող ծնունն ձեր այդ
Սիրոյ խօսքերից։

(Իշխաններին)։

Այսպէս իշխաններ,
Քէնտը բոլորիդ հրաժեշտ է տալիս,
Որ էլ նա գնայ, նոյնն է մնալու։

Ներս են մտնում Գլոստերը, Ֆրանսիայի թագաւորը, Բուրգոնդի
դուքսը եւ սպասաւորներ։

ԳԼՈՍՏԷՐ

Իմ ազնիւ արքա՛յ, ահա Ֆրանսիայի
Եւ Բուրգոնդիայի իշխաններն եկան։

ԼԻՐ

Իշխա՛ն Բուրգոնդի,
Նախ ձեզ ենք դիմում, որ մրցակից էք
Այս արքայի հետ՝ մեր դասեր համար.
Դուք ի՞նչ փոքրագոյն օժիտ էք ուզում
Իմ դասեր համար, առանց որի դուք
Կդադարէիք ձեր սիրոյ հայցը։

ԲՈՒՐԳՈՆՆԴ

Ո՛չ աւելի, տէ՛ր, եւ ո՛չ էլ պակաս,
Քան այն, որ ինքներդ առաջարկեցիք։

ԼԻՐ

Գերազնիւ Բուրգո՛նդ, քանի դեռ նա մեր
Սրտին սիրելի եւ հարազատ էր,

Այդ էր նրա գինն, օժիտը նրա,
Բայց արդ ընկել է նրա արժէքը.
Տէ՛ր իմ, ահա նա կանգնած է ձեր դէմ,
Եթէ այդ փոքրիկ, գեղեցիկ մարմինն,
Իմ ատելութեամբ միայն օժտուած,
Եւ ոչինչ աւել, հաճելի է ձեզ,
Առէ՛ք, ձերն է այն։

ԲՈՒՐԳՈՆՆԴ

Ի՞նչ պատասխանեմ։

ԼԻՐ

Ահա նա, տէ՛ր իմ, այն արատներով,
Ինչ որ նա ունի՝ որք, անբարեկամ,
Միայն որդեգիր մեր ատելութեան,
Մեր անէծքներով միայն օժտուած
Եւ մեր երդումով մեզ օտարացած,
Ուզո՞ւմ էք նրան, թէ՞ ետ էք կենում։

ԲՈՒՐԳՈՆՆԴ

Ներող եղէք, տէ՛ր, վեհափառ արքա՛յ,
Այդ պայմաններով ոչ մի ընտրութիւն
Չի կարող լինել։

ԼԻՐ

Թողէ՛ք, ուրեմն,
Քանզի երդում եմ այն ուժով վերին,
Որ ինձ կեանք տուեց՝ եւ ձեզ յայտնեցի
Նրա կայքն ամբողջ։
(Ֆրանսիայի թագաւորին)։

Եւ դուք, մե՛ծ արքայ,

Չէի կամենայ եւ սերն անարգել՝
Կապելով ձեզ իմ ատած դասեր հետ,
Խնդրում եմ, ապա ձեր սերը յղէք
Աւելի վսեմ մի արարածի,
Քան մի թշուառի, որին բնութիւնն
Ինքն է ամաչում՝ իրը համարել։

ՌԵԳԱՆ

Անշուշտ, նա քեզ մօտ է գալու, իսկ միւս ամիս՝ մեզ մօտ:

ԳՈՆԵՐԻԼ

Տեսնում ես, որքան փոփոխական է նրա ծերութիւնը: Մեր տեսածը բաւական է, նա մեր քրոջը միշտ բոլորիցս անլի էր սիրում, բայց ի՛նչ անմիտ դատողութեամբ նրան վտարեց. այդ ակներեւ է ամենակոպիտ կերպով:

ՌԵԳԱՆ

Դա նրա ծերութեան թուլութիւնն է, բայց նա երբէք իր արածը լաւ չի հասկացել:

ԳՈՆԵՐԻԼ

Իր կեանքի ամենալաւ եւ ամենատողջ օրերում նա շատ բարկացկոտ է եղել, ուրեմն մենք նրա ծերութիւնից պէտք է սպասենք ոչ միայն բնածին, խորապէս արմատացած թերութիւններ, այլեւ այն անզուսպ բռնկումները, որ տկար եւ բարկացկոտ ծերութիւնն է բերում իր հետ:

ՌԵԳԱՆ

Մենք նրանից պէտք է սպասենք այնպիսի անակնկալ արարքներ, ինչպէս Քէնտի այսօրուայ արարքը:

ԳՈՆԵՐԻԼ

Դեռ հրածեշտի արարողութիւնները չեն կատարուել նրա եւ Ֆրանսիայի թագաւորի միջեւ, մենք պէտք է համերաշխ լինենք իրար հետ: Եթէ մեր հայրը իր այս տրամադրութեամբ որեւէ իշխանութիւն ունենայ, դատարկ հեզմանք կդառնայ նրա այսօրուայ զիջումն ի նպաստ մեզ:

ՌԵԳԱՆ

Այդ մասին կմտածենք:

ԳՈՆԵՐԻԼ

Երկաթը պէտք է տաք-տաք ծեծել:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Գլոստերի կոմսի ամրոցներից մէկում
Մտնում է Էդմոնդը՝ մի նամակ ձեռքին:

ԷԴՄՈՆԴ

Դո՛ւ ես, բնութի՛ւն, իմ աստուածուհին,
Ես ենթարկում եմ քո օրէնքներին.
Ի՞նչ միտք՝ յանձնուել քիմ սովորութեան
Պատուհասների, անձնատուր լինել
Կենսական անմիտ բժախնդրութեան,
Որ նա զրկէ ինձ իմ իրաւունքից
Լոկ այն պատճառով, որ իմ եղբորից
Տասներկու կամ թէ տասնչորս լուսին
Ետ եմ մնացել. ի՞նչ ապօրինի,
Երբ անդամներս նոյնքան կայտատ եմ,
Հոգիս նոյնքան վեհ, տեսքը՝ բարեձեւ,
Որպէս աշխարհում կարող է լինել
Մի պարկեշտ տիկնոջ իսկական զաւակ:
Ինչո՞ւ եմ այդպէս ինձ զանակոծում,
Անարգում անվերջ՝ անարգ անունով,
Անուանում ստոր: Ինչո՞ւ է ստոր
Նա, որ բնութեան առոյգ գողութեամբ
Լոյս աշխարհ գալով՝ անլի եռանդ
Եւ կենսապարար ուժ է ստանում,
Քան ծնուածները տաղտուկ մահճի մէջ,
Ուր ստեղծում է թանձրամիտների
Մի ամբողջ սերունդ՝ սերուած կէս քնի,
Կէս արթնութեան մէջ... Ուրեմն այսպէս,
Հարագատ Էդգա՛ր, ես պէտք է տիրեմ
Քո կալուածներին: Մեր հօր աիւնից
Ապօրէն Էդմոնդն այնքան մաս ունի,
Որքան եւ զաւակն այն օրինատոր:
Օ՛, ինչ գեղեցիկ բառ՝ «օրինատոր»...
Լա՛ւ, հարագա՛տս, թէ նամակս այս
Լինի ազդեցիկ եւ հնարս՝ յաջող.

Էդմոնդ ստորը կգերագանցե
Օրինատրին... Օ՛, դուք, աստուածներ՛,
Զօրաւի՛գ եղէք ապօրէճներին...

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Քէնտը արքայուհի՛,
Ֆրանսիայի արքան մեկնի՛ բարկութեամբ,
Եւ թագաւորը թողնի ճեռանայ՝
Իշխանութիւնն իր յանձնած ուրիշի
Եւ ինքը դարձած մի թռչակառու...
Եւ այս բոլորը, մի ակնթարթո՞ւմ...
Ի՞նչ լուր կայ, Էդմո՛նդ:

ԷԴՄՈՆԴ

(Իբրեւ թէ նամակը թաքցնելով).

Ոչինչ, տէ՛ր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչո՞ւ ես այդպէս շուտով թաքցնում այդ նամակը:

ԷԴՄՈՆԴ

Ես ոչ մի լուր չեմ իմանում, տէ՛ր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ ի՞նչ թուղթ էր, որ կարդում էիր:

ԷԴՄՈՆԴ

Ոչինչ, տէ՛ր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ոչինչ, ինչո՞ւ ուրեմն այդքան սարսափած դրեցիր
գրպանդ: Ոչինչը կարիք չունի այդպէս շտապով թաքցնուելու:
Տո՛ւր, տեսնեմ, տո՛ւր, եթէ ոչինչ լինի՝ ես կարիք չեմ զգայ
ակնոցի:

ԷԴՄՈՆԴ

Աղաչում եմ, տէ՛ր իմ, ներեցէ՛ք ինձ, սա մի նամակ է, որ
եղբայրս է ինձ գրել, եւ ես դեռ ամբողջը չեմ կարդացել: Բայց
որքան որ կարդացել եմ՝ հարմար չեմ գտնում, որ դուք տես-
նէք:

ԳԼՈՍՏԵՐ

Տո՛ւր ինձ այդ նամակը, պարո՛ւմ:

ԷԴՄՈՆԴ

Տամ էլ՝ վատ է, չտամ էլ՝ բովանդակութիւնը, որքան ես
հասկացայ, վիրատրական է:

ԳԼՈՍՏԵՐ

Տեսնեմ, տեսնեմ:

ԷԴՄՈՆԴ

Իբրեւ արդարացում եղբօրս՝ յոյս ունեմ, որ նա այս նամա-
կը գրել է իմ ազնութիւնը փորձելու համար:

ԳԼՈՍՏԵՐ

(Կարդում է).

«Այնպիսի հասկացողութիւնները, ինչպիսին է ակնածան-
քը դէպի ծերութիւնը, դառնացնում են մեր կեանքի ամենալա-
օրերը եւ զրկում են մեզ մեր բախտից, մինչեւ որ ծերութիւնը
մեզ այլեւս անընդունակ է դարձնում վայելք զգալու նրանից:
Ո՞րքան եւ վնասակար տխմարութիւն է ենթարկուել զառա-
մեայ բռնակալին, որն իշխում է ոչ թէ իր կարողութեամբ, այլ
միայն այն պատճառով, որ մենք հանդուրժում ենք նրան: Ե՛կ
ինձ մօտ, որպէսզի միասին մանրամասն խօսենք: Եթէ մեր
հայրն այնքան քնէր, մինչեւ ես նրան կարթնացնէի, դու
կստանայիր ընդմիջտ նրա կարողութեան կէտը եւ կդառնայիր
քո եղբօր սիրելին:

Էդգար՝:

Ի՞նչ է սա, դաւադրութի՞ւն... «քնէր, մինչեւ ես նրան կարթ-
նացնէի... դու կստանայիր ընդմիջտ նրա կարողութեան

կէսը...» Իմ որդի Էդգարը. նրա ձեռքն այսպիսի բան գրէ՛...
Նրա սիրտը եւ ուղեղը նման բան յղանա՛ն... Ե՞րբ ստացար
այս նամակը, ո՞վ բերեց:

ԷԴՄՈՆԴ

Չեմ բերել, տէ՛ր իմ, հնարքն էլ հէնց այս է: Ես այն գտայ
իմ առանձնասենեակի պատուհանի առջեւ:

ԳԼՈՍՏԷՐ

Մանաչո՞ւմ ես, որ գիրը եղբորդ է:

ԷԴՄՈՆԴ

Եթէ բովանդակութիւնը հաճելի լինէր, ես կարող էի
երդուել, որ նրանն է, բայց քանի որ այսպիսին է, ես կուզէի
մտածել, որ նրանը չէ:

ԳԼՈՍՏԷՐ

Նրանն է:

ԷԴՄՈՆԴ

Նրա ձեռքն է, տէ՛ր իմ, բայց յոյս ունեմ, որ նրա սիրտը
գրածի մէջ չէ:

ԳԼՈՍՏԷՐ

Մինչեւ հիմա այդ մասին երբեւիցէ քեզ հետ խօսք չի՞ բա-
ցել:

ԷԴՄՈՆԴ

Երբէք, տէ՛ր իմ, բայց յաճախ նա պնդել է ինձ մօտ, որ երբ
որդիները չափահաս են դառնում, եւ հայրերն սկսում են գա-
նասել, հայրը պէտք է լինի որդու խնամքի տակ, իսկ որդին
պէտք է կտակավարէ նրա ունեցուածքը:

ԳԼՈՍՏԷՐ

Օ՛, սրիկա՛յ, սրիկա՛յ... հէնց իր այդ միտքն է այս նա-
մակում... գարշելի՛ սրիկայ, հրէշաւոր, ատելի, վայրենի՛ սրի-

կայ... ատելի վատթար, քան գազանային... գարշելի՛ սրի-
կայ... որտե՞ղ է նա...

ԷԴՄՈՆԴ

Լաւ չգիտեմ, տէ՛ր իմ: Եթէ բարեհաճէք ժամանակատրա-
պէս զսպել ձեր գայրոյթը իմ եղբօր դէմ, մինչեւ կարողանաք
ատելի ցայտուն ապացոյց կորզել նրանից՝ իր մտքերի մասին,
դա ատելի ճիշտ ընթացք կլինի: Այնինչ, եթէ բռնանաք նրա
վրայ եւ սխալուէք նրա դիտումներում, դա մեծ հարուած կլի-
նէր ձեր պատուին, եւ դուք կկործանէիք նրա հնազանդու-
թեան հիմը: Ես համարձակում եմ կեանքս գրաւ դնել, որ նա
այս գրել է նրա համար միայն, որ փորձէ իմ սիրոյ չափը դէպի
ձերդ ազնութիւնը եւ ոչ թէ որեւէ չար նպատակով:

ԳԼՈՍՏԷՐ

Կարծո՞ւմ ես:

ԷԴՄՈՆԴ

Եթէ ձերդ ազնութիւնը հարմար գտնի՝ ես ձեզ կթաքցնեմ
մի այնպիսի տեղ, որ դուք ձեր ականջով լսէք մեր խօսակցու-
թիւնն այդ մասին եւ բաւարարուէք: Եւ այդ ոչ ատելի ուշ, քան
այս գիշեր:

ԳԼՈՍՏԷՐ

Նա չի կարող մի այդպիսի հրէշ լինել:

ԷԴՄՈՆԴ

Իհարկէ, չի կարող լինել:

ԳԼՈՍՏԷՐ

Դէպի իր հա՞յրը, որ նրան սիրում է այնքան անհուն եւ
քնքուշ սիրով... Երկի՛նք եւ երկի՛ր... Էդմո՛նդ, գտի՛ր նրան,
թո՛ւյլ տուր թափանցեմ նրա գաղտնիքի մէջ. գործը կազմա-
կերպի՛ր ըստ քո խոհեմութեան. ես պէտք է մի կողմ դնեմ իմ
Ռայրական գութը՝ հարկ եղած վճռականութիւնը ցոյց տալու
Ռամար:

ԷԴՄՈՆԴ

Ես իսկոյն կզնամ, կորոնեմ նրան, տէ՛ր իմ, գործը կկատարեմ ըստ իմ կարողութեան եւ ձեզ կտեղեկացնեմ:

ԳԼՈՍՏԷՐ

Արեւի եւ լուսնի վերջին խաւարումները ոչ մի լաւ բան չեն գուշակում մեզ համար: Թող իմաստունները դատեն, ինչպէս կուզեն, բայց բնութեան օրէնքները խախտում են ամենուրեք, սէրը սառչում է, բարեկամութիւնը՝ թուլանում, եղբայրը եղբօր դէմ է ելնում, քաղաքներում՝ ապստամբութիւններ, գիւղերում՝ պատակտումներ, պալատներում՝ դաւաճանութիւն, հօր եւ որդու՝ միջեւ՝ կասկի խորտակում: Իմ որդին ես այս գուշակութեանց՝ ազդեցութեան տակ է. ահա՛ որդին հօր դէմ, թագաւորը շեղում է բնական ընթացքից, ահա՛ հայրը որդու դէմ: Մեր լաւ օրերն անցել են արդէն. մեքենայութիւններ, խարդախութիւն, մատնութիւն եւ ամէն տեսակի կործանիչ խոռվութիւններ հալածում են մեզ անդադար, մինչեւ մեր գերեզմանը: Գտի՛ր այդ թշուառականին, Էդմո՛նդ, դու բան չես կորցնի, զգուշութեա՛մբ վարուիր... Իսկ այն ազնիւ եւ առաքինի Քէնտը աքսորուած, եւ նրա յանցանքը ազնութիւնն է... զարմանալի՛ է, զարմանալի...

Դուրս է գնում:

ԷԴՄՈՆԴ

Այսպէս է աշխարհի զարմանալի տխմարութիւնը, երբ մեր բախտը խախտում է, եւ այն էլ յաճախ մեր սեփական ընթացքի պատճառով, մենք մեր դժբախտութիւնները սիրում ենք բարդել արեւի, լուսնի եւ աստղերի վրայ. կարծես թէ ճակատագրի ուժով է, որ մենք սրիկաներ ենք, տխմարներ ենք երկնային հրամանով. թշուառականներ, գողեր, դաւաճաններ՝ մոլորակների ազդեցութեամբ, հարբեցողներ, ստախօսներ, շնացողներ՝ լուսնի ազդեցութեամբ մեր էութեան վրայ: Եւ բոլոր յանցանքները, որ գործում ենք, աստուածային որդմամբ ենք գործում: Սքանչելի պատրուակ բոզարած մարդու համար՝ բարդել իր վաւաշոտ հակումները աստղերի

վզին: Իմ հայրը մերձեցաւ իմ մօրը Վիշապի պոչի տակ, եւ իմ ծնունդը տեղի ունեցաւ Մեծ արջի ներքոյ, եւ հետեւանքն այն է, որ ես գոեհիկ եմ եւ լկտի: Ո՛չ, ես ինչ որ եմ՝ հէնց այն էլ կլինէի, եթէ անգամ երկնակամարի ամենակուսական աստղը շողշողած լինէր իմ ապօրինի սերման վրայ... Էդգա՞րը...

Մտնում է Էդգարը:

Ծիշտ ժամանակին է գալիս, ինչպէս հանգոյցի լուծումը հին կատակերգութիւններում: Ես պէտք է խաղամ մելամաղձոտի դեր եւ հառաչեմ, ինչպէս Տոմը Բէդլամում:

(Բարձրաձայն). Օ՛հ, այս խաւարումները գուշակում են մեզ մեծ պատակտումներ... Ֆա, սոլ, լա, մի...

ԷԴԳԱՐ

Ի՞նչ լուր, Էդմո՛նդ, այդ ի՞նչ մտքերի մէջ ես այդպէս խորսուզուել:

ԷԴՄՈՆԴ

Ես մտածում եմ անցեալ օրը կարդացածս մի գուշակութեան մասին, թէ ինչ է լինելու այս խաւարումների հետեւանքը:

ԷԴԳԱՐ

Մի՞թէ դու զբաղում ես դրանով:

ԷԴՄՈՆԴ

Հաստացնում եմ, որ այնտեղ յիշուած գուշակութեան արդիւնքներն սկսել են դժբախտաբար իրականանալ՝ անբնական յարաբերութիւններ հայրերի եւ զանկների միջեւ, մահ, սով, հին բարեկամութիւնների պատակտում, խոռվութիւններ պետութեան մէջ, սպառնալիքներ եւ անէծքներ թագաւորների եւ ազնուականների հասցէին, անտեղի կասկածանքներ, բարեկամների վտարում, զօրքերի խառնաշփոթութիւն, ամուսնական բեկանումներ եւ չգիտեմ էլ ինչ...

Էլ այսքան լաւ երեսաւ, ես քեզանից Էլ չեմ բաժանուի: Ու՞ր է իմ անպիտան խեղկատակը: Գնա՛, իմ խեղկատակին կանչի՛ր այստեղ:

Մտնում է Օսվալդը:

Հէ՛յ, ո՞վ ես, ա՛յ մարդ, որտե՞ղ է աղջիկս:

ՕՍՎԱԼԴ

Ներեցէ՛ք...

Դուրս է գնում:

ԼԻՐ

Ի՞նչ է ասում այդ մարդը, ե՛տ կանչէք այդ տխմարին. ո՞ւր է ծաղրածուն: Հո՞, կարծես ամբողջ աշխարհը քուն է մտել: Ի՞նչ է, ո՞ւր է այդ շունը:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, նա ասում է, որ ձեր դուստրն առողջ չէ:

ԼԻՐ

Ինչո՞ւ այդ թշուառականը չվերադարձաւ, երբ ես նրան կանչեցի:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, նա ինձ ուղղակի պատասխանեց, որ չի ուզում գալ:

ԼԻՐ

Չի՞ ուզում:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, չգիտեմ ինչ է տեղի ունենում: Բայց ինձ թում է, որ ձերդ մեծութեան հետ այժմ այնպէս յարգալից չեմ վարում, ինչպէս առաջ: Թէ՛ հասարակ ծառայողները, թէ՛ դուքսը եւ թէ՛ ձեր դուստրը նոյնպէս քաղաքավարի չեմ, ինչպէս առաջ էիմ:

ԼԻՐ

Հա՞, կարծո՞ւմ ես:

ԱՍՊԵՏ

Աղերսում եմ, տէ՛ր իմ, ներեցէ՛ք ինձ, եթէ սխալում եմ, սակայն ես չեմ կարող լուռ մնալ, երբ տեսնում եմ, որ ձերդ մեծութիւնը արհամարհում է:

ԼԻՐ

Դու ինձ նկատել ես տալիս այն, ինչ ես ինքս Էլ դիտել եմ. վերջերս ես նկատել եմ մի տեսակ անուշադիր վերաբերմունք դէպի ինձ, բայց դա անելի վերագրել եմ իմ սեփական դժուարահանութեան, քան որոշ դիտաւորութեան կամ չար մտքի: Պէտք է անելի ուշադրութեամբ զննել... Բայց ո՞ւր է իմ խեղկատակը. երկու օր է նրան չեմ տեսել:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, մեր կրտսեր տիրուհու Ֆրանսիա մեկնելու օրից խեղկատակը շատ է տխրում:

ԼԻՐ

Մի՛ խօսի՛ր այդ մասին, ես ինքս Էլ եմ տեսնում: Գնա՛ եւ ասա՛ դստերս, որ ուզում եմ խօսել նրա հետ: Դու Էլ գնա՛ եւ խեղկատակիս ասա՛, գայ այստեղ:

Գալիս է Օսվալդը:

Հէ՛յ, դո՛ւ, պարո՛ն, այստե՛ղ ե՛կ, տեսնեմ. ես ո՞վ եմ, ա՛յ մարդ:

ՕՍՎԱԼԴ

Իմ տիրուհու հայրը:

ԼԻՐ

Իմ տիրուհու հա՞յրը, հա՞, տիրոջ սրիկայ ծառայ, շա՛ն որդի, ստրո՛ւկ, շո՛ն:

ՕՍՎԱԼԴ

Ներեցէ՛ք, տէ՛ր իմ, ես ձեր ասածներից ոչ մէկը չեմ:

ԼԻՐ

Դեռ համարձակու՞մ ես հակաճառել ինձ, շո՛ւն:

Խփում է նրան:

ՕՍՎԱԼԴ

Ես թո՛յլ չե՛մ տայ, որ ինձ խփէք, պարո՛ւն:

ՔԷՆՏ

(Մի աքացիով նրան գետին է գլորում)։ Ոչ էլ գետին գլորել, կեղտոտ խեղկատակ:

ԼԻՐ

Ծնորհակալ եմ քեզանից, ո՛վ մարդ, դու ինձ լաւ ծառայեցիր, եւ ես քեզ կսիրեմ:

ՔԷՆՏ

Դէ վե՛ր կաց, կորի՛ր այստեղից, դո՛ւրս. ես քեզ կսովորեցնեմ տարբերել մարդկանց: Դո՛ւրս այստեղից, եթէ չես ուզում մի անգամ էլ երկարուել հասակովդ մէկ: Դո՛ւրս կորիր, եթէ խելքդ տեղն է դեռ, դո՛ւրս:

ԼԻՐ

Դէ, շնորհակալ եմ, իմ հաւատարիմ ծառայ. ահա ծառայութեանդ համար մի կանխավճար: (Քէնտին փող է տալիս):

Մտնում է խեղկատակը:

ԽԵՂԿԱՏԱԿ

Թող ես էլ վարձատրեմ դրան, ա՛ն քեզ իմ խեղկատակի գլխարկը:

ԼԻՐ

Որտե՞ղ ես, չարաճճի՛, ինչպէ՞ս ես:

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քէնտին)։ Լաւ կանես, վերցնես գլխարկս, ա՛յ մարդ:

ՔԷՆՏ

Ինչի՞ համար, խե՛նթ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, որ պաշտպան ես կանգնել մի շնորհագորկ մարդու: Եթէ դու չես կարող ժպտալ քամու փչած ուղղութեամբ, շուտով հարբուխ կստանաս: Դէ, վերցրո՛ւ գլխարկս: Տեսնո՞ւմ ես, այս խեղկատակը իր աղջիկներից երկուսին աքսորել է, իսկ երրորդին տուել է իր օրհնութիւնը՝ առանց այդ իմանալու: Եթէ դու ուզում ես հետեւել նրան, խեղկատակի գլխարկս պէտք է անպայման գլխիդ դնես: Ինչպէ՞ս ես, սիրելի քեռի՛: Երանի՛ թէ երկու գլխարկ ունենայի եւ երկու դուստր:

ԼԻՐ

Ինչո՞ւ, ա՛յ տղայ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Որովհետեւ եթէ նրանց տայի բոլոր կալուածներս՝ գոնէ գլխարկներս ինձ կմնային:
(Իր գլխարկը Լիրին տալով): Ահա քեզ իմը, մյուսն էլ աղջիկների՛ցդ մտրա:

ԼԻՐ

Զգո՛յ՛ջ, սիրելիս, տեսնո՞ւմ ես մտրակը...

ԽԵՂԿԱՏԱԿ

Աճմարտութիւնը շուն է, որ պէտք է շնանցում մնայ, նրան մտրակելով սենեակից կվոճեճ, այնինչ ազնուազարմ բարակը կարող է մտնուել վառարանի մօտ եւ վատ հոտ հանել:

ԼԻՐ

Ի՛նչ դառը թոյն ինձ համար:

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քէնտին)։ Լսի՛ր, բարեկա՛մ, քեզ մի լաւ խօսք սովորեցնեմ:

ՔԷՆՏ

Ասա՛:

ԽԵՂԿԱՏԱԿ

Լա՛ւ լսիր, քեռի՛:
Քի՛չ ցոյց տուր, շատ ունեցի՛ր,
Քի՛չ խօսիր, շատ իմացի՛ր,
Ունեցածդ փոխ մի՛ տա,
Շա՛տ լսիր, քի՛չ հաւատա,
Շա՛տ ձի նստիր, քի՛չ քայլիր,
Շա՛տ շահիր, քի՛չ շոպլիր,
Քի՛չ խմիր ու քե՛ֆ արա,
Չծիծաղեն քեզ վրայ,
Եւ կշահես դրանից,
Երկու տասը՝ քսանից:

ՔԷՆՏ

Դա ոչինչ է, խեղկատակ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ուրեմն նման է անվարձ փաստաբանի խօսքին. դու ինձ
ոչինչ չես վճարել դրա համար: Իսկ ի՞նչ ես կարծում, ոչնչից
կարելի՞ է մի բան շինել, քեռի՛:

ԼԻՐ

Անշուշտ, ո՛չ: Ոչնչից ոչինչ միայն կարելի է ստանալ:

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քէնտին). Խնդրեմ, ասա՛ սրան, որ իր կալուածների հա-
տյոքն էլ հէնց այդքան է: Նա խեղկատակի խօսքին չի ուզում
հաւատալ:

ԼԻՐ

Դառն հանաք է:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ով որ խորհուրդ տունց քեզ՝
Կալուածների նուիրես,
Նա դառն հանաք է արել
Եւ ծաղրածու է դառել...

ԼԻՐ

Ինձ է՞լ ես դու ծաղրածու համարում, բարեկամ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ի՞նչ է մնում անել, երբ բոլոր տիտղոսներդ բաժանեցիր
ուրիշներին եւ քեզ թողիր միայն մի բնածին տիտղոս:

ՔԷՆՏ

Ամբողջովին յիմարութիւն չի ասածը, տէ՛ր իմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ո՛չ, երդում եմ, որ լորդերն ու մեծատունները չեն ուզում
յիմարութիւնն ամբողջովին ինձ թողնել, էլ բաժին չէր մնայ
նրանց: Դեռ տիկիներն էլ կան, որ չեն թոյլ տայ ինձ խենթու-
թեան մենաշնորհ ունենալ, իրենք էլ են ուզում մաս ունենալ:
Տո՛ւր ինձ մի ձու, քեռի՛, եւ ես քեզ կտամ երկու թագ:

ԼԻՐ

Այդ ի՞նչ թագեր են դրանք:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ի՞նչ. երբ ձուն մէջտեղից կիսեմ եւ միջուկն ուտեմ, ձուի կե-
ղեւից երկու թագ կմնայ: Երբ դու քո թագը մէջտեղից կիսեցիր
եւ երկու մասն էլ նուիրեցիր, նշանակում է քո սեփական մէջ-
քով էշին շալակած անցկացրիր ցեխից: Երբ ոսկի թագդ
ուրիշներին տուիր՝ շատ քիչ խելք մնաց ճաղատ թագիդ մէջ:
Եթէ ես այս ասում եմ իբր յիմար, թող ծեծուի նա, ով իմ ասա-
ծը ճիշտ է համարում: (Երգելով).

Խենթի համար տարին դժուար է,
Երբ ամէն խելօք այժմ յիմար է.
Չգիտեն խելքը ինչպէս գործածել.
Նրանք խենթերի կապիկն են դարձել:

ԼԻՐ

Այդ ո՞ր օրուանից է, որ այսքան երգ ես սովորել, տղա՛յ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Այն օրուանից, քեռի՛, երբ դու աղջիկներին մայր դարձրիր:
Այն օրուանից, երբ մտրակը նրանց ձեռքը տուիր եւ վարտիքը
վար քաշեցիր: (Երգելով).

Ցածութիւնից նրանք լացին,
Իսկ եւ վշտից երգեցի,
Որ մի այդքան խելացի
Յիմարների շարքն է
Անցնում բառացի...

Խնդրում եմ, քեռի՛, մի ուսուցիչ վարձի՛ր, որ քո խելկատա-
կին սուտ խօսել սովորեցնի. եւ մեծ ցանկութիւն ունեն ստա-
խօսութիւն սովորելու:

ԼԻՐ

Բայց եթէ սուտ խօսես, մտրակ կուտես:

ԽԵՂԿԱՏԱԿ

Չարմանում եմ, որ դու եւ աղջիկներդ ազգական էք:
Նրանք ինձ ուզում են ծեծել ճշմարտութեան համար, իսկ դու՝
ստախօսութեան: Երբեմն էլ ինձ ծեծում են լուտ մնալու հա-
մար: Ինչ լիճէի-լիճէի, գոճէ խելկատակ չլիճէի: Բայց եւ այն-
պէս եւ չէի ուզի քո տեղը լիճել, քեռի՛: Դու խելքդ միջից
կիսեցիր եւ մէջը ոչինչ չթողիր: Ահա կէտերից մէկը գալիս է:

Մտնում է Գոներիլը:

ԼԻՐ

Ինչպէ՞ս եւ, աղջի՛կս, ինչո՞ւ եւ ճակատդ կապել: Ինձ
թում է, որ դու վերջերս խոժոռ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քո գործն այն ժամանակ էր լաւ, երբ կարիք չունէիր հո-
գալու նրա դէմքի արտայայտութեան մասին, իսկ այժմ դու մի
գրօ ես՝ առանց թուանշանի: Ես քեզանից անելի լաւ եմ, եւ
գոճէ խելկատակ եմ, իսկ դու՝ ոչինչ:

(Գոներիլին). Երդում եմ արեւովս, պէտք է լեզուս զսպեմ՝
դէմքդ այդպէս է հրամայում:

Ով որ փշրանք չպահի,
Կամ չոր հացից ձանձրանայ,
Կգայ մի օր, որ նրանց
Անգամ կարօտ կմնայ:
(Լիրին ցոյց տալով).

Ահա քեզ մի փուչ սիսեռի կլեայ:

ԳՈՆԵՐԻԼ

Ոչ միայն, տէ՛ր իմ, ձեր խելկատակը.
Այլ ամբարտաւան ձեր շքախմբից
Իւրաքանչիւր ոք՝ ամէն մի բոպէ
Կոխ է սարքում, ե՛ւ վէճ, ե՛ւ աղմուկ,
Ե՛ւ անտանելի խոսկութիւններ:
Կարծում էի, տէ՛ր, որ յայտնեմ երբ ձեզ՝
Դուք այդ ամէնին վերջ կտաք իսկոյն.
Բայց այն ամէնից ինչ վերջերս դուք
Ինքներդ խօսել կամ կատարել էք,
Վախեցնում եմ, որ այդ ամէնը ձեր
Կամքով է արում եւ թոյլտութեամբ:
Եթէ ճիշտ է այդ՝ թող վիրատրանք
Չթուայ այս ձեզ. ինքներս հիմա
Վերջ տալ կջանանք դրանց շտապով:
Այս միջոցները, որոնց նպատակն
Անդորրութիւնն է պետութեան կեանքի,
Գուցէ ձեր աչքին նախատինք թուան
Եւ այլ դէպքերում ամօթալի են,
Բայց այժմ հարկն է ստիպում դիմել
Նախազգուշութեան:

ԽԵՂԿԱՏԱԿ

Տեսնո՞ւմ ես, քեռի՛,

Բարի ծիտն այնքան կկուին պահեց,
Որ կկուն նրա գլուխը կծեց:

Այսպէս ճրագը հանգաւ, եւ մենք մնացինք խաւարում:

ԷԴԳԱՐ

Որքա՞ն ժամանակ է, որ աստղագիտութեան ուսանող ես դարձել:

ԷԴՄՈՆԴ

Լա՛ւ, այդ թողնենք: Ե՞րբ ես տեսել վերջին անգամ հօրս:

ԷԴԳԱՐ

Ե՞րբ, անցած գիշեր:

ԷԴՄՈՆԴ

Հետը խօսեցի՞ր:

ԷԴԳԱՐ

Այո, ամբողջ երկու ժամ:

ԷԴՄՈՆԴ

Սիրո՞վ բաժանուեցիք իրարից, ոչ մի դժգոհութիւն չնկատեցի՞ր նրանում՝ խօսքից կամ դէմքից:

ԷԴԳԱՐ

Ամենեւին:

ԷԴՄՈՆԴ

Լա՛ւ մտաբերիր, թէ ինչով պէտք է նրան վիրատորած լինես, եւ աղաչում եմ, խո՛յս տուր միաժամանակ նրա ներկայութիւնից, մինչեւ որ նրա դժգոհութեան բռնկումները անցնեն: Այս վայրկեանիս նա այնքան բարկացած է, որ մահդ անգամ չի ամոքի նրան:

ԷԴԳԱՐ

Որեւէ սրիկայ պէտք է որ ինձ գրպարտած լինի:

ԷԴՄՈՆԴ

Ես էլ դրանից եմ վախենում: Խնդրում եմ՝ դու քեզ համբերութեամբ հեռո՛ւ պահիր, մինչեւ որ զայրոյթի սաստկութիւնը

անցնի: Եւ ինչպէս ասացի, արի՛ ինձ հետ, առանձնացի՛ր իմ բնակարանում: Ես քեզ մի այնպիսի տեղ կտանեմ, որ դու լսես մեր հօր խօսակցութիւնը: Ե՛կ, խնդրեմ, ահա իմ բանալին, երբ դուրս գալ ուզենաս՝ զինուա՛ծ դուրս եկ:

ԷԴԳԱՐ

Զինուա՞ծ:

ԷԴՄՈՆԴ

Եղբա՛յր, ես քեզ բարի խորհուրդ եմ տալիս՝ զինուա՛ծ չըջիր: Ես ազնիւ մարդ չեմ, եթէ քո նկատմամբ չար դիտաւորութիւններ չկան: Ես քեզ պատմեցի, ինչ որ լսել ու տեսել եմ, այն էլ շատ մեղմացրած, շատ հեռո՛ւ՝ իրականութեան սուկալի պատկերից: Աղաչում եմ, գնա՛:

ԷԴԳԱՐ

Ծուտով լուր կտա՞ս ինձ:

ԷԴՄՈՆԴ

Ես այս գործում քեզ եմ ծառայում:

Էդգարը դուրս է գնում:

Մի բարեմիտ հայր, մի ազնիւ եղբայր,
Որի սիրուն, հոգին այնքան հեռու են
Չարիք գործելուց, որ չի էլ գգում,
Թէ որքան հեշտ են իմ հնարքները
Այսպիսի տխմար ազնութեան դէմ:
Ես գործս գիտեմ. եթէ ծնունդով
Անհնարին է կալուած ստանալ,
Կստանամ ես իմ խորամանկութեամբ:
Ամէն մի միջոց լաւ է ինձ համար,
Թէ հասցնում է իմ նպատակին:

Դուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Ալբանի դուքսի պալատը
Մտնում են Գոնեթիլը եւ Օսվալդը:

ԳՈՆԵՐԻԼ

Ծի՞շտ է, որ հայրս ծեծել է իմ թիկնապահին այն պատճառով, որ նա անպատուել է նրա պալատական խեղկատակին:

ՕՍՎԱԼԴ

Այո՛, տիկի՛ն:

ԳՈՆԵՐԻԼ

Գիշեր ու ցերեկ անարգում է ինձ
Եւ բարկանում է իրաքանչիւր ժամ՝
Գործելով մի բիրտ, անվայել յանցանք,
Որ մեզ բոլորիս վիրատրում է:
Իր ասպետները խիստ խոտվարար
Մարդիկ են դառնում, ինքն էլ շարունակ,
Ամէն մի չնչին պատճառի համար
Պարսաւում է մեզ: Երբ որսից դառնայ,
Հետը չեմ խօսի, դուք էլ ասացէ՛ք,
Որ ես հիւանդ եմ: Եւ շատ լաւ կանէք,
Որ չծառայէք առաջուայ նման,
Իսկ պատասխանը ես ինքս կտամ:

ՕՍՎԱԼԴ

Նա եկաւ, տիկի՛ն, լսում է ձայնը:

ԳՈՆԵՐԻԼ

Որքան կարող էք, անհո՛գ ձեւացէ՛ք,
Թէ՛ դու եւ թէ՛ քո ընկերները: Նա,
Եթէ բարկանայ, շատ լաւ կլինի:
Թէ չի հաւանում, թող գնայ հիմա
Իմ քրոջ տունը. քոյրս ինձ հետ է
Եւ չի հանդուրժի, որ իշխեն վրան:

Չառամեա՛լ ծերուկ, որ կամենում է
Դեռես վարել մի իշխանութիւն,
Որ ինքն է ուրիշ ձեռքերի յանձնել:
Օ՛հ, կեանքս վկայ, զառամեալները
Կարծես թէ կրկին մանուկ են դառնում:
Պէտք է նրանց հետ խստութեամբ վարուել,
Երբ քնքշութիւնը օգուտ չի բերում,
Յիշի՛ր ասածս:

ՕՍՎԱԼԴ

Շատ լաւ, տիրուհի՛:

ԳՈՆԵՐԻԼ

Ասպետների հետ ես վարուեցէք,
Որքան կարող էք, սառն ու անտարբեր.
Ինչ լինելու է, թող լինի շուտով:
Ընկերներիդ էլ նո՛յնը պատուիրիր:
Ես ցանկանում եմ մի առիթ գտնել
Եւ պէտք է գտնեմ, որ լեզուս բանամ:
Իսկոյն քրոջս մի նամակ գրեմ,
Որպէսզի նա էլ ինձ նման վարուի:
Մաշը պատրաստէ՛ք:

Գուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Մի դահլիճ՝ նոյն պալատում
Մտնում է Քէնտը՝ ծպտեալ:

ՔէՆՏ

Թէ կարողանամ իմ ձայնն էլ փոխել
Եւ խօսել օտար առողանութեամբ,
Գուցէ իմ բարի նպատակն հասնի
Այն յաջողութեան, որի պատճառով

Էլ այսքան լաւ երեւաս, ես քեզանից էլ չեմ բաժանուի: Ու՞ր է իմ անպիտան խեղկատակը: Գնա՛, իմ խեղկատակին կանչի՛ր այստեղ:

Մտնում է Օսվալդը:

Հէ՛յ, ո՞վ ես, ա՛յ մարդ, որտե՞ղ է աղջիկս:

ՕՍՎԱԼԴ

Ներեցէ՛ք...

Գուրս է գնում:

ԼԻՐ

Ի՞նչ է ասում այդ մարդը, ե՛տ կանչէք այդ տխմարին. ո՞ւր է ծաղրածուն: Հո՛, կարծես ամբողջ աշխարհը քուն է մտել: Ի՞նչ է, ո՞ւր է այդ շունը:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, նա ասում է, որ ձեր դուստրն առողջ չէ:

ԼԻՐ

Ինչո՞ւ այդ թշուառականը չվերադարձաւ, երբ ես նրան կանչեցի:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, նա ինձ ուղղակի պատասխանեց, որ չի ուզում գալ:

ԼԻՐ

Չի՞ ուզում:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, չգիտեմ ինչ է տեղի ունենում: Բայց ինձ թում է, որ ձերդ մեծութեան հետ այժմ այնպէս յարգալից չեմ վարում, ինչպէս առաջ: Թէ՛ հասարակ ծառայողները, թէ՛ դուքսը եւ թէ՛ ձեր դուստրը նոյնպէս քաղաքավարի չեմ, ինչպէս առաջ էին:

ԼԻՐ

Հա՞, կարծո՞ւմ ես:

ԱՍՊԵՏ

Աղերսում եմ, տէ՛ր իմ, ներեցէ՛ք ինձ, եթէ սխալում եմ, սակայն ես չեմ կարող լուռ մնալ, երբ տեսնում եմ, որ ձերդ մեծութիւնը արհամարհում է:

ԼԻՐ

Դու ինձ նկատել ես տալիս այն, ինչ ես ինքս էլ դիտել եմ. վերջերս ես նկատել եմ մի տեսակ անուշադիր վերաբերմունք դէպի ինձ, բայց դա անելի վերագրել եմ իմ սեփական դժուարահաճութեան, քան որոշ դիտաւորութեան կամ չար մտքի: Պէտք է անելի ուշադրութեամբ զննել... Բայց ո՞ւր է իմ խեղկատակը. երկու օր է նրան չեմ տեսել:

ԱՍՊԵՏ

Տէ՛ր իմ, մեր կրտսեր տիրուհու Ֆրանսիա մեկնելու օրից խեղկատակը շատ է տխրում:

ԼԻՐ

Մի՛ խօսի՛ր այդ մասին, ես ինքս էլ եմ տեսնում: Գնա՛ եւ ասա՛ դուներս, որ ուզում եմ խօսել նրա հետ: Դու էլ գնա՛ եւ խեղկատակիս ասա՛, գայ այստեղ:

Գալիս է Օսվալդը:

Հէ՛յ, դո՛ւ, պարո՛ն, այստե՛ղ ե՛կ, տեսնեմ. ես ո՞վ եմ, ա՛յ մարդ:

ՕՍՎԱԼԴ

Իմ տիրուհու հայրը:

ԼԻՐ

Իմ տիրուհու հա՞յրը, հա՞, տիրոջ սրիկայ ծառայ, շա՛ն որդի, ստրո՛ւկ, շո՛ւն:

ՕՍՎԱԼԴ

Ներեցէ՛ք, տէ՛ր իմ, ես ձեր ասածներից ոչ մէկը չեմ:

ԼԻՐ

Մեր դո՞ւստրն ես դու:

ԳՈՆԵՐԻԼ

Բաւական է, տէ՛ր,

Ես ցանկանում եմ, որ դուք վերջապէս
Դիմելով առողջ բանականութեան,
Որ ձեր մէջ դեռ կայ, վերջ տաք անտեղի
Այս արարքներին, որոնք վերջերս
Ձեզ շեղել են ձեր նախկին ընթացքից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Էջն էլ կարող է իմանալ, որ երբեմն պատահում է, որ
կառքն է ձիուն քշում:

ԼԻՐ

Կա՞յ արդեօք այստեղ ինձ ճանաչող մարդ.
Ո՛չ, սա Լիրը չէ, այսպէ՞ս էր միթէ
Լիրը ընթանում, այսպէ՞ս էր խօսում.
Ու՞ր են աչքերս:
Կա՞մ նրա խելքը տխմարանում է,
Կա՞մ մթագնել է դատողութիւնը:
Հը՞, արթո՞ւն է նա... Ո՛չ, անհնար է,
Ո՞վ կարող է ինձ ասել, թէ ո՞վ եմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Լիրի ստուերը:

ԼԻՐ

Ուզում եմ իմանալ, որովհետեւ իմ արքայական դիտողու-
թիւնները, խելքը եւ դատողութիւնը կարող են խաբել ինձ եւ
կարծել տալ, որ դուստրեր ունեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Որոնք կամենում են ձեզ դարձնել մի հնազանդ հայր:

ԼԻՐ

Ձեր անունն ի՞նչ է, գեղեցի՛կ տիկին:

ԳՈՆԵՐԻԼ

Ձեր այս զարմանքն էլ, տէ՛ր իմ, նման է
Ձեր այդ նորահաս անհեթեթութեանց.
Աղերսում եմ ձեզ, որ լաւ հասկանաք
Իմ ապածները, դուք՝ լինելով ծեր
Եւ պատկատելի՝ նաեւ խելացի
Պիտի լինէիք: Դուք այստեղ ունէք
Հարիւր թիկնապահ, որոնք բոլորն էլ
Այնքան են յանդուգն ու խոովարար,
Որ դարձրել են մեր արքունիքը
Իրենց բարքերի ապականութեամբ
Մի անկարգ պանդոկ: Որկրամոլութիւնն
Ու լրբութիւնը դարձնում են այն
Աւելի մի պիղծ գիւնետան նման,
Քան արքունիքի: Մոլութիւնն անգամ
Մի անմիջական էք է պահանջում:
Լսեցէ՛ք ուրեմն իմ աղաչանքը,
Եւ առաջարկս եթէ չընդունէք՝
Ստիպուած պիտի դիմենք բռնութեան:
Մի քիչ կրճատէ՛ք ձեր շքախումբը.
Եւ նրանք, որոնք մնալու են դեռ,
Պէտք է այնպիսի տիպարներ լինեն,
Որ պատիւ բերեն տէրութեանը ձեր
Եւ կարողանան ճանաչել թէ՛ ձեր,
Թէ՛ իրենց յարգը:

ԼԻՐ

Դժոխք եւ դեւեր...

Թամբեցէ՛ք ձիեր, հե՛յ, շքախումբս...
Այլատերուած կի՛ն, այլեւս ես քեզ
Հոգս չեմ պատճառի: Ինձ դեռ մնում է
Իմ միւս դուստրը:

ԳՈՆԵՐԻԼ

Դուք ապտակում էք իմ ծառաներին,
Եւ ձեր վայրենի, անկարգ խուժանը

Հրամայում է այնպիսի մարդկանց,
Որոնք իրենցից աւելի բարձր են:

Մտնում է Ալբանին:

ԼԻՐ

Վա՛յ նրա գլխին, ով ուշ է զոչում:
(Ալբանիին).

Այդ դո՞ւք էք, պարո՛ն, ձեր կամքն է՞լ է այդ
Խօսեցէ՛ք, ձիերս արդէն պատրաստ են:
Ապերախտութի՛նն, ժայռասիրտ դու դե՛ն,
Ծովի հրէշից ահռելի ես դու,
Երբ բնակում ես մի գաւակի մէջ:

ԱԼԲԱՆԻ

Խնդրում եմ, պարո՛ն, համբերո՛ղ եղէք:

ԼԻՐ

Ո՛վ զազրելի ցի՛ն, զրպարտում ես դու.
Իմ ծառաները ազնիւ մարդիկ են
Ամենաազնիւ բնատրութեամբ,
Նրանք կարգ-կանոն լաւ են իմանում,
Ամենազգոյշ ինքնասիրութեամբ
Նրանք պահում են իրենց պատիւը:
Ինչպէ՞ս կարող էր այդքան զարշ թուալ
Ինձ Կորդելիայի չնչին յանցանքը,
Գալարել այնպէս բնութիւնս ողջ,
Դուրս կորզել յանկարծ իմ սրտի միջից
Նրա սէրն ամբողջ եւ մաղձով լցնել:
(Խփելով գլխին).

Օ՛, Լի՛ր, Լի՛ր, օ՛ Լի՛ր, խփի՛ր այս դռան,
Որ ներս ընդունեց խենթութիւնը քո
Եւ դուրս վտարեց խելքդ թանկագին:
(Իր շքախմբին).

Դէ, դո՛ւրս այստեղից:

ԱԼԲԱՆԻ

Տէ՛ր, ես անմեղ եմ.

Զգիտեմ ի՞նչն է ձեզ այդպէս յուզել:

ԼԻՐ

Գուցէ, տէ՛ր... Լսի՛ր, լսի՛ր, բնութի՛նն,
Լսի՛ր, դիցունի՛, այս աղերսանքը.
Թէ միտք ունէիր այս արարածին
Դու բեղմնատրել՝ փոխի՛ր քո կամքը
Եւ ամութի՛նն տուր նրա արգանդին.
Զորացրո՛ւ նրա ծննդարանը,
Թող աշխարհ չգայ նրա պիղծ մարմնից
Ոչ մի երեխայ, որ նրան սիրէ.
Թէ յիանայ՝ նրա ծնունդը
Մաղձի՛ց ստեղծիր, որպէսզի ապրի
Եւ հրէշային մի տանջանք դառնայ
Ու նրան տանջէ: Կնճիոճնէ՛ր փորէ
Մօր մատաղահաս ճակատի վրայ...
Յորդ արցունքներով ջրանցքներ բանայ
Նրա այտերին, նրա մայրական
Ամբողջ երախտիքն ու երկունքը ողջ
Ծաղր ու ծանակի առարկայ՝ լինէ,
Որպէսզի զգայ, թէ երախտամոռ
Զառակ ունենայն օձի ժանիքից
Որքան է խայթող: Գնա՛նք, հեռանա՛նք:

Դուրս են գնում:

ԱԼԲԱՆԻ

Ո՛վ դուք, աստուածներ՝, ի՞նչն է պատճառը
Այս ամբողջ վէճի:

ԳՈՆԵՐԻԼ

Դու քեզ մի՛ տանջիր պատճառի համար.
Թո՛ղ նրա մաղձին ազատ ասպարէզ,
Որ զառանցանքը տալիս է նրան:

Լիրը կրկին գերս է մտնում:

Լիր

Տառնեհինգ օրում իմ ասպետներից
Յիսուն հոգի են միայն մնացել:

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչ է եղել, տէ՛ր:

Լիր

Կասեմ...

Արտասում է:

(Գուներիլիմ).

Մահ եւ կեանք...

Ես ամաչում եմ, որ կարող ես դու
Զրկել ինձ այսպէս արհուրթինից:
Այս արցունքներս, որ դուրս են յորդում
Կամքիս հակառակ՝ թող քե՛զ վիճակուեն:
Խորշակ, մառախուղ հարուածեն թող քեզ,
Թող հօր անէծքի անբոյժ վերքերը
Ծածկե՛ն, խոցոտե՛ն մարմինդ ամբողջ:
Օ՛հ, իմ ծեր աչքե՛ր, թէ համարձակուէք
Արտասուել կրկին, ես ձեզ կապտակեմ
Եւ դեն կնետեմ ջրերի հետ այն,
Որ թափում էք դուք եւ թրջում հողը:
Օ՛, միթէ գործը այստեղ է հասել.
Թող այդպէս լինի.
Բայց ես դեռ ունեմ մի ուրիշ դուստր էլ,
Որ, վստահ եմ ես, բարի է եւ լաւ.
Երբ նա իմանայ քո արարքը այս՝
Իր եղունգներով նա կյօշոտէ
Գայլային դէմքդ, եւ դու կտեսնես,
Որ ես կհասնեմ կրկին այն դիրքին,
Որ քո կարծիքով ընդմիջտ կորցրել

Եւ ժխտել եմ ես: Օ՛, վստահ եղիր,
Որ այս կտեսնես:

Լիրը, Քէնտը եւ հետետողները դուրս են գնում:

ԳՈՆԵՐԻԼ

Դուք տեսա՞ք, տէ՛ր իմ:

ԱԼԲԱՆԻ

Որքան էլ ես ձեզ ջերմ սիրով սիրեմ
Չեմ կարող սակայն աչառու լինել:

ԳՈՆԵՐԻԼ

Հանգի՛ստ կաց, խնդրեմ: Ե՛կ, Օսվա՛լդ, ո՞ւր ես:
(Խեղկատակին).

Դէ դու էլ, պարո՛ն, ոչ թէ խենթ՝ խարդա՛խ,
Հետեիր տիրոջդ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քեռի Լի՛ր, քեռի Լի՛ր, մի փոքր սպասի՛ր եւ խենթին էլ
հետդ տար:

Թակարդ ընկած մի աղուէս
Եւ մի աղջիկ սրա պէս՝
Կհանէի կախաղան,
Թէ այս խեղճի գլխարկով
Ես գնէի մի պարան:
Խենթն էլ գնաց տիրոջ մօտ:

Դուրս է գնում:

ԳՈՆԵՐԻԼ

Այս մարդն ինձ տուեց մի լաւ գաղափար...
Ի՛նչ, հարիր ասպե՞տ, խոհե՞մ բան է սա.
Վտանգատր չէ՞, թոյլ տալ որ պահէ
Հարիր թիկնապահ սպառազինուած:
Ոպէսզի ամէն շիմար երագի,
Ամէն ցնորքի, քմահաճոյքի,

Չնչին տրտունջի, գանգաւորի համար
Խելքի ուզածը նրանց ուժերով
Ի կատար ածէ, եւ մեր կեանքն անգամ
Կախում ունենայ հաճոյքից նրա...
Ի՛նձ նայիր, Օսվա՛լդ:

ԱԼԲԱՆԻ

Սակայն իզուր ես
Չափազանցնում քո երկիւղը գուցէ:

ԳՈՆԵՐԻԼ

Այդ լաւ է անմիտ վստահութիւնից.
Անհրաժեշտ է վտանգը կանխել,
Քան թէ թոյլ տալ, որ նրանք մեզ կանխեն:
Ես նրա սիրտը լաւ եմ ճանաչում:
Նա ինչ որ ասաց, գրեցի արդէն
Քրոջս, տեսնենք, քոյրս կուզենա՞յ
Ընդունել նրան եւ նրա հարիւր
Թիկնապահներին՝ նամակիցս յետոյ...
Ի՞նչ եղաւ, Օսվա՛լդ:

Մտնում է Օսվալդը:

Գրեցի՞ր արդէտք

Քրոջս նամակը:

ՕՍՎԱԼԴ

Այո՛, տիրուհի՛:

ԳՈՆԵՐԻԼ

Վերցրո՛ւ մարդիկ եւ շուտ ձի՛ նստիր,
Պատմի՛ր մանրամասն եւ երկիւղներն իմ,
Եւ քո կողմից էլ բե՛ր ապացոյցներ,
Որ էլ աւելի համոզիչ լինի:
Շուտ գնա՛, շուտ ե՛կ:

Օսվալդը դուրս է գնում:

(Ալբանիին)

Ո՛չ, սիրելի լո՛րդ,
Ո՛չ, ձեր կաթնահամ այդ հեզութիւնը
Եւ ձեր ընթացքը ես չեմ պարսաւում.
Սակայն, ներեցէ՛ք, աւելի շուտ ձեր
Անխոհեմութեան համար պէտք է ձեզ
Կշտամբել, քան թէ անմիտ մեղմութեան:

ԱԼԲԱՆԻ

Թէ որքան էք դուք հեռաւոտս՝ հիմա
Չեմ կարող ասել: Ձգտելով յաճախ
Դէպ լաւագոյնը՝ կորցնում եմք լաւը:

ԳՈՆԵՐԻԼ

Դէ, այն ժամանակ...

ԱԼԲԱՆԻ

Գործը ցոյց կտայ
Եւ՛ ժամանակը:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Բակ Ալբանիի ամրոցի մէջ

Մտնում են Լիրը, Քէնտը եւ խեղկատակը:

ԼԻՐ

Դու առաջ անցիր եւ այս նամակը տար Գրո՛ստէր: Լսած-
ներիցդ ոչինչ չասես աղջկանս, բացի այն, ինչ պէտք է պա-
տասխանես նրա հարցերին իմ նամակի վերաբերմամբ: Եթէ
չատ շտապով չգնաս՝ ես քեզանից առաջ այնտեղ կլինեմ:

ՔԷՆՏ

Տէ՛ր իմ, ես չեմ քնի, սինչեւ ձեր նամակը չյանձնեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Եթէ մարդու ուղեղը կրունկների մէջ լինէր՝ կոշտուկ չէ՞ր ունենայ:

ԼԻՐ

Այո՛, բարեկա՛մս:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ուրեմն, ուրախ կաց. քո խելքը երբէք հողաթափերի կարիք չի ունենայ:

ԼԻՐ

Հա՛, հա՛, հա՛:

ԽԵՂԿԱՏԱԿ

Կտեսնես, որ միւս աղջիկը էլ քեզ հետ նոյն քաղցրութեամբ կվարուի, որդվհետեւ թէեւ նա նման է սրան, որքան վայրի խնձորը ընտանի խնձորի, սակայն ես ասում եմ այն, ինչ ասում եմ:

ԼԻՐ

Լա՛ւ, դու ի՞նչ ես ասում:

ԽԵՂԿԱՏԱԿ

Որ նրա համն էլ այնքան նման կլինի սրա համին, որքան մի վայրենի խնձոր մի վայրենի խնձորի: Կարո՞ղ ես ասել, թէ ինչն՞ է մարդու քիթը դէմքի մէջտեղն է դրուած:

ԼԻՐ

Ո՛չ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, որ աչքի մէկը քթի այս կողմը լինի, միւսը՝ այն, որպէսզի եթէ մարդ չկարողանայ մի բանի հոտն առնել՝ զոնէ կարողանայ տեսնել այն:

ԼԻՐ

(Մտազբաղ). Ես նրա հետ անհրաւ վարուեցի...

ԽԵՂԿԱՏԱԿ

Կարո՞ղ ես ասել, թէ ուտրէն ինչպէս է շինում իր խեցին:

ԼԻՐ

Ո՛չ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ես էլ չեմ կարող, բայց կարո՞ղ ես, ասել, թէ ինչու խխունջը մի տուն ունի:

ԼԻՐ

Ո՛չ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, որ գլուխը մէջը դնի, եւ ոչ թէ նրա համար, որ տայ իր աղջիկներին եւ իր եղջիրները անապաստան թողնի:

ԼԻՐ

(Մտախոն). Ես պէտք է մոռանամ իմ բնատրութիւնը: Այսքան գորովալից մի հա՞յր: Ձիերս պատրա՞ստ եմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քո ասանակները զնացել են ձիերդ բերելու: Կարո՞ղ ես ասել՝ ինչն՞ է եօթը աստղը եօթից ատլի չէ:

ԼԻՐ

Որովհետեւ ութը չէ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ծիշտ որ դու լաւ խեղկատակ կարող ես լինել:

ԼԻՐ

(Մտախոն). Բռնի ետ վերցնել... Օ՛, հրէշային ապերախտութիւն:

ԽԵՂԿԱՏԱԿ

Եթէ դու իմ խելկատակը լիճէիր, քեռի՛, ես քեզ ծեծել կտա-
լի, որ ժամանակից առաջ ես ծերացել:

ԼԻՐ

Ինչո՞ւ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Դու չպէտք է ծերանայիր՝ խելահաս դառնալուց առաջ:

ԼԻՐ

Օ՛հ, գթառատ երկի՛նք, թոյլ չտաս, որ ես խելագար դառ-
նամ, համբերութի՛ն տուր ինձ: Չեմ ուզում խելագարուել:

Մտնում է մի ազնուական:

Ձիերս պատրա՞ստ են:

ԱԶՆՈՒԱԿԱՆ

Պատրաստ են, տէ՛ր իմ:

ԼԻՐ

Դէ գնա՛նք, գնա՛նք, բարեկա՛մ:

Դուրս է գնում:



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Գլուստեր դուքսին պատկանող ամբոցում
Մտնում են Էդմոնդը եւ Կուրանը:

ԷԴՄՈՆԴ

Ողջո՛յն քեզ, Կուրա՛ն:

ԿՈՒՐԱՆ

Եւ ձեզ, պարո՛ն: Ես ձեր հօր մօտ էի եւ տեղեկացրի նրան,
որ Կորնվալի դուքսը եւ Ռեգանը, նրա դքսուհին, այս գիշեր
նրա մօտ կլիճեն:

ԷԴՄՈՆԴ

Այդ ի՞նչ պատճառով:

ԿՈՒՐԱՆ

Ես ճիշտ չգիտեմ, դուք երեւի լսած կլիճէք տարածուած լու-
րերը, այսինքն այն լուրերը, որ դեռ փսփսաւով են հաղորդում
իրար:

ԷԴՄՈՆԴ

Ես ոչինչ չեմ լսել: Ասա՛, խնդրեմ, ի՞նչ լուրեր են դրանք:

ԿՈՒՐԱՆ

Չէ՞ք լսել, որ Կորնվալի եւ Ալբանի դուքսերի միջեւ հաւա-
նական է պատերազմ ծագի:

ԷՂՄՈՆԴ

Ոչ մի բան:

ԿՈՒՐԱՆ

Ծուտով կլսէք: Մնաք բարով, պարո՛ն:

Դուրս է գնում:

ԷՂՄՈՆԴ

Դուքսը այս գիշեր այստեղ է գալու.
Ծատ սքանչելի, նա ինքն է ընկնում
Իմ ուստայնի մէջ: Մարդ է ուղարկել
Հայրս՝ եղբօրս բռնելու համար:
Ես մի դեր ունեմ, շատ փափուկ մի դեր,
Որ պէտք է խաղամ: Ուրեմն ի գո՛րծ:
(Կանչում է).
Լսիր ինձ, Էդգար, բան եմ ասելու,
Ներքե՛ւ եկ, ո՞ւր ես...

Մտնում է Էդգարը:

Քեզ է որոնում

Հայրս, շուտ, փախի՛ր, տեղդ իմացել եմ:
Գիշերը քեզ շատ նպաստաւոր է.
Դու բա՞ն ես ասել Կորնվալի դէմ,
Նա հե՛նց այս գիշեր այստեղ է գալիս,
Եւ շատ շտապով, իր Ռեզանի հետ:
Դու բան չե՞ս ասել արդեօք նրա դէմ:

Յիշի՛ր:

ԷՂԳԱՐ

Ոչ մի բան:

ԷՂՄՈՆԴ

Լոի՛ր, ոտնաձայն.

Հայրս գալիս է... Ների՛ր, բայց հիմա
Մեր գործի համար անհրաժեշտ է,
Որ մենամարտենք, դէ, սուրդ քաշի՛ր
Եւ այնպէս ցոյց տուր, թէ պաշտպանում ես:
Ես էլ եմ քաշում, հիմա նահանջի՛ր:
(Ձայնը բարձրացնելով).
Անձնատո՛ւր եղիր, ե՛կ հօրս առջեւ:
Օ՛, ճրագ բերէք...
(Ցած).

Փախի՛ր դու, եղբա՛յր:

(Բարձր).

Դէ, ջահե՛ր բերէք:

(Ցած).

Լա՛ւ, գնաս բարո՛վ:

Էդգարը դուրս է գնում:

Եթէ ինքս ինձ քիչ վիրատորեմ,
Դա կարծել կտայ, որ լաւ եմ կոռել:

Ինքն իրեն վիրատորում է:

Ես հարբածներ եմ տեսել, որ իրենց
Դեռ սրանից էլ շատ են չանգոտել:
(Բարձր).
Հա՛յր իմ, սպասի՛ր, կանգնի՛ր, օգնութի՛ւն:

Մտնում են Գլոստերը եւ ծառաները շահերով:

ԳԼՈՍՏԷՐ

Ի՞նչ եղաւ, Էդմո՛նդ, ո՞ւր է սրիկան:

ԷՂՄՈՆԴ

Նա հե՛նց այստեղ էր, իր սուրը քաշած

Կախարդանքներ էր նա մթութեան մէջ
Մրմնջում լուսնին, որ նրա պաշտպան
Տիրուհին լինի:

ԳԼՈՍՏԷՐ

Բայց ո՞ր է հիմա:

ԷԴՄՈՆԴ

Նայեցէ՛ք, տէ՛ր իմ, արիւն է հոսում:

ԳԼՈՍՏԷՐ

Ո՞ր է սրիկան:

ԷԴՄՈՆԴ

Այն կողմը փախաւ, երբ նա ոչ մի կերպ
Չկարողացաւ...

ԳԼՈՍՏԷՐ

(Իր մարդկանց)

Բռնեցէ՛ք նրան, վազէ՛ք ետեւից...

Ծառաները վազում են:

Չկարողացա՞ւ ի՞նչ...

ԷԴՄՈՆԴ

Համոզեց, որ ես ձեզ սպանէի,
Բայց ես մերժելով նրան՝ ասացի,
Որ վրէժխնդիր աստուածներն իրենց
Ծանօթերն են ուղղում հայրասպանի դէմ,
Խօսեցի նաեւ այն բազմապատիկ
Կապերի մասին, որ հօր եւ որդու
Միջեւ յաւիտեան գոյութիւն ունեն.
Մի խօսքով, տէ՛ր իմ, երբ նա համոզուեց,
Թէ որքան խստի հակառակ եմ ես
Նրա դիւային դիտարութեան,

Նա կատաղաբար, սուրը քաշելով,
Յարձակում գործեց անպաշտպանիս դէմ
Եւ թեւ խցեց, սակայն երբ տեսաւ,
Որ խիզախ որդին խրոխտ հաւատով
Պաշտպանում է քաջ, եւ կամ սարսափած
Իմ աղաղակից՝ խոյս տուեց յանկարծ:

ԳԼՈՍՏԷՐ

Որքան էլ հիմա նա հեռու փախչի,
Խոյս տալ չի կարող մեր ձեռքից երբէք:
Այս գիշեր դուքսը, մեր ազնի տէրը
Եւ մեր պաշտպանը այստեղ է գալիս.
Նրա անունով կյայտարարեմ,
Որ ով որ գտնի այդ մարդասպանին
Եւ առաջնորդի նրան կախաղան,
Նա կարծանանայ մեր վարձատրութեան,
Իսկ ով թաքցնի՝ կդատապարտուի
Նա իսկոյն մահուան:

ԷԴՄՈՆԴ

Ես ջանք թափեցի
Համոզել նրան. որ հրաժարուի
Նա նպատակից իր արյունալի,
Բայց տեսայ, որ նա անդրդուելի է.
Խստի խօսքերով ես սպառնացի
Իր դաւը յայտնել, նա պատասխանեց.
Դու, ապօրինի եւ անժառանգ խեղճ,
Մի՞թէ կարծում ես, որ եթէ հերքեմ
Ես ասածներդ, պիտի կարենա՞ս
Քո ազնութեամբ եւ անկեղծութեամբ
Հաւատ ներշնչել դէպի քեզ, երբէ՛ք:
Ո՛չ, ես կհերքեմ քո ասածները,
Թէկուզ գիրս անգամ ապացոյց բերեն,
Այդ ամէնը կվերագրեմ
Քո նենգ, դաւադիր նպատակներին,
Տխմար կլինի ամբողջ աշխարհը,

Թէ չհաւատայ, որ իմ մահուանից
Քո ակնկալած օգուտներն են լոկ
Այն խթանները, որ դրդում են քեզ
Իմ մահը ցանկալ:

ԳԼՈՍՏԷՐ

Օ՛, հրէշատր,
Օ՛, աննգ սրիկայ՛ն, ուզում է անգամ
Նա իր սեփական նամակն ուրանա՞լ:
Նա իմ որդին չէ:
(Փողեր).

Դուքսի փողերն են.
Չգիտեմ, սակայն ինչու է գալիս:
Պէտք է փոխել տամ նախահանգիստը:
Չպէտք է թոյլ տամ սրիկան փախչի,
Դուքսը պէտք է ինձ այդ շնորհն անի.
Բայց պէտք է նաեւ նրա պատկերը
Յղեմ ամենուր, որ ամենայն ոք
Այս պետութեան մէջ ճանաչի նրան:
Իսկ դու, իմ ազնիւ, բնական զաւա՛կ,
Ես ճար կգտնեմ քեզ կալուածներիս
Ժառանգն անելու:

Մտնում են Կորնվալը, Ռեգանը եւ սպասարները:

ԿՈՐՆՎԱԼ

Ի՞նչ բաներ են այս,
Ազնի՛ւ բարեկամ, հազիւ տեղ հասայ
Եւ տարօրինակ լուրեր լսեցի:

ՌԵԳԱՆ

Եթէ դա ճիշտ է՝ որեւէ պատիժ
Այդ լանցատրին անբաւական է:
Ինչպէ՞ս է կոմսը:

ԳԼՈՍՏԷՐ

Ա՛խ, ազնիւ տիկի՛ն,
Իմ խեղճ, ծերունի սիրտը ճաքել է
Որդու արարքից:

ՌԵԳԱՆ

Հօրս սանկը
Դա՛ւ դնէ ձեր դէմ. նա, որին հայրս
Կնքահայր եղաւ, ձեր էղգար որդին:

ԳԼՈՍՏԷՐ

Օ՛հ, ազնիւ տիկի՛ն, ամօթահար եմ.
Եթէ թաքցնե՛լ կարողանայի:

ՌԵԳԱՆ

Չէ՞ր ընկերացել արդեօք նա իմ հօր
Այն ամբարտաւան ասպետների հետ,
Որ ուղեկցում են նրան ամենուր:

ԳԼՈՍՏԷՐ

Չգիտեմ, տիկի՛ն:

ԷԴՄՈՆԴ

Ճիշտ է, տիրուհի՛,
Նա այդ խմբից էր:

ՌԵԳԱՆ

Դէ, էլ ի՞նչ զարմանք,
Որ նա այդպիսի մի միտք լղացաւ.
Նրանք են դրդել, որ նա սպանէ
Այս խեղճ ծերուկին, որ վատնեն յետոյ
Նրա կալուածներն: Քոյրս այս գիշեր
Նամակ է գրել այդ մարդկանց մասին.
Նա ինձ այսպէս է նախազգուշացրել,
Որ եթէ նրանք ինձ մօտ գալ ուզեն՝
Տանից հեռանամ:

ԿՈՐՆՎԱԼ

Նոյնպէս ես, Ռեզա՛ն:
Լսել եմ, Էդմո՛նդ, որ ցոյց էք տուել
Մի որդիական հայրասիրութիւն:

ԷԴՄՈՆԴ

Դա իմ պարտքն էր, տէ՛ր:

ԳԼՈՍՏԷՐ

Նա լայտնեց դարը.
Եւ տեսէք, անգամ վերք է ստացել,
Երբ ջանացել է բռնել Էդգարին:

ԿՈՐՆՎԱԼ

Մարդ ուղարկե՞լ էք, որ ձերբակալեն:

ԳԼՈՍՏԷՐ

Այո՛, ազնի տէ՛ր:

ԿՈՐՆՎԱԼ

Թէ բռնեմ նրան՝
Երկիւղ չէք կրի էլ դուք նրանից.
Գործ դրէք իմ ողջ իշխանութիւնը,
Ինչպէս ձեր կամքն է: Գալով ձեզ, Էդմո՛նդ,
Որի գովելի հնազանդութիւնն
Այսքան վառ փայլեց հեւց այս վայրկեանին,
Մերն էք լինելու դուք այսուհետեւ:
Մենք շատ կարօտ ենք ձեզ պէս անձնուէր,
Անկաշառ մարդկանց:

ԷԴՄՈՆԴ

Տէ՛ր իմ, անկաշառ
Հաւատարմութեամբ ձեզ կծանայեմ՝
Եթէ ոչ ուրիշ արժանիքներով:

ԳԼՈՍՏԷՐ

Ես նրա կողմից շնորհակալ եմ:

ԿՈՐՆՎԱԼ

Չգիտե՞ք ինչու ենք եկել ձեզ մօտ:

ՌԵԳԱՆ

Այսքան տարածամ, այս մութ գիշերով
Ուղեորուելով: Ծանր գործեր կան,
Իմ ազնի Գլո՛ստէր, եւ դրանց համար
Մեզ հարկատր են ձեր խորհուրդները:
Հայրս ինձ գրել է, նոյնպէս եւ քոյրս,
Թէ նրանց միջեւ վէճեր են ծագել.
Յարմար չգտայ մեր տնից գրել.
Նրանց պատասխան թղթատարները
Պէտք է այստեղից տանեն պատասխան:
Դէ, մեր ծերունի, ազնի բարեկա՛մ,
Սփոփուէ՛ք հիմա եւ մեզ շնորհէ՛ք
Ձեր խորհուրդները մեր գործի մասին,
Որ պահանջում է անյապաղ վճիռ:

ԳԼՈՍՏԷՐ

Պատրաստ եմ, տիկի՛ն, ձեզ ծառայելու,
Բարի էք եկել:

Դուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Գլոստերի ամբոցի առջեւ
Մտնում են Քէնտը եւ Օսվալդը՝ տարբեր կողմերից:

ՕՍՎԱԼԴ

Բարեւ, բարեկա՛մ: Դու այս տանի՞ց ես:

ՔԷՆՏ

Այո՛:

ՕՍՎԱԼԴ

Ո՞ր կարող եմք տեղատրել մեր ձիերը:

ՔԷՆՏ

Տիղմի մեջ:

ՕՍՎԱԼԴ

Խնդրում եմ, եթե սիրում ես ինձ, աս'ա:

ՔԷՆՏ

Ես քեզ չեմ սիրում:

ՕՍՎԱԼԴ

Իմ էլ շատ հոգն է:

ՔԷՆՏ

Եթե Լիպսբրիի որջում ձեռքս ընկնեիր՝ ես քեզ ցոյց կտայի՝
հոգո՛ւ է, թե ոչ:

ՕՍՎԱԼԴ

Ինչո՞ւ ես նման բան ասում ինձ, ես քեզ չեմ ճանաչում:

ՔԷՆՏ

Իսկ ես քեզ ճանաչում եմ:

ՕՍՎԱԼԴ

Ո՞վ եմ ես, քո կարծիքով:

ՔԷՆՏ

Մի անպիտան, մի սրիկայ, մի պնակալեզ, մի անզգամ գո-
ռոզ, տխմար մուրացիկ, երեք զոյգ հագուստի տեր, բրդե կեղ-
տոտ գուլպայ հագնող սրիկայ, մի երկչոտ, դատի դիմող սրի-
կայ, մի պրոնկի ձագ, հայելու նայող, հաճոյակատար, սեթե-
ւեթ թշուառական, մի սնդուկ ժառանգող ստրուկ, մի մարդ, որ
պատրաստ է կաւատ դառնալ ծառայութիւն մատուցելու հա-
մար, ոչ այլ ինչ՝ եթե ոչ խառնուրդ սրիկայի, մուրացկանի, վա-
տաւրտի եւ կաւատի, մի խառնածին, քած շան ձագ, մի մարդ,

որը եթե ուզենայ մերժել իր այս տիտղոսների թէկուզ ամենա-
փոքրիկ վանկը՝ այնքան կտամ, որ շան պէս կվնգատայ:

ՕՍՎԱԼԴ

Ի՞նչ հրեշտոր մարդ ես եղել դու, որ այսպէս անպատում
ես մէկին, որ ո՛չ քեզ է ճանաչում եւ ո՛չ էլ ծանօթ է քեզ:

ՔԷՆՏ

Ի՞նչ պնդերես անատակն ես դու, որ ուրանում ես ինձ ճա-
նաչելո՞ւ: Երկու օր առաջ չե՞ր, որ քեզ գետին գլորեցի եւ թա-
գաւորի առաջ ծեծ տուի: Սուրդ քաշի՛ր, թշուառակա՛ն, թէեւ
գիշեր է, բայց լուսինը փայլում է, այնպէս անեմ, որ լուսնի
լոյսը միւս կողմիցդ դուրս գայ: Սուրդ դո՛ւրս քաշիր, պոռնկի
ձա՛գ, խայտառա՛կ, սափրիչի ընկե՛ր, սուրդ դո՛ւրս քաշիր: *(Իր
սուրը դուրս քաշելով):*

ՕՍՎԱԼԴ

Հեռացի՛ր, ես քեզ հետ գործ չունեմ:

ՔԷՆՏ

Սուրդ քաշի՛ր, թշուառակա՛ն, դու նամակներ ես բերել թա-
գաւորի դէմ եւ սնափառութեան կուսակից դարձել նրա հօր
վեհափառութեան դէմ: Սուրդ քաշի՛ր, թշուառակա՛ն, եթե ոչ
ոլոքներդ այնպէս կջարդեմ. որ... Սուրդ քաշի՛ր, թշուառա-
կան, պաշտպանուի՛ր:

ՕՍՎԱԼԴ

Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, սպանեցի՛ն:

ՔԷՆՏ

(Մեծելով նրան). Կուուի՛ր, ստրո՛ւկ, դիմադրի՛ր, թշուառա-
կա՛ն, դիմադրի՛ր, ստրո՛ւկ, պաշտպանուի՛ր:

ՕՍՎԱԼԴ

Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, սպանութի՛ն, սպանութի՛ն:

Մտնում եմ Էդմոնդը, Կորնվալը, Ռեզանը, Գլոստերը եւ ծառաներ:

Լոկ այն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ որ
Փշում են հողմերն իրենց տէրերի
Քմահաճոյքի, եւ շների պէս
Ոչինչ չգիտեն, բացի տէրերին
Հետեւելը:
(Օսվալդին):

Թող ժանտախտը լափէ
Սարսափած դէմքդ, դու ծիծաղո՞ւմ ես
Խօսքերիս վրայ, կարծում ես խե՞նթ եմ.
Լսի՛ր, սագի ձա՛գ, եթէ ճանկս ընկնես
Սարումի դաշտում՝ քեզ քարկոծելով
Ես կհալածեմ միմչէ Կամելոտ:

ԿՈՐՆՎԱԼ

Դու խենթ ես, ծերո՛ւկ:

ԳԼՈՍՏԷՐ

Դու մեզ այն ասա՛
Ինչո՞ւ կոռուցիք:

ՔԷՆՏ

Չեն եղել երբէք
Հակառակորդներ այնքան հակադիր,
Որքան ես եւ այս թշուառականը:

ԿՈՐՆՎԱԼ

Ինչո՞ւ ես նրան այդպէս հայհոյում.
Նրա մեղքն ի՞նչ է:

ՔԷՆՏ

Նրա կերպարանքն
Ինձ հաճելի չէ:

ԿՈՐՆՎԱԼ

Ոչ էլ իմն անշուշտ:
(Յոյց տալով Լիմոնդին):

Ոչ էլ սրանը:
(Յոյց տալով Ռեզանին):

Ոչ էլ սրանը:

ՔԷՆՏ

Տէ՛ր, սիրում եմ ես ճշմարիտ խօսել.
Այո՛ տեսել եմ ես ժամանակին
Լաւագոյն դէմքեր, քան թէ տեսնում եմ
Աչքերիս առաջ:

ԿՈՐՆՎԱԼ

Նրանցից է սա,
Որին մի անգամ թէ գովաբանես,
Պարզութեան համար, դրանից լետոյ
Ձեւացնելով միամտութիւն,
Բռնի փոխելով իր արտաքինը՝
Կսկսի կեղծել եւ շողոքորթել.
«Շողոքորթելու նա ընդունակ չէ,
Մի ազնիւ մարդ է, նա ճիշտն է ասում»:
Եթէ ընդունեն, շատ լաւ, եթէ ոչ՝
Ինքը մեղք չունի, նա ճիշտն է ասում:
Մանաչում եմ այս սրիկաներին.
Այս մարդիկ իրենց անկեղծութեան մէջ
Ունեն անելի խորամանկութիւն
Եւ ապականուած պիղծ նպատակներ,
Քան քսան տխմար գլուխ ծողղներ,
Որոնք մի փոքր շատ են մեծարում:

ՔԷՆՏ

(Քաղցր ձայնով):

Տէ՛ր իմ, ճշմարիտ, անկեղծ իսկութեամբ,
Եթէ թոյլ կտայ ձեր մեծութիւնը,
Որի շնորհը այն լուսաճաճանչ
Պսակի նման, որ շողշողում է
Ֆերուսի գլխին...

ԿՈՐՆՎԱԼ

Դու ի՞նչ ես ուզում

Դրանով ասել:

ՔԷՆՏ

Ուզում եմ ոճս փոխել, երբ դա այդքան ձեզ անհաճոյ է: Ես պնդում եմ, տէ՛ր, որ շողոքորթ չեմ: Նա, որ խաբել է ձեզ իր պարզ խօսքերով, պարզապէս մի սրիկայ է եղել: Մի բան, որ ես չեմ կարող լինել, որքան էլ ինձ խնդրէք:

ԿՈՐՆՎԱԼ

(Օսվալդիմ)

Ինչո՞վ ես արդէօք սրան անարգել:

ՕՍՎԱԼԴ

Տէ՛ր, ոչ մի բանով: Քանի օր առաջ Արքան, իր տէրը, թիրիմացութեամբ Ուզեց ինձ խփել, սա էլ նրա հետ, Նրա գայրոյթը շողոքորթելով, Ետեւիցս հրեց եւ գետին գցեց. Երբ գետին ընկայ՝ այնքան հայհոյեց, Այնքան ինձ մրեց եւ քաջ ձեւացաւ, Որ արժանացաւ տիրոջ գովեստին, Յաղթանակելով անձնատուր եղած Մի անօգ մարդու, եւ այսօր կրկին Յիշելով նախկին իր քաջութիւնը՝ Սուր քաշեց վրաս:

ՔԷՆՏ

Չկայ ոչ մէկը

Այս նուաստացած սրիկաներից.
Որ գոռոզութեամբ, ինքնագովութեամբ
Այաքսին անգամ չգերազանցի:

ԿՈՐՆՎԱԼ

Կոճղե՛ր բերեցէք, յամա՛ն սրիկայ,

Մենք քեզ ցոյց կտանք, յարգելի գոռո՛գ...

ՔԷՆՏ

Տէ՛ր, խրատուելու համար ես արդէն
Ծեր եմ բաւական, կոճղեր մի՛ բերէք:
Ես թագաւորի ծառան եմ խոնարհ,
Այստեղ եմ եկել իր հրամանով.
Դուք շատ քիչ յարգանք կյայտնաբերէք
Եւ խիստ յանդուգն չարակամութիւն,
Դեպի՛ իմ տիրոջ անձը վեհափառ՝
Պատժելով նրա նամակաբերին:

ԿՈՐՆՎԱԼ

Բերէ՛ք կոճղերը: Երդում եմ կեանքովս
Եւ պատուիս վրայ՝ դու մի՛նչեւ կեսօր
Այստեղ կնստես:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ, մի՛նչեւ կեսօ՞ր.

Ո՛չ, մի՛նչեւ գիշեր, գիշերն էլ ամբողջ:

ՔԷՆՏ

Տիկի՛ն, թէ ձեր հօր շունն էլ լինէի՛
Չպէտք է ինձ հետ այդպէս վարուէիք:

ՌԵԳԱՆ

Բայց քանի որ դու իր սրիկան ես՝
Այսպէս կվարուես:

Բերում են կոճղերը:

ԿՈՐՆՎԱԼ

Սա այն սրիկայ մարդկանցից է հե՛նց,
Որոնց մասին իմ քոյրը գրել է:
Դէ, շո՛ւտ, կոճղերը բերեցէք այստեղ:

ԳԼՈՍՏԷՐ

Տէ՛ր, աղաչում եմ ձերդ մեծութեան,
Այդ բանը չանել. ծանր է յանցանքը,
Բայց բարի արքան, որ նրա տէրն է,
Կպատժէ նրան այդ մեղքի համար.
Սակայն այդպիսի մի անարգ պատիժ
Արժանի է լոկ ամենից ստոր
Սրիկաներին՝ նրանց գողութեան
Եւ այլ գոեհիկ մեղքերի համար:
Թագաւորն, անշուշտ, կվիրաւորուի,
Երբ այս աստիճան անարգանք կրի՝
Յանձին իր յղած պատգամաւորի,
Որին դուք այսպէս կաշկանդում էք, տէ՛ր:

ՌԵԳԱՆ

Քոյրս աւելի կվիրաւորուի,
Որ անարգուած է իր թիկնապահը,
Ծեծի ենթարկուած լոկ այն պատճառով,
Որ կատարել է իր հրամանը:
Դէ, դրէ՛ք ոտքերը կոճղերի մէջ:

Քէնտի ոտքերը կոխում են կոճղերի մէջ:

(Կորնվալիս)

Ե՛կ, ազնիւ տէ՛րս, գնանք այստեղից:

ԳԼՈՍՏԷՐ

(Քէնտիս)

Ես շատ եմ ցաւում քեզ համար, սակայն
Դուքսի կամքն է այդ, ամէն ոք գիտէ,
Որ յամատ է նա բնաւորութեամբ,
Չի թողնում անգամ, որ մօտից անցնեն,
Կամ հակաճառեն: Սակայն քեզ համար
Ես կմիջնորդեմ:

ՔԷՆՏ

Մի՛ արէք, խնդրեմ.

Ես շատ եմ յոգնել, անքուն մնացել
Ճամփորդութեան մէջ, մի քիչ կքնեմ,
Քիչ էլ կսուչեմ: Լաւ մարդու բախտը
Փոփոխական է: Տէրն ընդ ձեզ, պարո՛ն:

ԳԼՈՍՏԷՐ

Դուքսը այս գործում պարսաւելի է.
Նրա արարքը վատ հետեւանքներ
Կարող է բերել:

Դուքս է գնում:

ՔԷՆՏ

Բարի՛ թագաւոր,

Քո գլխին եկաւ հին ասացուածքը.
Անձրեւից փախար, ընկար ծովի մէջ:

Մոցից մի թուղթ է հանում՝ լուսնի լոյսով սկսում է կարդալ.

Մօ՛տ եկ, ո՛վ լապտեր մեր երկրագնդի,
Որ քո այդ քաղցր ճառագայթներով
Կարդամ այս թուղթը: Հրաշքները միշտ
Պատահում են մեզ թշուառութեան մէջ:
Կորդելիան է այս նամակը գրել.
Բարեբախտաբար նա լուր է առել
Իմ ծպտման մասին: «Իրերի դժբախտ
Այս դրութիւնը առիթ է տալիս
Ինձ ջանք գործ դնել այդ չարիքներից
Մեզ այսուհետեւ փրկելու համար»:
Ո՛վ իմ տաղտկացած, իմ անքուն աչքե՛ր,
Օգո՛ւտ քաղեցէք ձեր յոգնութիւնից,
Որ այս ամօթի վայրը չտեսնէք:
Բախտ, բարի գիշեր, մէկ էլ ինձ ժպտա՛
Եւ մի անգամ էլ շո՛ւտ տուր անիւր:

Քնում է:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Մացառուտ դաշտամաս
Մտնում է Էդգարը:

ԷՂԳԱՐ

Իմ մասին տուած յայտարարութեան
Լուրը լսեցի եւ մի բարեբաստ
Ծառի խոռոչով ճողոպրելով դուրս՝
Ազատուեցի իմ խուզարկումներից:
Զմնաց ազատ մի նաւահանգիստ,
Ոչ էլ ուրիշ տեղ, ուր պահակները
Մի արտասովոր ուշադրութեամբ
Ինձ չխուզարկեն: Եթէ յաջողուի
Խոյս տալ դրանցից՝ եւ ազատուած եմ:
Պէտք է ստանձնեմ այժմ մի գծուծ
Եւ անարգուած ձեւ, որով երբեւէ
Ծպտելով իրեն՝ թշուառութիւնը,
Իբրեւ անարգանք մարդկային ցեղի՝
Մօտեցնում է մարդուն գազանի:
Պէտք է երեսս ցեխով շաղախեմ,
Կողերս ծածկեմ ցնցոտիներով,
Մազերս անեմ գոռոզ ու ճաղանճ
Եւ իմ մերկութեամբ դէմ դնեմ երկնի
Հողմերին եւ սեւ հալածանքներին:
Պէտք է օրհնակ դարձնեմ եւ ինձ
Բեղիւմից ելած մուրացկաններին,
Որոնք շրջում են այստեղ եւ իրենց
Վայրի կանչերով, աղաղակներով
Ասեղներ, գամեր եւ փայտեայ փշեր
Խրում են իրենց անզգայացած,
Մերկ եւ պնդացած բազուկների մէջ
Եւ զարհուրելի այս կերպարանքով
Աղքատ գիւղերից, ազարակներից,
Ջրաղացներից եւ փարախներից

Մերթ լուսնոտային չարամաղթութեամբ,
Մերթ աղօթքներով հաց են ստանում:
Խեղճ Տրլիգուր, խեղճ Տոմ, դուք էլ մի բան էք,
Լոկ ես՝ Էդգարս եմ, ոչինչ ու ոչինչ:

Գուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Գլուստէրի ամրոցում
Մտնում են Լիրը, Խեղկատակը եւ մի ասպետ:

ԼԻՐ

Զարմանալի է, տանից մեկնել են
Եւ ետ չեն յղել նամակատարիս:

ԱՍՊԵՏ

Որքան իմացայ ես, երէկ գիշեր
Նրանք մեկնելու դիտում չունէին:

ՔԷՆՏ

Ողջո՛յն, ազնի՛ւ տէր:

ԼԻՐ

Օ՛հ, այդ ի՞նչ բան է.
Մի՞թէ կատակի համար եւ դու, մա՛րդ,
Այդ ամօթալի դիրքը ընդունել:

ՔԷՆՏ

Ո՛չ, տէ՛ր իմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Հա՛-հա՛-հա՛-հա՛, տես ինչ սուկալի ծնկակապեր է կրում:
Զիերին գլխից են կապում, շներին եւ արջերին՝ վզից, կապիկ-
ներին՝ մէջքերից, իսկ մարդկանց՝ ոտքերից: Երբ մարդու ոտ-

քերը չափազանց ուժեղ են լինում, նրան փայտէ գուլպաներ
են հագցնում:

ԼԻՐ

Ո՞վ արհամարհեց քո աստիճանը
Եւ քո ոտքերին կապանքներ դրեց:

ՔԷՆՏ

Երկումն էլ, տէ՛ր իմ, ձեր ուստրն ու դուստրը:

ԼԻՐ

Ո՛չ:

ՔԷՆՏ

Այո՛:

ԼԻՐ

Ո՛չ, ասում եմ քեզ:

ՔԷՆՏ

Այո՛, ասում եմ:

ԼԻՐ

Ո՛չ, չէին անի:

ՔԷՆՏ

Այո՛, արեւ են:

ԼԻՐ

Երկինքը վկայ, ասում եմ, որ ո՛չ:

ՔԷՆՏ

Երկիրը վկայ, ասում եմ՝ այո՛:

ԼԻՐ

Չեն համարձակուի նման բան անել,

Ո՛չ, չէին կարող, չէին կամենայ:

Առաւել վատ է սպանութիւնից

Նման անարգանք մարդու հասցնել:

Դէ, պատասխանի՛ր ինձ անմիջապէս,

Թէ ինչ պատճառով դու արժանացար

կամ ենթարկուեցիր այդպիսի բախտի,

Դու, որ մեր կողմից առաքուած էիր:

ՔԷՆՏ

Տէ՛ր իմ, երբ հասայ ես նրանց տունը,

Յանձնեցի նրանց ձերդ բարձրութեան

Գրած նամակը: Նախքան կամեցայ

Ծնկաչոք յարգանք մատուցանելու,

Մի քրտնաշաղախ տրհանդակ հասաւ,

Լեզուն ցամաքած եւ կէս շնչասպառ,

Եւ Գոնէրիլի՛ իր մեծ տիրուհու

Անունից նրանց ողջուններ լղեց,

Եւ ընդմիջելով ընթերցումը ձեր

Նամակի, նրանց յանձնեց մի նամակ,

Որ եւ կարդացին նրանք շտապով:

Երբ տեղեկացան գրածին՝ իսկույն

Նրանք կանչեցին ուղեկիցներին

Եւ ձի նստելով՝ սառն ակնարկներ

Նետելով նրանց, մինչեւ հաճեցան

Պատասխան տալ ինձ: Հէնց այդ ժամանակ

Եւ հանդիպեցի այն թղթաբերին,

Որի գալուստը, ինչպէս դիտեցի,

Թունատրել էր յաջողութիւնս՝

Այն մարդուկն էր այդ, որ վերջերս ձեզ

Այնքան անվայել պատասխան տուեց:

Իսկ եւ գտնելով անելի կորով,

Քան թէ խելք իմ մէջ՝ սուրս քաշեցի,

Նա երկչոտաբար, գոռում գոչումով

Տունը լցրեց: Ձեր դուստրը եւ փեսան

Իմ այդ յանցանքը դատապարտեցին

Այս անարգանքին, որ կրում եմ արդ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ձմեռը դեռ չի վերջացել, եթե վայրի բաղերը այդ կողմն են թռչում:

Երբ ցնցոտի հագնի հայրը՝
Ջառակները կկուրանան,
Իսկ երբ ոսկի բերի հայրը՝
Կփայփայեն նրանք նրան.
Երբէք բախտը՝ պոռնիկն այդ չար,
Դուռ չի բանայ խեղճի համար:

Բայց այսուհանդերձ, դու քո սիրելի աղջիկներից այնքան ես ցաւեր քաշելու, որքան դրամ չես էլ կարող հաշուել մի ամբողջ տարում:

ԼԻՐ

Օ՛հ, ինչպէս է այս զգուելի ախտը
Սիրտս գրոհում: Ա՛խտ մոլեգնութեան,
Որքա՛ն ստոր է քո էութիւնը:
Ո՞ւր է այդ դուստրը:

ՔԷՆՏ

Ներսն է՝ կոմսի հետ:

ԼԻՐ

Մի՛ հետեւէք ինձ, մնացէ՛ք այստեղ:

ԳՆՈՒՄ Է:

ԱՍՊԵՏ

Ձե՛ս գործել արդեօք մի ուրիշ յանցանք քո պատմածներից բացի:

ՔԷՆՏ

Ո՛չ: Ինչո՞ւ սակայն այսքան քիչ մարդ կայ թագաւորի հետ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Եթէ միայն այդ հարցիդ համար ոտքերդ կոճղերի մէջ դրած լինեի՛ն՝ արժանի էիր:

ԱՍՊԵՏ

Ինչո՞ւ, Խեղկատակ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Մենք քեզ մրջինի մօտ դպրոց կուղարկենք, որպէսզի քեզ սովորեցնի, որ ձմեռը չեն աշխատում: Ով իր քթին է հետեւում, նա առաջնորդում է իր աչքերով, բացի կոյրերից, եւ քսան քթի մէջ մէկը չկայ, որ չզգայ, թէ ով է գարշահոտ հանում: Երբ մի մեծ անիւ բլուրից վար է գլորում, բա՛ց թող, եթէ ոչ վիզդ կկտորես՝ հետեւելով նրան: Բայց եթէ կայ մի մեծը, որ բլուրից վեր է գնում՝ դու էլ կպիր նրան, որ քեզ էլ հետը վեր տանի: Երբ մի խելացի մարդ քեզ անելի լաւ խորհուրդ տայ՝ ինը ե՛տ տուր ինձ: Ես կուզենայի, որ անպիտան մարդիկ միայն հետեւէին իմ խորհրդին, որովհետեւ խորհուրդ տուողը մի խեղկատակ է:

Ով իր շահին է ծառայում՝
Չար մտքով է հետեւում քեզ:
Հէնց որ գլխիդ անձրեւ տեղայ՝
Նա կփախչի անմիջապէս:
Նա կփախչի թողնելով քեզ
Անձրեւի տակ, մե՛նակ, վհատ,
Բայց խենթը չի փախչի երբէք՝
Խելօքներին թողնելով այդ:
Խենթ է սրիկան, թէ չփախչի,
Սակայն խենթը սրիկայ չի:

ՔԷՆՏ

Որտե՞ղ ես սովորել այդ երգը, խենթո՛ւկ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ոչ կոճղերի մէջ, խե՛նթ:

Մտնում է Լիրը Գլոստերի հետ:

ԼԻՐ

Մերժել՝ ընդունել կամ խօսել ինձ հետ.

Հիանդ եմ, յոգնած. ամբողջ գիշերը
Ճամփայ եմ եկել, սի՛ն պատրուակներ:
Գնա՛ դու, Գլո՛ստեր, եւ բե՛ր ինձ մի այլ,
Ստոյգ պատասխան:

ԳԼՈՍԵՒՐ

Իմ սիրելի տե՛ր,
Քաջ յայտնի է ձեզ մեր դուքսի յամառ
Եւ անդորդուելի բնոյթը: Նա իր
Խօսքը չի փոխում:

ԼԻՐ

Մա՛հ, ժանտախտ, վրե՛ժ.
Ի՞նչ յամառ բնոյթ, ի՞նչ անդորդուելի.
Օ՛, Գլո՛ստեր, Գլո՛ստեր, ես պիտի խօսեմ
Կորնվալի դուքսի եւ իր կնոջ հետ:

ԳԼՈՍԵՒՐ

Բայց, ազնի իմ տե՛ր, ես հաղորդեցի
Նրանց այդ մասին:

ԼԻՐ

Հաղորդի՛ր կրկին,
Հասկանո՞ւմ ես ինձ, ո՛վ մարդ:

ԳԼՈՍԵՒՐ

Այո՛, տե՛ր:

ԼԻՐ

Ա՛հ, թագաւորը ուզում է խօսել
Կորնվալի հետ, սիրելի հայրը
Ուզում է խօսել իր աղջկայ հետ
Եւ ծառայութիւն խնդրել նրանցից.
Գիտեն նրանք այս, ո՛վ իմ կեանք եւ շունչ.
Դուքսը յամա՞ոն է, ասա՛ այդ դուքսին.
Բայց ո՛չ, ո՛չ, դէո ո՛չ... գուցէ հիւանդ է.

Տկարութիւնը միշտ զանց է առնում
Ամէն տեսակի պարտականութիւն,
Որ կապուած է մեր առողջութեան հետ.
Երբ տառապում է մարմինը՝ այնժամ
Տէրը չէ նաեւ մարդկային հոգին.
Նա իր տերը չէ. պէտք է համբերեմ.
Ես բարկացած եմ կոյր զայրոյթիս դէմ.
Անիծեա՛լ վիճակ:
(Նայելով Քէնտին).

Սա այստե՛ղ նստի. նրանց այս գործը
Ինձ համոզում է, որ դուքսի եւ իր
Կնոջ այսպիսի առանձնանալը
Մի խաղ է միայն: Թող անմիջապէս
Վերադարձնեն իմ ծառային ինձ:
(Գլոստերին).

Գնա՛ դուքսի մօտ եւ նրա կնոջ
Եւ ասա՛, որ ես ուզում եմ իսկոյն
Խօսել նրանց հետ, շո՛ւտ, այս վայրկեանի՛ն.
Հրամայի՛ր նրանց դուրս գալ, լսել ինձ.
Եթէ ոչ՝ ինքս կգնամ հիմա
Նրանց դռան մօտ այնպէս բարձրաձայն
Կթմբկահարեմ, որ նրանց քունը
Ընդմիշտ կփախչի:

ԳԼՈՍԵՒՐ

Տե՛ր, ես ուզում եմ

Ամէն բան ձեր մէջ խաղաղ վերջանալ:

Դուքս է գնում:

ԼԻՐ

Ա՛խ, սի՛րստ, լուզուող սի՛րտ: Բայց ո՛չ, հանդարտուի՛ր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Խօսի՛ր սրտիդ հետ, ինչպէս խոհարարուհին էր խօսում
ձկնիկների հետ՝ նրանց ողջ-ողջ խմորի մէջ դնելով. ճիպտով

նա զարկում էր նրանց կատարներին եւ ասում «ցա՛ծ իջէք, թշուառներ՛ր, ցա՛ծ»: Դրա եղբայրն էլ այնքան էր սիրում իր ձիուն, որ նրա խոտին կարագ էր քսում:

Մտնում են Կորնվալը, Ռեգանը, Գլոստերը եւ ծառաներ:

ԼԻՐ

Բարեւ ձեզ:

ԿՈՐՆՎԱԼ

Բարեւ, ձե՛րդ մեծուքին:

Քէնտին արձակում են:

ՌԵԳԱՆ

Ուրախ եմ, արքա՛յ, որ տեսնում եմ ձեզ:

ԼԻՐ

Կարծում եմ, Ռեգա՛ն, որ դու ուրախ ես:
Եւ տեղիք ունեմ այդպէս կարծելու:
Թէ գիտենայի, որ դու ուրախ չես,
Ես պսակալոյձ պիտի լինէի
Մօրդ շիրիմից՝ թողած լինելով
Շնացող մի կին:
(Քէնտին)

Ա՛ն, ազա՞տ ես դու.

Բայց այդ թող մնայ ա՛յլ ժամանակի:
Սիրեցեալ Ռեգա՛ն, քոյրդ շատ փուչն է.
Նա կապեց այստեղ ապերախտութեան
Գիշատիչ անգղը, այստեղ, իմ սրտին:
Հազիւ թէ քեզ հետ խօսել կարենամ.
Դու չես հաւատայ ինչ լկտի ձեռով...

ՌԵԳԱՆ

Խնդրում եմ, տէ՛ր իմ, եղէք համբերո՛ղ,
Աւելի սակայն հաւանական է,

Որ դուք ինքներդ էք անկարող եղել
Գնահատելու նրան, քան նա է
Չանցառու եղել իր պարտքերի մէջ:

ԼԻՐ

Ի՞նչ, ի՞նչ ասացիր:

ՌԵԳԱՆ

Ես չեմ կարծում, տէ՛ր,

Որ իր պարտքը նա զանց առած լինի:
Եթէ պատահմամբ նա զպա՛լ է ձեռ
Թիկնապահների խոնվութիւնը,
Ապա այնպիսի նա հիմքեր ունի
Եւ այնքան լաւ է իր նպատակը,
Որ նա հեռու է ամէն պարսաւից:

ԼԻՐ

Անէ՛ծք իր գլխին:

ՌԵԳԱՆ

Տէ՛ր իմ, դուք ծեր էք.

Ջեր երկար կեանքը հասել է արդէն
Իր ճանապարհի վերջին եզերքին:
Աւելի լաւ է, որ ձեր դեկը դուք
Այժմ այնպիսի մի մարդու լանձնէք,
Որ ձեր վիճակը ձեզնից լաւ գիտէ:
Խնդրում եմ, ուրեմն, որ վերադառնաք
Կրկին նրա մօտ եւ ասէք նրան,
Որ սխալուել էք:

ԼԻՐ

Ես անրո՞ւմ խնդրեմ,

Գիտէ՞ք դա որքան պատիւ կբերէ
Մի ընտանիքի՝ «Սիրելի դստրի՛կ,
Խոստովանում եմ, որ ձերացել եմ,
Ծերերն անպէտք են, ահա ծնկաչոք

(Ծումկ չոքելով).

Աղերսում եմ ձեզ, որ ինձ շնորհէք
Հանգիստ ու ապրուստ»:

ՌԵԳԱՆ

Բաական է, տէ՛ր.

Այդ կատակները անվայել են ձեզ.
Վերադարձէ՛ք իմ քրոջ մօտ:

ԼԻՐ

Երբէ՛ք,

Օ՛, երբէ՛ք, Ռեգա՛ն. նա շքախմբիս
Կէսը կրճատեց, մոայլ հայեացքներ
Նետեց ինձ վրայ եւ օձի լեզուով
Իմ սիրտը խայթեց: Թող երկնի բոլոր
Պատուհասները թափուեն ապերախտ
Այդ գլխի վրայ: Ո՛վ ժանտ խորշակներ,
Փշրեցէ՛ք նրա նուրբ ոսկորները,
Ընդմիջտ խեղանդա՛ս դարձրէք նրան:

ԿՈՐՆՎԱԼ

Ամօթ է, տէ՛ր իմ:

ԼԻՐ

Ո՛վ, թե՛ծ կայծակներ,

Ձեր կուրացուցիչ հուրը ժայթքեցէ՛ք
Արհամարհալից այն աչքերի մէջ,
Խամրեցրէ՛ք նրա գեղեցկութիւնը.
Ո՛վ ճահիճներից ելնող գոլորշիք,
Որ արեգակի շնչով էք եղել,
Ընկճեցէ՛ք նրա հպարտութիւնը:

ՌԵԳԱՆ

Ո՛վ սուրբ աստուածներ, ի՞նչ էլ պիտի դուք
Այդպէս անիծէք, եթէ բորբոքուէք:

ԼԻՐ

Ո՛չ, Ռեգա՛ն, երբէք դու չես ստանայ
Իմ անէծքները:

Ո՛չ, գորովագութ քո բնութիւնը
Երբէք չի տրուի կարծրասրտութեան.
Նրա աչքերը սարսափելի են,
Իսկ քո աչքերը սիրտ են սփոփում,
Նրանք չեն այրում: Դու չէիր կարող
Թշնամի լինել իմ հաճոյքներին,
Կրճատել թիւը իմ շքախմբի,
Կամ ուղղել ինձ բիլլտ եւ կոպիտ խօսքեր,
Կրճատել պարենն ինձ համար տրուած,
Եւ, բոլորից վերջ, քո դուռը փակել
Եւ դուրս թողնել ինձ: Ո՛չ դու լաւ գիտես
Բնութեան պարտքը, հօր երախտիքը,
Կարգ ու կանոնը քաղաքավարութեան,
Դու չես մոռացել թագաւորութեան
Այն կէսը, որ ես պարգեւել եմ քեզ:

ՌԵԳԱՆ

Շատ լաւ, ազնիւ տէ՛ր, անցնենք բուն խնդրին:

Փողեր ներսից:

ԼԻՐ

Ո՞վ իմ ծառային անարգեց այդպէս:

ԿՈՐՆՎԱԼ

Ի՞նչ փողի ձայն է:

Մտնում է Օսվալդը:

ՌԵԳԱՆ

Գիտեմ իմ քոյրն է.

Նա գրել էր ինձ, որ շուտով կգայ:

(Օսվալդին).

Եկա՞ւ տիրուհիդ:

ԼԻՐ

Ահա սրիկայ,

Որի անտեղի հպարտութիւնը
Կախուած է միշտ իր տիրոջ շնորհից.
Դո՛ւրս գնա, ստրո՛ւկ, կորի՛ր իմ աչքից:

ԿՈՐՆՎԱԼ

Դուք ի՞նչ էք ուզում ասել, տէ՛ր արքայ:

ԼԻՐ

Ո՞վ իմ ծառային կոճղի մէջ դրեց.
Յոյս ունեմ, Ռեգա՛ն, որ դու տեղեակ չես:
Այդ ո՞վ է գալիս:

(Տեսնելով ներս մտնող Գոնէրիլին).

Ո՞վ դուք, աստուածներ,

Եթէ սիրում էք ծերունիներին,
Թէ կողմնակից էք դուք որդու հլու
Հնազանդութեան, թէ ծեր էք դուք էլ,
Ապա այս դատին գորաւի՛գ եղէք.
Շանթե՛ր թափեցէք այժմ իր գլխին
Եւ պաշտպանեցէ՛ք իմ իրաւունքը:
(Գոնէրիլին).

Դու չե՞ս ամաչում նայել մօրուքիս,
Օ՛, Ռեգան, ինչպէ՞ս կարող ես բռնել
Դու նրա ձեռքը:

ԳՈՆԵՐԻԼ

Ինչո՞ւ չէ, պարո՛ն,

Ի՞նչ մեղք եմ գործել, մեղք չէ ամէն բան,
Ինչ որ մեղք թուայ անխոհեմութեան,
Կամ տխմար մի ծեր այդպէս անուանէ:

ԼԻՐ

Օ՛, կողեր, պիճդ էք, դեռ դիմանում էք:
Ինչպէ՞ս պատահեց, որ իմ ծառային
Կոճղեր դրեցիք:

ԿՈՐՆՎԱԼ

Ես հրամայեցի.

Բայց նրա գործած լրբութիւնները
Արժանի էին անելի վատի:

ԼԻՐ

Դո՞ւք այդ արեցիք:

ՌԵԳԱՆ

Խնդրում եմ ձեզ, հա՛յր,

Որ եթէ թոյլ էք, թոյլ էլ երեւաք:
Եթէ դուք մինչեւ այս ամսի վերջը
Վերադառնաք եւ մնաք նրա մօտ՝
Ձեր շքախմբի կէսն արձակելով,
Դրանից յետոյ կարող էք գալ իմ
Ապարանքը եւ իմ հիւրը մնալ:
Այժմ տեսնում էք, ես իմ տանը չեմ
Եւ դեռ չեմ տեսել ձեզ ընդունելու
Համար հարկ եղած պատրաստութիւններ:

ԼԻՐ

Ես վերադառնամ կրկին նրա մօտ,
Իմ շքախմբի կէսը արձակած.
Ո՛չ, ես անելի կնախընտրեի
Մերժել ամէն հարկ եւ պայքար մղել
Բունն հողմերի կատաղութեան դէմ,
Լինել գայլերի ընկեր եւ ոռնալ
Սովի եւ քաղցի սուր ճիրաններից,
Քան վերադառնալ... նրա մօտ... կրկին...
Օ՛հ, այն տաքարին Ֆրանսիայի արքան,
Որ իմ անօժիտ աղջկան առաւ,
Ես անելի շուտ կերթամ նրա մօտ,
Կընկնեմ ծնկաչոք իր գահի առջեւ,
Իբր զինակիր թոշակ կմուրամ
Մի ցած եւ անարգ ասպրուտի համար.
Բայց վերադառնալ կրկին նրա մօտ...

Լաւ չէ՞ր աւելի խորհուրդ տայիր ինձ
Լիճեղ մի ստրուկ, բեռնակիր գրաստ
Այս գարշ ծառայի:

Ցոյց է տալիս Օսվալդին:

ԳՈՆԵՐԻԼ

Ինչպէս կամենաք:

ԼԻՐ

Խնդրում եմ, դո՛ւստր իմ, ինձ մի՛ խենթացնի,
Քեզ չեմ ձանձրացնի, դո՛ւստր, մնա՛ւ բարով,
Այլեւս իրար մենք չենք հանդիպի,
Չենք տեսնի իրար, բայց այսուհանդերձ.
Դու իմ մարմինն ես, արիւնը, դուստրը,
Կամ, աւելի շուտ՝ ախտ իմ մարմնի մէջ,
Որ ստիպուած եմ իմը անուանել,
Դու մի պալար ես, ժամտախտի մի խոց,
Մի ուռած պզուկ՝ իմ ապականուած
Արիւնից ելած: Քեզ չեմ կշտամբում,
Թող ամօթը գայ, եթէ կամենայ...
Ես չեմ հրաւիրում: Ես չեմ աղերսում,
Որ շանթարգելը կայծակ տայ գլխիդ,
Եւ ոչ հատուցող դիցուհու մասին
Զրուցում քեզ հետ: Ուղղի՛ր քեզ, եթէ
Դեռ կարող ես դու, եղի՛ր լաւագո՛յն,
Թէ ունես դու կամք. ես կհամբերեմ:
Ես Ռեզանի մօտ կարող եմ մնալ,
Միայն թէ՛ հարիւր իմ ասպետներով:

ՌԵԳԱՆ

Ո՛չ, բոլորովի՛ն, տէ՛ր իմ, ես դեռ
Չէի սպասում, որ ինձ մօտ կգաք.
Ես չեմ հոգացել ձեզ ընդունելու
Կարիքները դեռ: Տէ՛ր, ակա՛նջ դրէք
Քրոջս խօսքերին, դուք ծեր էք, տէ՛ր իմ,
Եւ քոյրս գիտէ, թէ ինչ է անում:

ԼԻՐ

Մի՞թէ վայել է այս ձեռով խօսել:

ՌԵԳԱՆ

Համարձակում եմ ասել, որ այդ՛:
Ի՞նչ, յիսուն ասպետ բաւական չէ՞ դեռ.
Ի՞նչ կարիք ունէք դրանից շատին,
Կամ հէնց այդքանին: Թէ՛ այդ մեծ ծախսը,
Եւ թէ՛ վտանգը ընդդէմ են խօսում
Այդքան մեծ թուի: Ինչպէ՛ս կարող է
Այդպիսի մի հոծ, ստուար բազմութիւն
Ապրել մի տան մէջ երկու հակադիր
Հրամանի ներքոյ. դա շատ դժուար է,
Անգամ՝ անհնար:

ԳՈՆԵՐԻԼ

Եւ ինչո՞ւ, տէ՛ր իմ,

Դուք չէք կամենում, որ ձեզ ծառայեն
Քրոջս կամ իմ ծառաները հէնց:

ՌԵԳԱՆ

Իհարկէ, տէ՛ր իմ, եւ այն ժամանակ
Թէ մէկը ձեր դէմ զանցառու լինէր՝
Մենք կարող էինք եւ պատժել նրան:
Թէ կամենում էք իմ տունը գալ դուք,
Աղաչում եմ ձեզ, որ ձեզ հետ քերէք
(Քանզի ես այժմ վտանգ եմ տեսնում)
Քսանհինգ հոգի. թէ գան աւելի՛
Մերժում եմ տեղ տալ կամ հիւրընկալել:

ԼԻՐ

Բայց ես ձեզ տուի ինչ որ ունէի...

ՌԵԳԱՆ

Եւ ժամանակն էր:

ԼԻՐ

Եւ ձեզ կարգեցի
Իբրեւ պահապան եւ ժառանգ միակ,
Եւ ինձ պահեցի թիկնապահների
Փոքրաթիւ մի խումբ. ի՞նչ, քեզ մօտ գալիս
Այժմ քսանհինգ հոգո՞վ պիտի գամ.
Այդպէ՞ս ասացիր:

ՌԵԳԱՆ

Եւ կրկնում եմ այդ.
Մի հատ անելի եւ չեմ ընդունի:

ԼԻՐ

(Նայելով Գոնէրիլիին եւ Ռեզանիին).
Չար էակները լաւ են երեսում,
Երբ կան անելի վատթար էակներ,
Եւ վատագոյնը չլինելն անգամ
Որոշ աստիճան գովելի է դեռ:
(Գոնէրիլիին).
Եւ քեզ մօտ կգամ, գոնէ յիսունը
Քսանեհինգի կրկնապատիկն է.
Կրկնապատիկ եւ քո սէրն էլ՝ նրա
Սիրոյ մօտ:

ԳՈՆԵՐԻԻԼ

Տէ՛ր իմ, ի՞նչ կարիք կայ հէնց
Քսանեհինգի կամ թէկուզ հինգի,
Որ ձեզ հետեւեն այնպիսի տան մէջ.
Որ շատ անելի սպասարներ
Հրամայուած են ձեզ ծառայելու:

ՌԵԳԱՆ

Այո, ի՞նչ կարիք հէնց մի ծառայի:

ԼԻՐ

Օ՛, ի՞նչ հարկ խօսել կարիքի մասին.

Ամենանուաստ մուրացկաններն իսկ
Իրենց ծայրայեղ աղքատութեան մէջ
Դարձեալ բան ունեն, որ անելորդ է.
Մի՛ք տա բնութեանն անելի, քան այն,
Ինչ նրա համար անհրաժեշտ է:
Մարդու ապրուստը նոյնքան ածան է,
Որքան զագանի ապրուստը, դու մի
Տիկի՛ն ես ահա, եւ եթէ ամբողջ
Քո շուքը տաքուկ հագնելը լինէր.
Դու երբէք կարիք չէիր ունենայ
Այդ պէրձ զգեստին, որ հագնի թէ քեզ
Պատասպարում է եւ տաք է պահում:
Բայց բուն կարիքը... օ՛, դուք, աստուածնե՛ր,
Համբերա՛նք տուէք, իմ բուն կարիքը
Համբերութիւնն է... Աստուածնե՛ր, դուք ինձ
Տեսնում էք ահա, մի խեղճ ծերունի,
Նոյնքան լի վշտով, որքան տարիքով,
Եւ երկուսում էլ նոյնքան տարաբախտ,
Թէ դուք էք դրդում այս աշխիկների
Սիրտը՝ իրենց ծեր եւ զառամ հօր դէմ,
Ինձ մի՛ դարձրէք այնքան անզգայ,
Որ ես հեզութեամբ հանդուրժեմ դրան,
Տոգորեցէ՛ք ինձ ազնիւ բարկութեամբ,
Թող արցունքները, զէնքն այդ կանացի,
Արատ չբերեն առնական դէմքիս.
Օ՛, ո՛չ, դուք անարգ հրէ՛ջ-վհուկներ,
Պէտք է ձեզանից այնպիսի հօօր
Մի վրէժ հանեն, որ արար աշխարհ...
Այնպիսի բաներ ես պիտի անեմ...
Թէ ինչ կլինի, չգիտեմ դեռ ես,
Բայց այդ վրէժը պէտք է, որ դառնայ
Ամբողջ աշխարհի ահ ու սարսափը:
Դուք կարծում էք, թէ ես լա՞ց կլինեմ,
Ո՛չ, լաց չեմ լինի...
Ըստ պատճառ ունեմ ես արտասուելու,
Բայց հազար կտոր թող սիրոս լինի,

Նախքան արտասուեմ: Ո՛վ իմ խեղկատակ.
Ես կխենթանամ:

Դուրս եմ գնում Լիրը, Գլոստերը, Քէնտը եւ Խեղկատակը:

ԿՈՐՆՎԱԼ

Եկէք մերս գնանք:

Մորիկ կլինի:

Մորիկի հեռաւոր ձայն:

ՌԵԳԱՆ

Այս տունը փոքր է, իր շքախմբով

Չի կարող ծերուկն այստեղ բնակուել:

ԳՈՆԵՐԻԼ

Իր յանցանքն է այդ, ինքն իրեն զրկեց
Հանգստութիւնից. այժմ թող տուժէ
Նա իր խեղճութեամբ:

ՌԵԳԱՆ

Ես ուրախութեամբ

Նրան կընդունեմ, բայց՝ ո՛չ մի ծառայ:

ԳՈՆԵՐԻԼ

Իմ միտքն էլ այդ է: Ո՞ր է Գլոստերը:

Գլոստերը կրկին գալիս է:

ԿՈՐՆՎԱԼ

Նա ընկերացաւ ծերուկին, սակայն
Ահա գալիս է:

ԳԼՈՍՏԷՐ

Արքան շատ սաստիկ բարկութեան մէջ է:

ԿՈՐՆՎԱԼ

Բայց ո՞ր է գնում:

ԳԼՈՍՏԷՐ

Նա հրամայեց

Ձի մստել, սակայն չգիտեմ, թե ուր:

ԿՈՐՆՎԱԼ

Աւելի լաւ է իր խելքին թողնել.

Ինքն է իր տերը:

ԳՈՆԵՐԻԼ

(Գլոստերին).

Կո՛մս, երբէք նրան

Չխնդրէք մնալ:

ԳԼՈՍՏԷՐ

Գիշերը, առա՛ղ,

Վրայ է հասնում, եւ ցուրտ հողմերը

Հուզում են ահեղ: Մղոններ հեռու

Այս շրջակայքում ոչ մի ծառ չկայ:

ՌԵԳԱՆ

Օ՛, կո՛մս, կամակոր խենթ մարդկանց համար

Այդ աղէտները պէտք է դաս լինեն:

Դուող փակեցէ՛ք: Նա ունի իր հետ

Յանդուզն մի խումբ, նրանք կարող են

Բորբոքել նրան: Երբ նա ինքը հէնց

Հակուած է մման քայլեր անելու,

Խոհեմութիւնը պատուիրում է սեզ

Երկիւղ ունենալ:

ԿՈՐՆՎԱԼ

(Գլոստերին).

Դուող փակեցէ՛ք:

Մոսկալի՛ գիշեր: Ռեգանի խորհուրդը

Խոհեմ խորհուրդ է: Փախչե՛նք մորիկից:

Դուրս եմ գնում:



ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մի մացառ: Մորիկ՝ որոտի եւ կայծակի հետ
Մտնում են Քէնտը եւ մի ասպետ՝ հանդիպելով իրար:

ՔէՆՏ

Այդ ո՞վ է այդտեղ՝ բացի մորիկից:

ԱՍՊԵՏ

Մէկը, ում հոգին մորիկի պէս է.

Սաստիկ անհանգիստ: -

ՔէՆՏ

Ծանաչում եմ ձեզ, բայց ո՞ր է արքան:

ԱՍՊԵՏ

Կուում է ահեղ տարերքների դէմ.
Հրամայում է հողմին՝ երկիրը
Ձգել ծովի մէջ, կամ բարձրացնել
Ջրերն ատլի, քան թէ ցամաքը,
Որպէսզի ողջը փոխուի, խորտակուի,
Փետում է նա իր ճերմակ մազերը,
Որոնք հողմերը կոյր կատաղութեամբ
Բռնում են, ցրում, ոչնչացնում.

Ծգնում է սրցել ընդհարուող հողմի
Եւ անձրեւի հետ: Նման գիշերում,
Երբ նոյնիսկ արջը՝ ցամաք ծծերով
Փակում է որջում, երբ առիծն անգամ
Կամ քաղցած գայլը, պատառոտում են
Իրենց մուշտակը, նա վազվզում է
Մենակ, գլխաբաց, առանց գլխարկի՝
Հրափրելով ընդհանուր ջնջում:

ՔէՆՏ

Բայց ո՞վ կա հետը:

ԱՍՊԵՏ

Իր խենթը միայն,

Որ աշխատում է իր կատակներով
Փարատել նրա սրտահերձ վիշտը:

ՔէՆՏ

Ձեզ ճանաչում եմ, պարո՛ն, եւ վստահ
Արդէն ունեցած այդ ծանօթութեամբ՝
Համարձակում եմ ձեզ յանձնարարել
Սաստիկ կարեւոր մի ձեռնարկութիւն:
Մի պատակտում կա Ալքանի դուքսի
Եւ Կորնվալի միջեւ, որ նրանք
Թաքցնում են դեռ կեղծիքի ներքեւ.
Բայց նրանք ունեն սպասատրներ
(Ինչպէս ամէն ոք, ում որ իր բախտը,
Մ'եծ դիրք է տուել եւ զաւի իշխանի),
Որոնք Ֆրանսիայի արքայի համար
Հմուտ դիտողներ եւ լրտեսներ են.
Նրանք յայտնել են իրենց տեսածը՝
Դուքսերի ոխը, դատերը գաղտնի
Եւ նրանց անգութ, դաժան վարմունքը
Մ'եր ծերուկ, բարի թագաւորի դէմ:
Դեռ կայ ատլի խորարմատ մի բան,
Որի նշաններն են սրանք գուցէ:

Սակայն Ֆրանսիայից գօրք է արշաում
Այս անմիաբան պետութեան վրայ
Եւ գգուշութեամբ օգուտ քաղելով
Մ'եր թուլութիւնից՝ արդէն մտել է
Մ'եր ամենալաւ նաւահանգիստը,
Եւ շուտով արդէն բացայայտ կերպով
Դրօշ կպարզէ: Լսէ՛ք ուրեմն,
Եթէ կարող էք վստահանալ ինձ՝
Իսկոյն դէպի Դուվր ուղեւորուեցէ՛ք:
Այնտեղ կգտնէք մի անձ, որը ձեզ
Ծատ շնորհակալ կլինի, երբ դուք
Ո՛շտութեամբ պատմէք, թէ թագաւորը
Ինչ անբնական եւ խենթացնող
Տառապանքների է դատապարտուած:
Ես մի բարետոհմ ազնուական եմ
Եւ գիտակցաբար ու վստահութեամբ
Յանձնարարում եմ այս պաշտօնը ձեզ:

ԱՍՊԵՏ

Լա՛ւ, մենք այդ մասին կրկին կխօսենք:

ՔԷՆՏ

Ո՛չ, աւելորդ է, իբրեւ ապացոյց,
Որ այն չեմ, ինչ որ իմ արտաքինն է,
Վերցրէ՛ք ահա այս քսակը ձեզ:
Երբ Կորդելիային տեսնէք (Դուք, անշուշտ,
Կտեսնէք նրան), տուէ՛ք այս օղը,
Եւ նա ձեզ կասի ով է այն անձը,
Որին տակաւին դուք չէք ճանաչում:
Բայց ի՛նչ մրրիկ է... Ես պէտք է գնամ
Գտնեմ արքային:

ԱՍՊԵՏ

Տուէ՛ք ձեր ձեռքը.

Արդեօք այլեւս ասելիք չունէ՞ք:

ՔԷՆՏ

Խօսք՝ շատ քիչ, բայց գործ շատ աւելի կայ,
Քան թէ արուած է: Գտնենք արքային.
Դուք այդ կողմ հիմա գնացէք, ես՝ այս.
Ով առաջ գտնի՝ ձայն տայ միասին:

Զանազան կողմերից դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Բ. ✓

Մացառի մի այլ մասը

Մրրիկը շարունակում է:

Մտնում են Լիբը եւ Խեղկատակը:

ԼԻԲ

Փչեցէ՛ք հողմեր, եւ պայթեցրէ՛ք
Ձեր պտերն հիմա. փչեցէ՛ք հողմեր
Եւ կատաղեցէ՛ք:
Եւ դուք՝ հեղեղներ եւ փոթորիկներ,
Մայթեցէ՛ք, մինչեւ ջրախեղդ անէք
Զանգակատներն ու հողմացոյցներն,
Դո՛ւք, մտքից արագ ծծումբի բոցեր,
Եւ դո՛ւք, կաղնիներ գետնահար անող
Շանթեր, խանձեցէ՛ք գլուխս սպիտակ:
Եւ դո՛ւ, որոտմո՛ւնք ամէն ինչ ցնցող,
Զա՛րկ, հարթեցրո՛ւ հաստ երկրագունդը,
Փշրի՛ր բնութեան կապանքները ողջ,
Կործանի՛ր մէկից բոլոր սերմերը,
Որոնք ծնում են ապերախտ մարդուն:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քն՛ոհ, պալատում օրհնած ջուրն աւելի շատ է, քան այն
անձրեւի ջուրը՝ պալատից դուրս: Տո՛ւն վերադարձիր, քեռի՛,
եւ աղջիկներիցդ ողորմութի՛ւն խնդրիր: Ահա մի գիշեր, որ ո՛չ
յսելօքին է խնայում, ո՛չ անխելքին:

Կայծակ:

ԼԻՐ

(Հայեացքը դէպի երկինք).

Օ՛, գոռա՛ բոլոր քո աղիքներով,

Ժայթի՛ր, հո՛ւր տեղա, անձրեւ ու տարափ:

Անձրե՛ւ, փոթորի՛կ, փայլա՛կ ու կայծա՛կ

Իմ դուստրերը չէք: Դուք մեղաւոր չէք,

Ո՛վ անմեղ տարերք, անսիրութեան մէջ.

Թագաւորութիւն չեմ տուել եւ ձեզ.

Ձեզ չեմ անուանել իմ զաւակները.

Դուք պարտաւոր չէք ինձ հնազանդել,

Թողէ՛ք ուրեմն թափուեն իմ գլխին

Որքան սուկանքներ, որ կամենում էք.

Կանգնում եմ ահա ես՝ ձեր ստրուկը.

Մի հիւանդ, տխուր, անարգուած ծերուկ:

Բայց այսուհանդերձ պէտք է ձեզ կոչեմ

Նուաստ ծառաներ, որ միացրել էք

Երկու չարական աղջիկներին հետ

Ձեր երկնածնունդ լեզէոնները

Մի ծեր գլխի դէմ՝ այսքան սպիտակ:

Օ՛հ, սուկալի՛ է:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ով որ տուն ունի իր գլուխը ծածկելու համար՝ մի լաւ գլխարկ ունի:

Երբ տաքատը տուն գտնի,

Նախքան գլուխն օթեւան,

Թէ՛ տաքատը, թէ՛ գլուխը

Ոջլանոցներ կդառնան:

Երբ կին առնի մի աղքատ,

Նա ոչիլներ կառնի շատ:

Ով որ անի ոտքի մատին,

Ինչ որ պիտի անէր սրտին,

Այս կքաշէ ոտքի կոշտից,

Եւ չի քնի նա իր վշտից:

Որովհետեւ դեռ չի եղել մի գեղեցիկ կին, որ հայելու առջեւ իր դէմքը չծամածոէ:

Մտնում է Քէնտը:

ԼԻՐ

Ո՛չ, ես պէտք է լինեմ կատարեալ համբերութեան օրինակ, էլ ոչինչ չեմ ասի:

ՔԷՆՏ

Ո՛վ է այդտեղ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Մի վեհափառ տէր եւ մի տաքատ, այսինքն մի խելօք եւ մի խենթ:

ՔԷՆՏ

Տէ՛ր իմ, այստե՞ղ էք, գիշեր սիրողներն

Այսպիսի գիշեր չեմ սիրում երբէք:

Չայրացած երկինքն ահաբեկել է

Նոյնիսկ խաւարում բնակուողներին,

Որոնք փակուել են իրենց որջերում:

Իմ ծնուած օրից չեմ տեսել երբէք

Այսպիսի ահեղ լայնասփիւռ կայծակ,

Չեմ լսել նման սուկալի որոտ,

Այսպիսի մոռուչ հողմ ու անձրեւի.

Մարդու բնոյթը չի կարող տոկալ

Նման սուկանքի եւ արհաւիրքի:

ԼԻՐ

Թող աստուածները, որ կուտակել են

Այս սեւ ժխորը մեր գլխի վրայ,

Որոնք են իրենց թշնամիներին:

Դողա՛ դու, թշուա՛ն, որ ունես քո մէջ

Անպատիժ թողած անյայտ ոճիրներ.

Ծածկի՛ր քեզ, ո՛վ ձեռք արինաշաղախ,

Եւ դու ուխտադրո՛ւմ, եւ դու կեղծաւո՛ր,
Դու արտաքինով համեստ շնացո՛ղ,
Եւ դու, անզգա՛ւ, ջարդուփշուր եղի՛ր.
Դու, որ հնարած դիմակի ներքոյ
Դաւեր ես նիւթել մարդու կեանքի դէմ.
Ո՛վ դուք, խորախոր թաքցուած մեղքե՛ր,
Ծեղքեցէ՛ք հիմա ձեր ծածկոցները
Եւ այն սուկալի դատախազներից
Ներո՛ւմ հայցեցէք: Իսկ ես մի մարդ եմ՝
Ոչ թէ կեղեքող, այլ սուկ կեղեքուած:

ՔԷՆՏ

Աւա՛ղ, գլխաբաց, վեհաշուք իմ տէ՛ր,
Այս շրջակայքում կայ փոքրիկ մի հիւղ.
Մարդասէր մի մարդ ձեզ այս մրրիկից
Ապաստան կտայ: Մնացէ՛ք այստեղ,
Կրկին կգնամ այն դաժան տունը,
Առաւել դաժան, քան իր քարերը.
Ուր մի քիչ առաջ ձեզ որոնելիս
Ինձ մուտք չտուին: Նորից կգնամ,
Եւ նրանց ժխտ հիւրասիրութիւնն
Բռնի կստանամ:

ԼԻՐ

Խելքս այլայլում է:

(Խեղկատակին).

Ե՛կ այստեղ, տղա՛ւ, ինչպէ՞ս ես, տղա՛ւ.
Մրսո՞ւմ ես արդեօք, ես էլ եմ մրսում:
(Քէնտին).

Ո՞ր է հիւղն, այ՛ մարդ:
Չարմանալի է կարիքը, երբ մարդ
Չնչին բաներին մեծ յարգ է տալիս:
Տեսնենք քո հիւղը: Դու խե՛ղն, թշուառ խե՛նք,
Կա իմ սրտի մէջ մի մաս տակաւին,
Որ խղճում է քեզ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ով որ գլխում քիչ խելք ունի,
Անձրեւ ու հողմ որքան էլ գայ՝
Նա իր բախտից գոհ կլինի,
Քանզի անձրեւ ամէն օր կայ:

ԼԻՐ

Ծճմարիտ է, տղա՛ւ: (Քէնտին). Դէ եկ, տա՛ր մեզ քո հիւղը:

Լիրն ու Քէնտը դուրս են գնում:

ԽԵՂԿԱՏԱԿ

Սքանչելի գիշեր է, որ կարող է նույնիսկ պոռնիկ կնոջ ջեր-
մը զովացնել: Գնալուց առաջ պէտք է մի մարգարէութիւն
անես:

Երբ տէրտէրներն գործով լինեն ամոքիչ,
Գարեջրրի մէջ ջուր խառնեն երբ որ քիչ,
Իշխանները դերձակներին երբ դաս տան,
Արդար լինի երբ ամենայն դատաստան,
Երբ որ այրեն հերձուածողի փոխարէն
Նրանց, ովքեր պոռնկութիւն արարեն,
Երբ ասպետներն այլեւս պարտք չունենան,
Բամբասողներ երբ աշխարհում չմնան,
Վաշխառուներ երբ աշխարհում չլինեն
Եւ պոռնիկները տաճարներ երբ հիմնեն,
Այնժամ անշուշտ պետութեան մէջ Ալբիոնի
Մեծ շփոթում, իրարանցում կլինի,
Ով որ ապրի՝ նա կտեսնի օր վսեմ,
Երբ որ մարդիկ ոտքով քայլել կսկսեն:

Այս մարգարէութիւնը պէտք է Մերլինը անէր, որովհետեւ
եւ ապրում եմ նրանից շատ առաջ:

Դուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Գլուստերի ամբողջում
Մտնում են Գլուստերը եւ Էդմոնդը:

ԳԼՈՍՏԷՐ

Աւա՛ղ, աւա՛ղ, Էդմո՛նդ, եւ չեմ սիրում այս հակաբնական վերաբերմունքը: Երբ եւ Լիբի աղջիկները հրաման խնդրեցի իրենց հօրը ողորմելու համար, նրանք ինձանից խլեցին իմ սեփական տան իրաւունքը եւ իրենց սիրալիր վերաբերմունքից ինձ ընդմիջտ զրկելու սպառնալիքով արգելեցին, որ մի անգամ էլ նրա մասին չխօսեմ, չբարեխօսեմ, ոչ էլ որեւէ ձեռով նրան օգնեմ:

ԷԴՄՈՆԴ

Չափազանց վայրենի եւ հակաբնական մի բան:

ԳԼՈՍՏԷՐ

Դու լաւ է՝ բան չխօսես: Դուքերի մէջ անհամամայնութիւն կայ, եւ որ անելի վատ է՝ եւ այս գիշեր մի նամակ եմ ստացել. վտանգատր է այդ մասին խօսել: Ես նամակը պահել եմ իմ պահարանում: Այս բոլոր անարգանքների համար, որ թագաւորն այժմ հանդուրժում է, անպատճառ վրէժ կհանուի: Արդէն բանակի մի մասը ցամաք է ելել. մենք պետք է անցնենք թագաւորի կողմը: Ես ուզում եմ որոնել նրան եւ գաղտնի կերպով օգնութիւն հասցնել: Դու գնա՛ դուքսի հետ գրոյց արա, որպէսզի նա չնկատի իմ այս գթասրտութիւնը: Եթէ իմ մասին հարցնի՝ կասես հիւանդ է, անկողին է մտել: Եթէ իմ սեփական աչքերով մահս տեսնեմ, որով արդէն ինձ սպառնացել են, եւ այնուամենայնիւ պետք է օգնեմ իմ թագաւորին, իմ հին տիրոջը: Մի տարօրինակ բան է պատրաստում, Էդմո՛նդ, խնդրում եմ խոսե՛մ եղիր:

Դուքս է գնում:

ԷԴՄՈՆԴ

Այդ գթութիւնը արգելուած է քեզ,
Եւ իսկոյն դուքսին եւ իմաց կտամ,
Կյայտնեմ նաեւ նամակի մասին:
Դա վարձատրութեան արժանի գործ է,
Եւ եւ դրանով պետք է ձեռք բերեմ,
Ինչ որ իմ հայրը կորցնում է արդ:
Այսինքն՝ ամբողջը: Երիտասարդը
Վեր է բարձրանում, երբ ծերն ընկնում է:

Դուքս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Մացառի մի մասը. մի փոքրիկ հիւղ
Մտնում են Լիբը, Քէնտը եւ Խեղկատակը:

ՔԷՆՏ

Այստեղ է, տէ՛ր իմ, ազնիւ տէ՛ր, մտէ՛ք:
Անծածկ գիշերուայ բռնակալութիւնն
Այնքան է դաժան, որ ոչ մի էակ
Չի կարող տոկալ:

Մրրիկը շարունակում է:

ԼԻԲ

Թո՛ղ ինձ:

ՔԷՆՏ

Բարի տէ՛ր,
Նե՛րս մտէք, խնդրեմ:

ԼԻԲ

Մի՞թէ ուզում ես սիրտս պատահել:

ՔԷՆՏ

Աւելի եւս կուզէի, որ իմ սիրտը պատահուէր: Նե՛րս մտէ՛ք, տէ՛ր իմ:

ԼԻՐ

Քեզ խիստ է թուում, որ այս մրրիկը
Ներս է թափանցում մինչ ոսկորներս.
Բայց ուր մեծագոյն մի ցաւ է խրուել,
Փոքրագոյնն այնտեղ անզգալի է:
Երբ խոյս ես տալիս արջից, քեզ եթէ
Փախուստդ ծովի ափը հասցնէ,
Ետ կգաս կրկին արջի բերանը:
Եթէ հանգիստ է հոգիս՝ մարմինը
Քնքուշ է. հոգուս մրրիկն ինձանից
Խլում է ամէն զգացողութիւն,
Բացի այն, որ իմ մէջ է տրոփում:
Ա՛խ, որդիական ապերախտութի՛ւն,
Նոյնը չէր լինի, եթէ բերանս
Կծէր այս ձեռքը, որ նրան միայն
Սնունդ է տանում: Բայց ես կպատժեմ.
Ո՛չ, չեմ ուզում լալ: Այս սէր գիշերով
Ինձ դու՛րս վռնդել: Թափուեցէ՛ք, հոգ չէ,
Ես կհանդուրժեմ: Նման գիշերով...
Ռեզա՛ն, Գոների՛լ, ձեր բարի հայրը,
Որի վեճ սիրտը բաշխեց ամէն ինչ...
Օ՛հ, կարող է մարդ խելքը կորցնել.
Խոյս տամ դրանից. էլ վե՛րջ այդ մասին:

ՔԷՆՏ

Է՛հ, բարի տէ՛ր իմ, նե՛րս մտէ՛ք այստեղ:

ԼԻՐ

Դո՛ւ ներս գնա, դու հոգա քո՛ վրայ.
Այս փոթորիկը արգելում է ինձ
Խորհել այնպիսի բաների մասին,
Որ կարող եմ ինձ աւելի տանջել:

Բայց հոգ չէ, մտնե՛նք:

(Խեղկատակի՛ն)

Նե՛րս մտիր, տղա՛ս: Նախ դո՛ւ ներս մտիր,

Ո՛վ անտուն աղքատ: Հիմա դո՛ւ մտիր:

Պէտք է աղօթեմ եւ ապա քնեմ:

Խեղկատակը մտնում է հիւղը:

Խե՛ղճ, մե՛րկ աղքատներ, ուր էլ որ լինէք,
Սեւ, ժանտ մրրիկից հալածուած, տանջուած,
Ինչպէ՛ս կարող էք ձեր անտուն գլխով
Եւ ձեր սովալլուկ մերկ ստամոքսով
Եւ պատառտուն ցնցոտիներով
Ձեզ պատսպարել այսպիսի օդից:
Օ՛, ես այդ մասին քիչ եմ մտածել.
Դե՛ղ խմիր հիմա, ո՛վ շռայլութիւն,
Կրի՛ր մի անգամ, ինչ որ կրում եմ
Չքաւորները, որ դու էլ թափ տաս
Քո աւելորդը խեղճերի համար,
Եւ ցոյց տաս նրանց գէթ մի աւելի
Ողորմած երկինք:

ԷԴԳԱՐ

(Հիւղի ներսից)

Կանգուն եւ կէս, կանգուն եւ կէս, խեղճ Տո՛մ:

Խեղկատակը սարսափած փախչում է հիւղից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ներս մի՛ մտնիր, քեռի՛, այնտեղ դեւ կայ: Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք:

ՔԷՆՏ

Տո՛ւր ձեռքդ ինձ: Ո՛վ կայ այստեղ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Դեւ է, դեւ է, ասում է՛ անունս աղքատ Տոմ է:

ՔԷՆՏ

(Հիւղի դռան առջեւ)

Ո՞վ ես դու արդեօք, որ մոմոմ ես.
Այդտեղ՝ յարդի մէջ: Առա՛ջ եկ, տեսնեմ:

Մտնում է Էդգարը՝ խեղկատակի հագուստով:

ԷԴԳԱՐ

Հեռո՛ւ, չար ոգին ինձ հալածում է...
Մորենու միջից ցուրտ հողմ է փչում.
Հը՛մ, գնա՛, մտի՛ր սառն անկողինդ
Եւ քեզ տաքացրո՛ւ:

ԼԻՐ

Գու է՞ջ ես տուել
Քո ունեցածը երկու դուստրերիդ
Եւ այս օրն ընկել:

ԷԴԳԱՐ

Ո՞վ մի բան կտայ աղքատ Տոմին, որին չար դելը շրջում է կրակի եւ բոցի, ծանծաղուտի եւ հորձանքի միջով, ճախնի եւ մորուտի վրայով: Նա դանակներ դրեց նրա բարձի տակ, խեղդելու պարաններ նրա նստարանի ներքեւ, մկնդեղ խառնեց նրա ապուրիին, հպարտացրեց նրա սիրտը, նրան ստիպեց կարմիր ձի նստած՝ աշտանակել չորս մատ լայնութիւն ունեցող կամրջի վրայով, որպէսզի բռնի իր ստուերը, որին չար դելը դաւաճան էր ձեւացրել: Աստուած օրհնէ հինգ զգայարաններդ: Տոմը մրսում է, ա՛յ դուդի, դուդի, դուդի... Տէրը քեզ փրկէ՛ փոթորիկներից, չար աստղերից, չարքի զարկից: Ողորմութի՛ւն արէք աղքատ Տոմին, որին տանջում է չար դելը: Հիմա կրունեմ նրան այստեղ, եւ այնտեղ, եւ այնտեղ եւ կրկին այնտեղ եւ այնտեղ:

Մորիկը շարունակում է:

ԼԻՐ

Դուստրե՞րն եմ նրան այս օրը գցել:
Բան չպահեցի՞ր, բոլո՞րը տուիր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ո՛չ, զոնէ մի ծածկոց պահել է իր համար, եթէ ոչ, բոլորս կամաչէինք:

ԼԻՐ

Այժմ այն բոլոր պատուհասները,
Որոնք կախուած են մեր գլխի վերեւ,
Որպէս օրհասանք մարդկանց մեղքերի,
Քո աղջիկների գլխին թող տեղան:

ՔԷՆՏ

Նա աղջիկ չունի:

ԼԻՐ

Մա՛հ քեզ, դաւաճա՛ն...

Ոչինչ չէր կարող հասցնել նրան
Այս նուաստութեան, բացի ապերախտ
Իր աղջիկներից: Մի՞թէ օրէնք է
Այժմ, որ բոլոր վանուած հայրերի
Մարմինը այսքան տառապանք կրի.
Արդար պատիժ է, չէ՞ որ հէնց այդ նոյն
Մարմինն է ծնել այն պեղիկանի
Չար աղջիկներին:

ԷԴԳԱՐ

Պելիկոկը նստել էր Պելիկոկ բլրի վրայ: Հա՛լլու, հա՛լլու,
լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Այս ցուրտ գիշերը մեզ բոլորիս խենթ ու խեղկատակ կդարձնի:

ԷԴԳԱՐ

Զգուշացի՛ր չար դեւից, հնազանդի՛ր ծնողներիդ, խօսքդ
ճի՛շտ պահիր, մի՛ երդուիր, մի՛ մեղանջիր ուրիշ մարդու օրի-
նատր կնոջ հետ, սիրուհուդ մի՛ զարդարիր շքեղ զարդերով:
Տոմը մրսում է:

ԼԻՐ

Դու ո՞վ ես եղել:

ԷԴԳԱՐ

Կանանց ետեւից քարշ եկող մի պարոն, հոգով եւ սրտով
այնքան հպարտ, որ մագերս գանգուր էի դարձնում, ձեռնոց-
ներ էի կրում գլխարկիս մէջ, ծառայում էի սիրուհուս սրտի
տարփանքին եւ նրա հետ միասին կատարում էի խաւարի
գործը, այնքան էի երդում, որքան բառեր արտասանում եւ
բեկանում էի երդումներս գթած երկնի առջեւ. քնում էի ցոփու-
թիւններ հնարելով եւ արթնանում էի, որ դրանք ի կատար
ածեմ, գինին շատ էի սիրում, դրամախաղը՝ սաստիկ, իսկ կա-
նանց խնդրում գերազանց էի տանկից: Սրտով կեղծ, ականջ-
ներով՝ դիրսահաւան, ձեռքով՝ արնաշաղախ, ծուլութեամբ՝
խոզ, գողութեան մէջ՝ աղուէս, անկշտութեան մէջ՝ գայլ, կա-
տաղութեան մէջ՝ շուն, յափշտակութեան մէջ՝ առիծ: Մի՛ թող,
որ կոշիկի ճոճոցը կամ մետաքսի խշշոցը խեղճ սիրտդ կնոջ
գերին դարձնեն: Ոտքդ հեռո՛ւ պահի պոռնկատներից, ձեռքդ՝
կանանց շրջագգեստից եւ գրիչդ՝ վաշխատուի տետրից եւ
ապա, խրոխտացի՛ր չար դեւի դէմ: Փշեճու միջից դարձեալ
ցուրտ հողմ է փչում. ասում է՝ սո՛ւմմ մո՛ւն: Հէ՛յ, նոճնի, Դոլ-
ֆին, որդիս, բաց՝ թող գայ, անցնի:

Մորիկը շարունակում է:

ԼԻՐ

Քեզ համար աւելի լաւ է գետնի տակ պառկած լիճէիր,
քան այդպէս տկլոր շրջէիր մորիկի ներքոյ: Մի՛թէ սա է մար-
դը, մարդ եւ ուրիշ ոչինչ: Լա՛ւ նայեցէք նրան, նա չունի ո՛չ գա-
զանի մորթ, ո՛չ շերամի մետաքս, ո՛չ էլ ոչխարի բուրդ: Ահա

մենք երեք հոգի ենք այստեղ, մենք խարդախուած ենք, դու ես
իսկականը: Անպաճոյճ մարդը ոչինչ է, եթէ ոչ մի այսպիսի
խեղճ, մերկ, երկնդանի անասուն, ինչպէս դու: (*Պատուելով իր
զգեստները*). Դո՛ւրս, դո՛ւրս, պաճուճանքներ, դո՛ւրս, ցա՛ծ
եկէ՛ք իմ վրայից:

ԽԵՂԿԱՍԱԿ

Խնդրեմ, քեռի՛, մի՛ անիր, շատ վատ գիշեր է լողանալու
համար: Մի փոքրիկ կրակն այս ընդարձակ դաշտում կնման-
ւեր մի շնացող ծերուկի ցոփաւէր սրտին, մի փոքրիկ կայծ,
իսկ մարմնի մնացած մասը՝ սառած: Նայի՛ր, ահա մի շրջմո-
լիկ կրակ:

ԷԴԳԱՐ

Սա այն չար դեւ ֆիլիբբերտիշիբետն է, որ սկսում է փայլել.
մայրամուտից լետոյ եւ շրջում է մինչեւ արաղաղի առաջին
կանջը, նա տայիս է մարդու աչքի կատարակտ, շլութիւն եւ
նապաստակի շուրթ, նա է փոտեցնում սպիտակ ցորենը եւ
վճատում աշխարհիս խեղճ արարածներին:

Երեք անգամ սուրբ Վիթուրը
Դաշտ ու անտառ թափառեց
Եւ հանդիպեց Մղձաւանջին,
Որ ինն ընկեր ունէր մեծ,
Հրամայեց, որ հեռանայ,
Երդուեցրեց չար դեւին,
Դէ՛ հեռացի՛ր դու հիմա.
Չքացի՛ր, մի՛ հետեւիր:

ՔԷՆՏ

Ինչպէ՞ս է ձերդ մեծութիւնը:

Մտնում է Գլուստերը՝ ջահը ձեռքին:

ԼԻՐ

Ո՞վ է այդ:

ՔԷՆՏ

Ո՞վ ես, ի՞նչ ես փնտրում:

ԳԼՈՍՏԷՐ

Ովքե՞ր էք այստեղ, ձեր անունները:

ԷԴԳԱՐ

Խեղճ Տոմ, որ ուտում է լողացող գորտ, լարծուն գորտ-
նուկ, պատի խլեզ, ջրի խլեզ. որ իր սրտի կատաղութեան պա-
հին, երբ չար դեղ տանջում է նրան՝ կովի թրիք է ուտում աղ-
ցանի փոխարէն, կուլ է տալիս պատա մուկ կամ սատկած
շուն, խմում է ճախճախտտի կանաչ փրփուր, որ մտրակով
հալածում է տեղից տեղ, ոտքերը կոճղի մէջ են դրում,
պատժում է, բանտարկում է, ունեցել է երեք գոյգ զգեստ.
վեց շապիկ, ձի՝ հեծնելու համար եւ զէնք՝ կրելու համար:

Տոմն ուտում էր միայն մկներ,

Փոքրիկ վայրի կենդանիներ,

Եօթը երկար տարիներ:

Զգուշացի՛ր ինձ հալածողից, հանդա՛րտ կաց, Սմո՛լքին,
հանդա՛րտ, դէ՛:

ԳԼՈՍՏԷՐ

Ի՞նչ, ձերդ մեծութիւնը սրանից լաւ ընկերներ չունի՞:

ԷԴԳԱՐ

Խաւարի իշխանն ազնուական է:

ԳԼՈՍՏԷՐ

Տէ՛ր, մարմինը մեր եւ մեր արինը
Մի՞նչ այն աստիճան ապականուել են,
Որ ծառս են լինում ծնողի հանդէպ:

ԷԴԳԱՐ

Տոմը մրսում է:

ԳԼՈՍՏԷՐ

(Լիթիւն).

Տո՛ւն եկէք ինձ հետ.

Առ ձեզ ունեցած անհուն յարգանքս

Թոյլ չի տալիս ինձ ամէն մի բանում
Լսել ձեր դատերց հրամաններին:
Ինձ հրամայեցին դռները փակել
Եւ թոյլ տալ, որ այս դաժան գիշերը
Խուժէ ձեզ վրայ, բայց, այնուհանդերձ,
Ես յանդգնեցի գալ, որոնել ձեզ
Եւ ձեզ տուն տանել, ուր կգտնէք դուք
Յարկ եւ կերակուր:

ԼԻՐ

(Յոյց տալով Էդգարին).

Թողէք ես առաջ

Այս իմաստունից մի բան հարցնեմ:

(Էդգարին).

Ի՞նչ է որոտման պատճառը:

ՔԷՆՏ

Տէ՛ր իմ,

Ընդունեցէք նախ իր հրաւերը.

Գնանք նրա մօտ:

ԼԻՐ

Թող մի բան ասեմ

Այս թերապեցի ուսումնականին.

Ի՞նչ ուսում ունես:

ԷԴԳԱՐ

Քշել դեւերին, ջարդել ճիւղներ:

ԼԻՐ

Եկէք առանձին ձեզ մի բան ասեմ:

ՔԷՆՏ

(Գլխուէրին).

Կրկին խնդրեցէ՛ք, որ գնայ, տէ՛ր իմ.

Խելքը խառնում է:

ԳԼՈՍԵԷՐ

Նա մեղաւոր չէ.
Իր աղջիկները մահն են ցանկանում.
Ա՛հ, բարի Քէնտը նախագուշակեց
Այս ամէնը... Խեղճ արտոսական մարդ:
Ասում ես՝ արքան խելագարում է.
Ասեմ, բարեկամ, որ ես էլ մօտ եմ
խելագարութեան. ես էլ ունէի
Մի որդի, որին այժմ իմ տոհմից
Ես արտաքսել եմ, նա վերջերս հէնց
Կեանքիս դէմ դաւեց: Բարեկա՛մ, նրան
Շատ էի սիրում, ոչ մի հայր որդուն
Այնքան չի սիրել, որքան ես նրան:
Ծշմարիտն ասեմ՝ այդ կսկիծն է հէնց
Ինձ խելքից հանել: Ի՛նչ գիշեր է այս:

Մորիկը շարունակում է:

(Լիրիկ)

Պաղատում եմ ձեզ, ձե՛րդ մեծութիւն...

Լիր

Ներեցէ՛ք, պարո՛ն, ես պէտք է մնամ
Այստեղ, այս ազնիւ իմաստունի հետ:

ԷԴԳԱՐ

Տոմը մըսում է:

ԳԼՈՍԵԷՐ

(Էդգարիկ)

Նե՛րս գնա, ա՛յ մարդ, այն հի՛ւղը գնա,
Տարացի՛ր այնտեղ:

Լիր

Բոլորս մտնենք:

ՔԷՆՏ

(Ամբողջ ճանապարհը ցոյց տալով).

Այս կողմից, միլո՛րդ:

Լիր

Սա էլ պէտք է գայ,

Ես չեմ բաժանուի փիլիսոփայից:

ՔԷՆՏ

(Գլուստերիկ)

Տե՛ր իմ. տեղի տուէք, թո՛ւլ տուէք իր հետ
Սրան էլ բերի:

ԳԼՈՍԵԷՐ

(Քէնտիկ)

Դրա՛ն էլ բերէք:

ՔԷՆՏ

Դու էլ եկ, ա՛յ մարդ, եկ գնա՛նք մեզ հետ:

Լիր

Գնա՛նք, բարեսիրտ իմ արեւնացի՛:

ԳԼՈՍԵԷՐ

Զգոյ՛ջ, ոչ մի բառ, ոչ մի բառ: Սը՛սս...

ԷԴԳԱՐ

(Երգում է).

Երբ պայագատ Ռոլանդը
Եկաւ այն սեւ բերդի մօտ,
Ասաց՝ թո՛ւ, թո՛ւ, զգում եմ
Բրիտանացու արեան հոտ...

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Գլուստերի ամբողջը
Մտնում են Կորնվալը եւ Էդմոնդը:

ԿՈՐՆՎԱԼ

Այս ամբողջից գնալուց առաջ պէտք է վրէժս հաճեն:

ԷԴՄՈՆԴ

Բայց, միլո՛րդ, ինձ կարող են պարսաւել, որ ես այսպիսով իմ որդիական պարտքը զոհում եմ հաւատարմութեան: Մի բան, որ ինձ սարսափեցնում է, երբ մտածում եմ այդ մասին:

ԿՈՐՆՎԱԼ

Հիմա ես տեսնում եմ, որ եղբայրդ լոկ չար բնատրութիւնից դրդուած չէ, որ ուզում էր իօրն սպանել: Հօր նենգութիւնը անելի եւս գրգռում էր որդու պարսաւելի չարութիւնը:

ԷԴՄՈՆԴ

Որքա՛ն անբախտ եմ, որ պէտք է գղջամ արդար լինելու համար: Ահա այն նամակը, որով ապացուցում է, որ նա գիտակցաբար Ֆրանսիայի շահերին նուիրուած մի կուսակից էր: Օ՛, երկինք, երանի՛ այդ դաւաճանութիւնը կատարուած չլինէր, կամ գէթ ինքս չլինէի այդ մասին յայտնողը:

ԿՈՐՆՎԱԼ

Ե՛կ ինձ հետ դքսուհու մօտ:

ԷԴՄՈՆԴ

Եթէ այս նամակի բովանդակութիւնը ճիշտ լինի, դուք ահագին գործ կունենաք կատարելու:

ԿՈՐՆՎԱԼ

Սուտ թէ ճիշտ, բայց դա՛ քեզ դարձրեց Գլուստերի կոմս: Տեղեկացի՛ր՝ հայրդ որտեղ է, որ կարողանանք հեշտութեամբ բռնել նրան:

ԷԴՄՈՆԴ

(Առանձին). Եթէ ես նրան գտնեմ թագաւորին օգնելիս՝ դա անելի կուժեղացնի կասկածը: (Բարձրաձայն). Ես կշարունակեմ իմ հաւատարիմ ընթացքը, որքան էլ պայքարը մեծ լինի պարտաճանաչութեան եւ հարազատութեան միջեւ:

ԿՈՐՆՎԱԼ

Ես կատարեալ վստահութիւն կտածեմ դէպի քեզ, եւ դու իմ սիրոյ մէջ կգտնես մի անելի սիրող հայր:

Գուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Սենեակ մի ազարակի տան մէջ
Մտնում են Գլուստերը, Լիրը, Քէնտը, Խեղկատակը, Էդգարը:

ԳԼՈՍՏԷՐ

Այստեղ անելի լաւ է, քան բաց երկնքի տակ, գոհութեամբ ընդունեցէք այս պատսպարանը: Ես կաշխատեմ անելացնել, ինչ որ կարող եմ եւ յարդարել մի հանգիստ բնակարան: Իսկոյն կվերադառնամ ձեզ մօտ:

Գուրս է գնում:

ՔԷՆՏ

(Գլուստերին). Նրա մէջ առողջ դատողութիւնը տեղի է տունել յուսահատութեան առաջ: Թող աստուածները վարձատրեն ձեր բարեսրտութիւնը:

ԷԴԳԱՐ

Ֆրատերէտսօն ինձ կանչում է եւ ասում է, թէ Ներոնը գորտ է որսում դժոխքի վարար լճում: Աղօթի՛ր, անմե՛ղ, եւ գգուշացի՛ր չար դէպից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Խնդրեմ, քեռի՛, ասա՛ ինձ՝ խելագարն ազնուակա՞ն է, թե՞
նամիկ:

ԼԻՐ

Թագաւո՛ր է, թագաւո՛ր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ո՛չ, ուսմիկ է, որ մի ազնուական որդի ունի, որովհետեւ
խելագար է այն ուսմիկը, որ իր որդուն իրենից առաջ ազնուա-
կան է դարձնում:

ԼԻՐ

Ա՛յս, հագար, հագար դժմի հոգիներ,
Թե՛ժ շամփուրներով եւ շվշվոցով
Տանջե՛րն նրանց:

ԷՂԳԱՐ

Ա՛յս այն չար դեւը մէջքս կծում է:

ԽԵՂԿԱՏԱԿ

Խենթ է՛ ով որ հաւատ է ընծայում գայլի հեզութեանը, ձիու
սմբակներին, պատանու սիրոյն կամ պոռնիկի երդումին:

ԼԻՐ

Դէ, վճռուած է՛ նրանց ուղղակի
Դատի կկանչեն:
(Էդգարին)

Հմո՛ւտ դատաւոր:

(Խեղկատակին)

Իսկ դու, իմաստո՛ւն, եկ, այստե՛ղ բազմիր:
Հիմա դո՛ւք եկէք, դո՛ւք, էգ աղուէսներ:

ԷՂԳԱՐ

Տե՛ս, ինչպէս կանգնած աչքերն է ոլորում: Աչքո՞վ ես
անում մարդկանց դատի ժամանակ, տիկի՛ն:

Եկ ինձ մօտ, Բէ՛սի, անցի՛ր գետակից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա մակոյկը ծակ ունի տակից,
Եւ նա չի կարող պատճառը լայտնել,
Թէ ինչու քեզ մօտ չի կարող անցնել:

ԷՂԳԱՐ

Չար դեւն աղբատ Տոմին հալածում է տխակի ձայնով:
Հոպրանը ճչում է Տոմի փորի մէջ, եւ երկու սպիտակ ձուկ է
ուզում: Մի՛ կոնչա, սե՛ւ հրեշտակ, ես քեզ համար ուտելիք
չունեմ:

ՔԷՆՏ

(Լիթին)

Ինչպէ՞ս էք, տէ՛ր իմ: Մի՛ կանգնէք այդպէս
Ապշած, շուարած, պառկեցէ՛ք այստեղ,
Այս բարձի վրայ քիչ հանգստացէ՛ք:

ԼԻՐ

Նախ պէտք է տեսնեն ես դատաստանը
Նրանց. կանչեցէ՛ք, դէ, վկաներին:
(Էդգարին)

Դու արդարութեան զգեստաւոր մա՛րդ,
Նստի՛ր քո տեղը:
(Խեղկատակին)

Դո՛ւ, նրա ընկե՛ր եւ պաշտօնակի՛ց,
Նստի՛ր նրա մօտ:
(Քէնտին)

Դուք էլ նստեցէ՛ք, իբր մի անդամ
Այս դատարանի:

ԷՂԳԱՐ

Թող արդար դատենք.

Ո՛վ ուրախ հովիւ, քնե՞լ ես արդեօք,
Թէ՞ արթուն ես դու.

Քո ոչխարները շրջում են արտում,
Բայց բաւական է, որ փչես քնքու՛շ՝

Վտանգից նրանք կազատուն անշուշտ:
Փը՛ռո. կատուն գորշ է...

ԼԻՐ

Առաջ սրա՛ն խաչեցէք, սա Գոնէրիւն է: Ես երդուելով
վկայում եմ, որ նա քացիով խփեց իր հօրը՝ թագաւորին:

ԽԵՂԿԱՏԱԿ

Առա՛ջ եկէք, տիկի՛ն. ձեր անունը Գոնէրի՞ւն է:

ԼԻՐ

Նա չի կարող այդ ուրանալ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ներողութիւն, ես ձեզ մի նստարան կարծեցի:

ԼԻՐ

Ահա եւ միւսը, որի չար աչքերն
Յայտնում են, թէ սիրտն ինչ խմորից է:
Կանգնեցէ՛ք այդտեղ, զէ՞նք. զէ՞նք, սո՛ւր, կրա՛կ.
Այստե՞ղ էլ կաշառք: Դու, կեղծ դատաւո՛ր,
Ինչո՞ւ թոյլ տուիր, որ նա խուսափի:

ԷԴԳԱՐ

Օրհնուին քո հինգ զգալարանքը:

ՔԷՆՏ

Օ՛, ցաւալի է: Ո՞ւր է, տէ՛ր արքայ,
Ձեր այնքան սիրած համբերութիւնը,
Որով շարունակ պարծենում էիք:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Վախենում եմ, որ կարեկցութիւնից
Արցունքներս ահա կսկսեն յորդել
Եւ փշացնել դէմքիս դիմակը:

ԼԻՐ

Փոքրիկ շնիկներն ամբողջ երամով
Հաշում են վրաս...

ԷԴԳԱՐ

Տոմն իր գլուխը կգցի նրանց առաջ. դո՛ւրս կորէք, դո՛ւրս.
քոստ շնէ՛ր:

Սեւ լինէք, թէ սպիտակ,
Կամ կծելու ընդունակ,
Գամփո, մետիս մի քոստ,
Որսկան, բարակ, թէ քոքոթ,
Անպոչ լինէք, թէ պոչոտ,
Կվնգատաք Տոմի մօտ:
Գլուխս ձեզ կնետեմ
Եւ կփախչէք չորեքոտ:

Դուդի՛, դուդի՛, հա՛յդէ, քայլենք դէպի տօնավաճառներ
Եւ շուկայ ունեցող քաղաքները: Խե՛ղճ Տոմ, եղջիրդ դն-
տարկ:

ԼԻՐ

Ուրեմն թող անդամահատեն Ռեզանին եւ տեսնեն, թէ ի՛նչ
կայ նրա սրտի մօտ: Արդեօ՞ք կայ մի բնական պատճառ, որ
այդ սրտերն այդպէս կարծրացնում է: (Էդգարին). Ձեզ, պա-
րո՛ն, ես ընդունում եմ իմ հարիւրեակի մէջ. միայն թէ չեմ սի-
րում ձեր հագուստի ձեւը: Գուցէ դուք կատէք, թէ դա Պարս-
կաստանի տարազ է, բայց լաւ կլինի, որ փոխէք:

ՔԷՆՏ

Դէ, ազնիւ տէ՛ր, պառկեցէ՛ք այստեղ եւ մի քիչ հանգստա-
ցէք:

ԼԻՐ

Աղմուկ մի՛ հանէք, մի՛ աղմկէք, վարագոյրները քաշէ՛ք.
այսպէս, այսպէս, այսպէս, առաւօտեան մենք կընթրենք: Այս-
պէս, այսպէս, այսպէս:

ԽԵՂԿԱՏԱԿ
Իսկ ես անկողին կմտնեմ կէսօրին:

Կրկին մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԷՐ

Այստե՛ղ եկ, բարեկամ, ո՞ր է թագաւորը, իմ տերը:

ՔԷՆՏ

Այստե՛ղ է, տէ՛ր իմ, բայց մի՛ անհանգստացրէք նրան,
նրա խելքը թռել է:

ԳԼՈՍՏԷՐ

Խնդրեմ, բարեկա՛մ, պահպանի՛ր նրան.
Ծածուկ լսեցի, որ դաւ եմ նիւթում
Նրա կեանքի դէմ: Այստեղ կայ ահա
Մի փակ պատգարակ. դի՛ր նրան այնտեղ
Եւ տար մինչեւ Դուվր, ուր դու կգտնես
Հիրընկալութիւն եւ պաշտպանութիւն:
Փրկի՛ր տիրոջդ. թէ կէս ժամ անգամ
Ուշանաս՝ էլ քեզ եւ ոչ էլ նրան,
Եւ ոչ էլ նրա պաշտպանողներին
Փրկութիւն չկայ. վերցրո՛ւ նրան,
Դէ շո՛ւտ, վերցրո՛ւ եւ հետեւի՛ր ինձ.
Ես իսկոյն կտամ քեզ այլ պիտոյքներ:

ՔԷՆՏ

Յոգնած բնութիւնն անգօր քնած է,
Գուցէ այս նիւջը բալասան լինի
Քո այդ խորտակուած գիտակցութեանը,
Բայց թէ դէպքերը քունդ խանգարեն՝
Բժշկութիւնը դժուար կլինի:
(Խեղկատակին).
Ե՛կ, օգնի՛ր դու էլ՝ տիրոջդ տանեմք:
Դու էլ պէտք է գաս:

ԳԼՈՍՏԷՐ

Դէ, եկէ՛ք գնանք:

Դուրս են գնում՝ տանելով թագաւորին:

Է.Դ.ԳԱՐ

(Մենակ).

Երբ տեսնում ենք մենք, որ մեր մեծերը
Նոյն ցաւերն ունեն, էլ չենք մտածում,
Որ մեր վշտերը անտանելի են.
Ով որ մենակ է թշուառութեան մէջ,
Առաւել ես տառապում է նա՝
Տեսնելով շուրջը բարեբախտների,
Վառ երջանկութիւն, որ իր համար չէ.
Բայց շատ ցաւերի յաղթում է հոգին,
Երբ նրա վիշտը ընկերներ ունի:
Որքա՛ն իմ վիշտը թեթեւ է այժմ
Եւ հանդուրժելի, երբ տեսնում եմ ես,
Որ նոյնը, ինչ ինձ ստիպում է արդ,
Իմ մէջքը ծռել, թեքում է մէջքը
Նաեւ այս բարի, խեղճ թագաւորի:
Նա թշուառ հայր է, ես՝ թշուառ որդի:
Տո՛մ, գնա՛ այժմ եւ ուշքդ լարի՛ր
Մեծ աղմուկներիս: Եւ այն ժամանակ
Յայտնուի՛ր նորից, երբ կեղծ կարծիքը,
Որ քեզ ստութեամբ վարկաբեկել է,
Քո անմեղութեամբ վերադարձնէ
Անկեղծ պատիւդ: Թող ինչ որ կուզէ
Լինի այս գիշեր, միայն թէ արքան
Խոյս տալ կարենայ այս փորձանքներից:
Թաքնուե՛նք, տեսնե՛նք:

Դուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Է.

Գլուստերի ամրոցը

Մտնում են Կորնվալը, Ռեգանը, Գոնեթիլը, Էդմոնդը եւ սպասաւորներ:

ԿՈՐՆՎԱԼ

(Գոնեթիլին). Ծտապեցէ՛ք իսկոյն ձեր ամուսնու մօտ, ցո՛ւց տուէք նրան այս նամակը. Ֆրանսիայի բանակն արդէն ցամաք է դուրս եկել: (Ծտաւաներին). Փնտրեցէ՛ք այն դաւաճան Գլուստերին:

Մի քանի ծառաներ դուրս են գնում:

ՌԵԳԱՆ

Իսկոյն կախեցէ՛ք նրան:

ԳՈՆԵԹԻԼ

Աչքե՛րը հանեցէք:

ԿՈՐՆՎԱԼ

Դուք լանձնեցէ՛ք նրան իմ բարկութեանը: Էդմո՛նդ, ուղեկի՛ց եղէք մեր քրոջը: Յարմար չէ, որ դուք տեսնէք այն պատիժները, որ մենք պարտաւոր ենք տալ ձեր դաւաճան հօրը: Խորհո՛ւրդ տուէք դուքսին, որի մօտ էք գնում, որ ամենայն փութով պատրաստութիւն տեսնի. մենք էլ պատրաստ ենք նոյնը անելու: Մեր սուրհանդակները պէտք է արագաշարժ լինեն եւ մեզ իրարից լուր հասցնեն: Գնա՛ք բարով, սիրելի քո՛յր: Գնա՛ք բարով, միլորդ Գլո՛ստեր:

Մտնում է Օսվալդը:

Ի՞նչ լուր կայ, ո՞ւր է թագաւորը:

ՕՍՎԱԼԴ

Տէ՛ր,

Միլորդ Գլուստերը նրան այստեղից

Հանել է տուել: Իր երեսունհինգ Ասպետների հետ եւ մեր միլորդի Ծառաների հետ իրար միացած՝ Բոլորը միասին Դուվր գնացին, Ուր, հոխորտում են, որ պիտի գտնեն Ջինեալ օգնութիւն:

ԿՈՐՆՎԱԼ

Ջինը բերել տուր

Տիրուհուդ համար:

ԳՈՆԵԹԻԼ

Գնա՛ք բարով, դո՛ւքս իմ,

Գնա՛ք բարով, իմ քո՛յր:

Գոնեթիլը եւ Էդմոնդը դուրս են գնում:

ԿՈՐՆՎԱԼ

Գնա՛ւ բարով, Էդմո՛նդ.

Գնացէ՛ք, բերէ՛ք այդ նենգ Գլուստերին: Թէւերը կապէ՛ք մի գողի նման, Բերէ՛ք մեր առջեւ: Թէւ չենք կարող Մենք առանց դատի ձեռք զարկել կեանքին, Բայց թող խոնարհուի իշխանութիւնը Մեր ցասման առջեւ, որը պարսաւել կարող են մարդիկ, սակայն ոչ սանձել: Ո՞վ, դաւաճա՞նն է:

Ներս են գալիս ծառաները՝ բերելով Գլուստերին:

ՌԵԳԱՆ

Ապերախտ շո՞ւնն է:

ԿՈՐՆՎԱԼ

Ամուր կապեցէ՛ք այդ չոր թէւերը:

ԳԼՈՍԵԼՐ

Ի՞նչ էք կամենում, ձե՛րդ բարձրութիւն.
Ո՛վ բարեկամներ, խորհեցէ՛ք գոնէ,
Որ դուք իմ հիւրն էք, մի՛ անպատուէք ինձ,
Իմ բարեկամներ:

ԿՈՐՆՎԱԼ

Կապեցէ՛ք իսկոյն:

Գլոստերին կապում են:

ՌԵԳԱՆ

Պի՛նդ, պի՛նդ կապեցէ՛ք, օ՛, պիղծ դաւաճան:

ԳԼՈՍԵԼՐ

Անողո՛րմ տիկին, ես դաւաճան չեմ:

ԿՈՐՆՎԱԼ

Կապեցէ՛ք նրան այս բազկաթողին,
Շո՛ւն, դեռ կտեսնես...

Ռեզանը փետում է նրա մօրուքը:

ԳԼՈՍԵԼՐ

Երկի՛նքը վկայ,

Անազնի գործ է մօրուքս փետել:

ՌԵԳԱՆ

Այսպէս սպիտակ եւ այսպէս մատնի՛չ:

ԳԼՈՍԵԼՐ

Չարասի՛րտ տիկին, իմ այս մազերը,
Որ իմ կզակից փետում ես այսպէս,
Կկենդանանան՝ կմեղադրեն քեզ:
Ձեր հիւրընկալն եմ. գողի ձեռքերով
Պէտք չէ գզէիք հիւրասէր դէմքս:
Ի՞նչ էք կամենում:

ԿՈՐՆՎԱԼ

Դէ սաս՛, ո՛վ մարդ,

Ի՞նչ նամակներ են. որ ստացել ես
Քո Ֆրանսիայից:

ՌԵԳԱՆ

Մի՛շտ պատասխանիր,

Քանզի մենք գիտենք ճշմարտութիւնը:

ԿՈՐՆՎԱԼ

Եւ ի՞նչ կապ ունես մատնիչների հետ,
Որ այս վերջերս ցամաք են ելել
Այս պետութեան մէջ:

ՌԵԳԱՆ

Որոնց մօտ արդէն

Դու ուղարկել ես ցնդած արքային:
Խօսի՛ր:

ԳԼՈՍԵԼՐ

Մի նամակ ստացել եմ ես,

Եւ կան նրա մէջ կարծիքներ միայն,
Այն էլ մի անձից, որ չէգոք մարդ է
Եւ ոչ թշնամի:

ԿՈՐՆՎԱԼ

Նենգութի՛ւն:

ՌԵԳԱՆ

Կեղծի՛ք:

ԿՈՐՆՎԱԼ

Ո՞ւր ուղարկեցիր արքային դու:

ԳԼՈՍԵԼՐ

Դուվր:

ՌԵԳԱՆ

Ինչո՞ւ համար Դուվր, քեզ չարգելեցի՞՞ն...

ԿՈՐՆՎԱԼ

Ինչո՞ւ համար Դուվր, առաջ ա՛յդ ասա:

ԳԼՈՍՏԷՐ

Կապուած մի ցցի՝ պէտք է պաշտպանուեմ
Մի ողջ ռիմակից...

ՌԵԳԱՆ

Ինչո՞ւ համար Դուվր:

ԳԼՈՍՏԷՐ

Օ՛, որովհետեւ չուզեցի տեսնել,
Որ քո անողորմ այդ եղունգները
Փորեմ ծերուկի խղճուկ աչքերը:
Որ վայրագ քոյրդ կատուի ժանիքներ
Զմխեւ այն սուրբ, օծեալ մարմնի մէջ:
Օ՛, ինչ մորիկ էր (եւ նա գլխաբաց
Դժոխքի պէս սեւ այդ գիշերուայ մէջ՝
Հանդուրժեց դրան), այնպիսի մորիկ,
Որ ծովն ուզում էր կարծես բարձրանալ՝
Ջրահեղձ անել բոլոր աստղերի,
Այնինչ, խեղճ ծեր սիրտ, ինքն էլ երկնքին
Օժանդակում էր, որ յորդ անձրեւի:
Եթէ գայլերը այդ ժանտ ժամանակ
Գային, ոռնային քո դուռն առաջ՝
Կասէիր՝ «Դէ բա՛ց, բա՛րի դոճապան»,
Եւ բոլոր ուրիշ անողորմները
Տեղի կտային: Օ՛, պէտք է տեսնեմ
Արդար վրէժը, երբ նա խոյանայ
Ձեր նման անգութ դուստրերի վրայ:

ԿՈՐՆՎԱԼ

Դու այդ չես տեսնի: Տղե՛րք, աթոռը

Ամո՛ւր բռնեցէք: Պէտք է կոխտեսնեմ
Ես այդ աչքերը:

Գլոստերին պատկեցնում եմ գետնին, եւ նա կրունկներով
կոխտում է մի աչքը, դուրս է հանում:

ԳԼՈՍՏԷՐ

Ով որ յոյս ունի ծերութեան հասնել,
Օգնութեան թող գայ: Անգո՛ւրթ: Անաստուա՛ծ:

ՌԵԳԱՆ

Մէկը ծաղրում է միսին, միսն էլ:

ԿՈՐՆՎԱԼ

Եթէ դու տեսնես վրէժխղորութիւն...

ՄԻ ԾԱՌԱՅ

Կա՛նգ առէք, միլո՛րդ, իմ մանկութիւնից
Ծառայել եմ ձեզ, քայց դեռ չեմ արել
Աւելի վսեմ մի ծառայութիւն.
Քան ստիպելով, որ դուք այդ չանէք:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ ասել է, շո՛ւն:

ԾԱՌԱՅ

Թէ ունենայիր

Մօրուք կգակիր՝ այնպէս ցնցէի...
Այդ ի՞նչ ես անում...

ԿՈՐՆՎԱԼ

Ստորո՛ւկ, շո՛ւն:

Սուրը քաշելով՝ յարձակում է ծառայի վրայ:

ԾԱՌԱՅ

Լաւ, որ այդպէս է. դէ եկ ու փորձի՛ր
Բարկութեան բախտը:

Մեծամարտում եմ, Կորնվալն ընկնում է:

ՌԵԳԱՆ

(Մի այլ ծառայի).

Տո՛ւր ինձ քո սուրը,
Մի ստրուկ այսքան յանդուգն լինի:

Ետեւից մօտենալով՝ սպանում է ծառային:

ԾԱՌԱՅ

Օ՛րհ, սպանուեցի: Միլո՛րդ, ձեզ մնաց
Մի աչք, որ տեսնէք այն պատուհասը,
Որ իջնելու է դեռ նրա գլխին:

ԿՈՐՆՎԱԼ

Որ էլ չտեսնի՝ թող առաջն առնենք:

Միս աչքն էլ է հանում:

Դո՛ւրս, անարգ ծնո՛ւնդ, այժմ ո՞ւր է փայլդ:

ԳԼՈՍՏԷՐ

Ամէն ինչ խաւար եւ անյուսութիւն:
Ա՛խ Էդմո՛նդ, որդիս, ո՛վ Էդմոնդ, վառի՛ր
Բոլոր կայծերը քո բնութեան մէջ,
Որ վրէժն հանես այս անգութ գործի:

ՌԵԳԱՆ

Դո՛ւրս կորիր, մատնի՛չ, կանչում ես մէկին,
Որ ատում է քեզ. նա է մեզ յայտնել
Քո մատնութիւնը, նա խիստ բարի է
Քեզ անաններին խղճալու համար:

ԳԼՈՍՏԷՐ

Խելագարութի՛ւն, ուրեմն Էդգարը
Անմեղ է եղել...

Բարի աստուածներ, Աերեցէ՛ք ինձ այդ
Եւ տուէ՛ք նրան բարեբախտութիւն:

ՌԵԳԱՆ

Դէ իսկոյն նրան դո՛ւրս վոնդեցէք,
Թող հոտոտելով այժմ մինչէ: Դուվր
Ծանապարհ փնտրէ: Բայց ի՞նչ է, միլո՛րդ,
Ի՞նչու ձեր դէմքը փոխում է այդպէս:

ԿՈՐՆՎԱԼ

Վերք եմ ստացել, ինձ հետ եկ, տիկի՛ն.
Դո՛ւրս վոնդեցէք այդ սրիկային,
Աղբի՛ մէջ նետէք այդ ծեր ստրուկին,
Ռեզա՛ն, արիւնս շատ յորդ է հոսում,
Ծատ անժամանակ եղաւ այս վերքը.
Տո՛ւր ինձ բազուկդ:

Դուրս է գնում՝ յենուած Ռեզանին:
Ծառաները Գլոստերին դուրս են տանում:

Բ. ԾԱՌԱՅ

Թէ բարի լինի այդ մարդու վերջը՝
Ես չեմ վախենայ ամէն տեսակի
Մեղքեր գործելուց:

Գ. ԾԱՌԱՅ

Եթէ այդ կինը
Երկար կեանք տեսնի եւ վերջը մեռնի
Ծերութեան մահով՝ էլ բոլոր կանայք
Հրէշ կդառնան:

Բ. ԾԱՌԱՅ

Հետեւե՛նք կոմսին եւ գնանք փնտրե՛նք
Բեղիամի խենթին, որ նրա համար
Ուղեցոյց լինի՝ դէպի ուր կուզէ:

Գ. ԾԱՌԱՅ

Դու գնա՛, իսկ ես մի զգեստ գտնեմ
Եւ մի քանի հատ ձուի սպիտակուց՝
Խեղճի արիւնոտ երեսի համար:
Երկի՛նքը նրան օգնական լինի:

Զանազան կողմերից դուրս են գնում:



ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Բաց դաշտ
Մտնում է Էդգարը:

ԷԴԳԱՐ

~~Դարձեալ այս է լաւ՝ ապրել սեփական
Կամքով՝ կրելով հոգս ու անարգանք,
Քան միջավայրում շողոքորթների
Քարշ տալ եղկելի գոյութիւն յաւէտ:
Բախտից անարգուած ամենից ստոր
Արարածն անգամ դեռ մի յոյս ունի
Եւ ապրում է դեռ երկիրից ազատ:
Թէ կայ ողբալի մի փոփոխութիւն՝
Երջանիկների համար է դա լոկ,
Դժբախտը չունի եւ ոչ մի պատճառ
Սարսելու քախտի փոփոխութիւնից:
Ուրեմն ողջո՛յն քեզ, հո՛ղմ անպտուղ,
Այն չքատորը, որին քշելով
Դու թաւալեցիր անլուսութեան մէջ
Եւ պարտք չմնաց քո մրրիկներին:
Բայց ո՞վ է գալիս:~~

Մտնում է Գլուստէրը՝ մի ծերունու ուղեկցութեամբ:

Հա՛յրս... Այնքան խեղճ մի ուղեկցի հետ:

Բ. ԾԱՌԱՅ
Հետեւենք կոմսին եւ գնանք փնտրենք
Բէդլամի խենթին, որ նրա համար
Ուղեցոյց լինի՝ դէպի ուր կուգէ:

Գ. ԾԱՌԱՅ
Դու գնա՛, իսկ ես մի զգեստ գտնեմ
Եւ մի քանի հատ ձուի սպիտակուց՝
Խեղճի արիւնտ երեսի համար:
Երկի՛նքը նրան օգնական լինի:

Ջանազան կողմերից դուրս են գնում:



ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Բաց դաշտ
Մտնում է Էդգարը:

ԷԴԳԱՐ

Դարձեալ այս է լաւ՝ ապրել սեփական
Կամքով՝ կրելով հոգս ու անարգանք,
Քան միջավայրում շողոքորթների
Քարշ տալ եղկելի գոյութիւն լաւէտ:
Բախտից անարգուած ամենից ստոր
Արարածն անգամ դեռ մի յոյս ունի
Եւ ապրում է դեռ երկիւղից ազատ:
Թէ կայ ողբալի մի փոփոխութիւն՝
Երջանիկների համար է դա լոկ,
Դժբախտը չունի եւ ոչ մի պատճառ
Սարսելու բախտի փոփոխութիւնից:
Ուրեմն ողջո՛յն քեզ, հո՛ղմ անպտուղ,
Այն չքատորը, որին քշելով
Դու թաւալեցիր անյուսութեան մէջ
Եւ պարտք չմնաց քո մրրիկներին:
Բայց ո՞վ է գալիս:

Մտնում է Գլոստերը՝ մի ծերունու ուղեկցութեամբ:

Հա՛յրս... Այնքան խեղճ մի ուղեկցի հետ:

Օ՛, աշխարհ, աշխարհ, եթե ահռելի
Փորձութիւնները քո չստիպեցին
Գարշել քեզանից՝ էլ չէր տայ տեղի
Կեանքը տարիքի կամ մահու առջեւ:

ԾԵՐՈՒԿ

Ո՛վ իմ բարի տէր, մի՞թէ ես չեմ ծառայել ձեզ եւ ձեր հօրը
ամբողջ ութսուն տարի:

ԳԼՈՍՏԷՐ

Գնա՛, հեռացի՛ր, բարի՛ մարդ, գնա՛,
Քո օգնութիւնը անօգուտ է ինձ,
Քեզ՝ վնասակար:

ԾԵՐՈՒԿ

Տեսնել չէք կարող
Ձեր ճանապարհը:

ԳԼՈՍՏԷՐ

Ճանապարհ չունեմ.

Ուրեմն աչքերի կարիք էլ չունեմ,
Երբ աչք ունէի՝ ոտքս սայթաքեց:
Անուշադիր են դարձնում յաճախ
Բնութեան տուած միջոցները մեզ,
Թերութիւնները սակայն հեշտութեամբ
Դառնում են յաճախ մեզ աջակիցներ:
Օ՛, իմ սիրելի որդի, իմ Էդգա՛ր,
Որ գոհ դարձար քո հօր գազազմունքին.
Եթէ ապրէի այնքան, որ մի օր
Տեսնէի քեզ իմ շօշափելիքով,
Կասէի, որ իմ աչքերը ահա
Բացուել են կրկին:

ԾԵՐՈՒԿ

Է՛՛, հէ՛՛, այդ ո՞վ է:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Ո՛վ իմ աստուածներ: Կարո՞ղ է արդեօք
Մարդն ասել, թէ նա իր դժբախտութեան
Գազաթն է հասել: Այժմ ես ահա
Դժբախտ եմ, քան թէ եղել եմ երբէք:

ԾԵՐՈՒԿ

Խեղճ աղքատ Տոմն է:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Տակախն վատթար կարող եմ լինել:
Դժբախտութիւնը դեռ չի հասել իր
Գազաթնակէտին, մինչեւ որ մարդը
Կարենայ ասել, թէ՛ այս է ահա
Ամենից վատը:

ԾԵՐՈՒԿ

Ո՞ր ես գնում, մա՛րդ:

ԳԼՈՍՏԷՐ

Դա մութացկա՞ն է:

ԾԵՐՈՒԿ

Մութացկան եւ խենթ:

ԳԼՈՍՏԷՐ

Քիչ խելք դեռ ունի, եթէ ոչ երբէք
Չէր կարող անգամ մութացկան լինել:
Անցեալ գիշերուայ այն մորիկի մէջ
Ես տեսայ մի մարդ այսպիսիներից
Եւ մտածեցի, որ որդ է մարդը,
Ապա յիշեցի իմ որդուն կորած,
Բայց այն ժամանակ իմ միտքը նրան
Թշնամի էր դեռ: Բայց այնուհետեւ

Շատ բան լսեցի: Ինչպէս ճանճերը
Մանկանց ձեռքերում, այնպէս ենք եւ մենք
Աստուածների մօտ: Կատակի համար
Սպանում են մեզ:

ԷԴԳԱՐ
(Առանձին)

Ո՞նց է պատահել...
Ինչ դժուար արուեստ՝ տրամութեան առջեւ
Խաղալ խենթի դեր եւ վիրաւորել
Թէ՛ ուրիշներին եւ թէ՛ ինքդ քեզ:
(Բարձր).

Օրհնեալ լինես, տէ՛ր:

ԳԼՈՍԵԼՐ

Այն մերկ մա՞րդն է սա:

ԾԵՐՈՒԿ

Այո, տէ՛ր:

ԳԼՈՍԵԼՐ

Ուրե՛մ՝ խնդրում եմ, գնա՛:

Եւ թէ կարող ես յանուն իմ սիրոյ՝
Մի երկու մղոն այստեղից հեռու,
Դուվրի շաւղի մօտ հասի՛ր մեզ նորից
Եւ, ի սէր քո հին անձնօրհրութեան,
Բե՛ր մի նոր ծածկոց այս մերկի համար,
Որին կխնդրեմ ինձ առաջնորդել:

ԾԵՐՈՒԿ

Տէ՛ր իմ, նա խենթ է:

ԳԼՈՍԵԼՐ

Ժամանակների պատուհասն է այդ.
Այժմ կոյրերին առաջնորդում են
Խելագարները, իմ ասա՛ծն արա,

Եւ կամ, մանաւանդ, արա՛ ինչ կուզես,
Միայն հեռացի՛ր:

ԾԵՐՈՒԿ

Ես նրա համար

Պէտք է լաւագոյն հագուստը քերեմ,
Ինչ կուզէ լինի:

ԳԼՈՍԵԼՐ

Ի՛նձ նայիր, մե՛րկ մարդ:

ԷԴԳԱՐ

Տոմը մըսում է:
(Առանձին).

Սրանից ատել

Չեմ կարող կեղծել:

ԳԼՈՍԵԼՐ

Եկ այստեղ, ա՛յ մարդ:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Բայց հարկատր է:
(Բարձր).

Օրհնուած լինեն

Քո աչքերը, տէ՛ր, արիւն են հոսում:

ԳԼՈՍԵԼՐ

Դու գիտե՞ս արդեօք Դուվրի ճանապարհը:

ԷԴԳԱՐ

Այո, պատի վրայով էլ, դռնով էլ, ձիու ճանապարհ եւ ոտքի
ճանապարհ: Աղքատ Տոմը վախից գծուել է: Աստուած քեզ
փրկե՛ չար սատանայից, բարի մարդու որդի՛: Հինգ դեւ միան-
գամից մտել են խեղճ Տոմի մէջ. անտակութեան դէւը՝ Օքի-
դիկուտ, համբութեան իշխանը՝ Հոբբիդիդանս, գողութեան իշ-
խանը՝ Մահու, մարդասպանութեանը՝ Մօթօ եւ Ֆլիբէրտիժիբ-

բէտ՝ ծամածողութեան դէտը, որ այժմ իշխում է աղախիճների և սպասուհիների վրայ: Ուրեմն օրհնեա՛լ լինես, տէ՛ր:

ԳԼՈՍՏԷՐ

Ա՛ն այս քսակը, դու, որին երկնի
Պատուհասները ճնշել են այսքան,
Ամէն հարուածի ենթակայ արել,
Իմ դրութիւնը բախտ է քեզ համար,
Այսպէս վարուեցէ՛ք, աստուածնե՛ր, մեզ հետ,
Թողէ՛ք, որ հարուատ, յղիացած մարդը,
Որ աչք է փակում արդարութեան դէմ,
Որ ձեր պատուիրանն արհամարհում է,
Թողէ՛ք նա զգայ զօրութիւնը ձեր,
Որպէսզի նա նոր դառնայ ընդունակ
Իր ունեցածը խեղճի հետ կիսել,
Եւ ամէն մի մարդ կունենայ այնքան,
Որքան ունի պէտք: Բայց գիտե՛ս արդեօք
Դէպի Դու՛յր տանող ճանապարհը դու:

ԷԴԳԱՐ

Այո, տէ՛ր, գիտեմ:

ԳԼՈՍՏԷՐ

Մի ժայռ կայ այնտեղ,
Որի բարձրաբերձ եւ թեք գլուխը
Ահեղ նայում է ծովի յորձանքին:
Դու տա՛ր ինձ միայն նրա եզերքը.
Ես կբարուրեմ թշուառ վիճակդ
Մի շատ թանկ բանով, որ ունեմ ինձ մօտ:
Այնտեղ որ հասայ՝ էլ առաջնորդի
Ես կարիք չունեմ:

ԷԴԳԱՐ

Տո՛ւր ինձ քո ձեռքը,
Չքատր Տոմը քեզ կառաջնորդէ:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Ալբանի դուքսի պալատը
Մտնում են Գոնեթիլը եւ Էդմոնդը:

ԳՈՆԵՐԻԼ

Բարեւ ձեզ, միլո՛րդ, ես զարմանում եմ,
Որ ամուսինս չեկավ ընդատաջ:

Մտնում է Օսվալդը:

Լաւ, ո՞ւր է տէրդ:

ՕՍՎԱԼԴ

Տանն է, տիրուհի՛.

Ոչ մի մարդ այդպէս չի փոխուել սակայն:
Իր հետ խօսեցի ցամաք դուրս եկած
Բանակի մասին, նա ժպտաց միայն:
Նրան ասացի, որ դուք գալիս էք.
«Աւելի վատ» ինձ նա պատասխանեց,
Իսկ երբ խօսեցի Գլոստերի արած
Մատնութեան մասին եւ նրա որդու
Հաւատարմութեան, տխմար կոչեց ինձ
Եւ ասաց ապա, որ աստաղը ես
Երես եմ շինել: Ինչ պէտք է նրան
Վատ թուար առաջ. արդ դուր է գալիս,
Ինչ պէտք է դուր գար՝ այժմ անախտժ է:

ԳՈՆԵՐԻԼ

(Էդմոնդին).

Եւ մի՛ք գա առաջ: Նա ամօթահար
Երկշտութեան է անձնատուր եղել.
Եւ չի յանդգնում մի բան ձեռնարկել.
Նա անզգայ է անարգանքների,
Որ հատուցում են ահեղ պահանջում:

Այն բաղձանքները, որ ճանապարհին
Յայտնում էինք մենք՝ կարող են դառնալ
Իրականություն: Ե՛տ դարձէք, Էդմոնդ,
Իմ եղբորս մօտ, արագացրէ՛ք
Զօրահաաքը նրա գորքերի,
Առաջնորդ դարձէք նրա գնդերին,
Այստեղ եւ ինքս զէնք կվերցնեմ,
Իսկ նրա ձեռքը եւ իլիկ կտամ:
(Օսվալդին մատնանիշ անելով).
Այս հաւատարիմ ծառան կլինի
Միջնորդ մեզ համար. եւ շատ չի անցնի,
Որ դու կլսես սիրուհուդ կամքը՝
Եթէ բաւական յանդուգն լինես
Քո օգտի համար:
(Տալով նրան մի իշատակ).
Ա՛ն, կրի՛ր դու այս,
Մի՛ խօսիր ոչինչ. ցա՛ծ բեր գլուխդ:
(Համբուրում է նրան).
Թէ այս համբուրը լեզու ունենար,
Քեզ թոխք կտար մինչեւ եթերը.
Հասկացի՛ր դու այս եւ գնա՛ վստահ.
Բարի յաջողում...

ԷԴՄՈՆԴ
Ես ձերն եմ ցմահ:

ԳՈՆԵՐԻԼ
Օ՛հ, իմ սիրելիս:

Էդմոնդը գնում է:

Որքա՛ն տարբեր են մարդիկ իրարից.
Քեզ է վայելում սերը մի կնոջ,
Իսկ իմ տխմարը յաիշտակում է
Մարմինը:

ՕՍՎԱԼԴ
Տիկի՛ն, դուքը գալիս է:

Մտնում է Ալբանի դուքը:

ԳՈՆԵՐԻԼ
Գոնէ սուլոցի արծանի եմ ես:

ԱԼԲԱՆԻ
Աւա՛ղ, Գոնէրի, դու արծանի չես
Անգամ այն փոշում, որ բռնւմ հողմը
Փչում է դէմքիդ: Ես սարսափում եմ
Քո խորհուրդներից: Այն բնութիւնը,
Որ անարգում է իր ծագումն անգամ,
Չի կարող զսպուել ոչ մի պատուարով:
Մի ուտ, որ ինքը պոկուում է բնից
Եւ գրկում իրեն հիւօթից մայրական,
Կխամրի անշուշտ եւ պէտք կգայ լոկ
Չար գործի համար:

ԳՈՆԵՐԻԼ
Բա՛ւ է, խե՛ղթ խօսքեր:

ԱԼԲԱՆԻ
Իմաստութիւնը եւ բարութիւնը
Անարգների մօտ անարգ են թում.
Գարշութիւնն է լոկ, որ նրանց համար
Քաղցր համ ունի: Ինչե՛ր արիք դուք.
Վագրե՛ր, ոչ դուստրեր, ինչե՛ր գործեցիք.
Մի հայր, մի բարի եւ հէզ ծերունի,
Այնքան վեհաշուք, որ շղթայակապ
Արշն անգամ նրա ոտքը կլիզէր,
Դուք, բարբարոսներ, այլասերուածներ,
Խենթութեան դուռը նրան հասցրիք:
Ինչպէ՞ս թոյլ տուեց բարի եղբայրս,
Որ դուք այդ անէք. մի մարդ, մի իշխան,

Որին նա այնքան բարիքներ արաւ:
Եթէ երկինքը չուղարկէ շուտով
Իր տեսանելի պաշտօնեաներին
Այս լանցանքները պատժելու համար,
Կգայ ժամանակ, երբ մարդիկ իրար
Կսկսեն ուտել օվկիանոսի
Հրէշների պէս:

ԳՈՆԵՐԻԼ

Երկչո՛տ արարած,

Որ այտեր ունես ապտակի համար,
Իսկ անարգանքի համար՝ խեղճ գլուխ,
Որ չունես գէթ աչք՝ պատին ամօթից
Ջանազանելու, որ չես իմանում,
Թէ տխմարներն են լոկ խղճում նրանց,
Որոնք պատժում են նախքան կարենան
Չարիքը գործել: Ո՞ւր է քո սուրը:
Ֆրանսիան պարզել է իր դրօշները
Մեր խաղաղ երկրում, եւ քո թշնամին
Մի ցցունագարդ սաղաւարտ գլխին՝
Սպառնում է քեզ... իսկ դու, խելագա՛ր,
Նստել ես հանգիստ, փիլիսոփայում
Եւ աղաղակում՝ «ինչո՞ւ է աւա՛ղ,
Նա այսպէս անում»:

ԱԼԲԱՆԻ

Դու քե՛զ նայիր, դե՛ւ տգեղութիւնը
Այնքան սոսկալի չէ մի դեռի մէջ,
Որքան կնոջ մէջ:

ԳՈՆԵՐԻԼ

Օ՛հ, անմիտ տխմար:

ԱԼԲԱՆԻ

Ո՛վ այլասերուած դիմաձածկ էակ,
Ամաչի՛ր կրել հրէշային դէմք,

Թէ պատշաճ լինէր, որ ձեռքերն իմ այս
Հպատակուէին լուզուած արիւնիս՝
Ես պատրաստ էի միտջօշոտել
Եւ ոսկորներդ պոկել իրարից:
Որքան էլ, սակայն, դու մի դեռ լինես՝
Կանացի դէմքը պաշտպանում է քեզ:

ԳՈՆԵՐԻԼ

Վա՛հ, խիզախացար...

Մտնում է մի սուրհանդակ:

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչ լուր:

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Տէ՛ր իմ, կորնվալի դուքսը մահացաւ.
Սպանուեց նա մի ծառայի ձեռքով,
Երբ պատրաստում էր հանել Գլուստերի
Մի աչքը եւս:

ԱԼԲԱՆԻ

Գլուստերի ա՞չքը:

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Մի ծառայ, որին մեծացրել էր նա,
Խղճահարուելով՝ իր սուրը քաշեց
Հզօր տիրոջ դէմ, որ կատաղելով
Յարձակուեց իսկոյն ծառայի վրայ,
Միւսների հետ նրան սպանեց,
Բայց ինքն էլ առաւ մահացու մի վերք
Եւ նոյն այդ վերքից, ահա, մահացաւ:

ԱԼԲԱՆԻ

Սա ցոյց է տալիս, որ կաք վերելում
Դո՛ւք, արդարադատ աստուածներ՝ եւ դուք

Գիտէք շուտափոյոջ հատուցում յղել
Մեր ոճիրների համար աշխարհում:
Բայց, օհ, խեղճ Գլուստէր, մի աչքն է՞լ կորցրեց:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
Այո, երկուսն էլ: Այս գրութիւնը
Ձեր քրոջից է, տիկի՛ն, եւ արագ
Նա պատասխան է ձեզանից ուզում:

ԳՈՆԵՐԻԼ
(Սուանձիւն).
Լաւ է մի կողմից, որ այս պատահեց.
Այրի է սակայն իմ քոյրը ճիմա
Եւ Էդմոնդին հետ միասին... Եւ այս
կարող է յանկարծ կործանել մտքիս
Նպատակը ողջ եւ իր տակ թաղել
Ատելի կեանքս: Մի ուրիշ կողմից՝
Լուրն այնքան վատ չէ:
(Բարձր).
Կկարդամ ես այն
Եւ ապա իսկոյն կպատասխանեմ:

Դուրս է գնում:

ԱԼԲԱՆԻ
Ո՞ր էր իր որդին, Էդմոնդը, սակայն,
Երբ հանում էին աչքերը նրա:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
Նա այստեղ եկաւ միլեդիի հետ:

ԱԼԲԱՆԻ
Նա այստեղ չկայ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ
Ո՛չ, տէ՛ր իմ, նրան
Ես տեսայ, երբ նա վերադառնում էր:

ԱԼԲԱՆԻ

Նա գիտէ՞ արդեօք այդ անարգ գործը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այո՛, ազնիւ տէ՛ր: Նա ինքն էր իր հօր
Ամբաստանիչը եւ ինքը դիտմամբ
Մահից հեռացաւ, որ զարհուրելի
Այդ պատիժն ազատ ընթացք ստանայ:

ԱԼԲԱՆԻ

Գլուստէ՛ր, ես դեռ կամ, որ քեզ հատուցեմ
Այն սիրոյ համար, որ ցոյց ես տուել
Դէպի ձեր արքան եւ վրէժ լուծեմ
Աչքերիդ համար: Դէ, ե՛կ, բարեկա՛մ,
Պատմի՛ր ինձ ողջը, ինչ որ դու գիտես:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Ֆրանսիական բանակը Գուվրի մօտ
Մտնու՛մ են Քէնտը եւ մի ասպետ:

ՔէՆՏ

Ինչո՞ւ Ֆրանսիայի արքան այսպէս անակնկալ ետ վերա-
դարձաւ, դու չգիտե՞ս պատճառը:

ԱՍՊԵՏ

Կիսատ էր թողել պետական մի գործ,
Որ մտաբերեց իր գալուց լետոյ.
Դա այնքան ծանր էր պետութեան համար
Եւ վտանգաւոր, որ պէտք զգացուեց
Նրա անձնական ներկայութիւնը:

ՔէՆՏ

Ո՞ւմ թողեց իր տեղ իբրեւ զօրավար:

ԱՍՊԵՏ

Ֆրանսիոյ մարաջախտ պարոն Լը Ֆեդին:

ՔԷՆՏ

Երբ նամակը դուք տուիք թագուհուն,
Նա չվշտացա՞ւ արդեօք լուրերից:

ԱՍՊԵՏ

Ի հարկէ, տէ՛ր իմ:
Նա նամակն առաւ, կարդաց իմ առջեւ,
Եւ մէկ-մէկ խոշոր արցունքներ էին
Գլորում նրա քնքուշ այտերից.
Թագուհի էր նա իր վշտի հանդէպ,
Բայց վիշտը նրա, իբրեւ ապստամբ,
Ծգնում էր իշխել թագուհու վրայ:

ՔԷՆՏ

Ուրեմն յուզուե՞ց:

ԱՍՊԵՏ

Ոչ մինչեւ գայրոյթ. համբերութիւնը
Եւ տրտմութիւնը պայքարում էին,
Որ կարողանան տալ նրա դէմքին
Աւելի չքնաղ արտայայտութիւն:
Տեսե՞լ էք մէկտեղ արեւ ու անձրեւ.
Իր ժպիտները եւ արցունքները
Մայիսեան չքնաղ օրուայ պէս էին.
Եւ գեղածիծաղ իր ժպիտները,
Որ խաղում էին շրթերի վրայ,
Անտեղեակ էին աչքերից հոսող
Արտասուքներից, որ կաթում էին
Ինչպէս շողշողուն ադամանդներից
Թափուող մարգարիտ: Մի խօսքով՝ վիշտը
Անշափ թանկագին մի բան կլինէր,
Եթէ ամէնքին վայելէր այդպէս:

ՔԷՆՏ

Նա բերանացի քեզ հարց չտուե՞ց:

ԱՍՊԵՏ

Մի երկու անգամ կրծքից արձակեց
«Հայրիկ» անունը այնքան սրտառուչ,
Կարծես այդ բառը սիրտը գալարեց.
Յետոյ նա գոչեց. «քոյրե՛ր, ա՛խ քոյրե՛ր,
Կանանց նախատինք, քոյրե՛ր, ՔԷ՛նտ, հայրի՛կ.
Ի՛նչ, փոթորկի մէ՞ջ, գիշեր ժամանակ,
Էլ մի՛ք հաւատա, որ գուր կայ կեանքում»:
Ապա երկնային աչքերից թափուող
Սրբազան ցողով ողողեց նա իր
Հեծեծանքը եւ շտապ հեռացաւ,
Որ մենակ մնայ իր տրտմութեան հետ:

ՔԷՆՏ

Աստղերն են երկնի, աստղերն են միայն,
Որ իշխում են մեր վիճակի վրայ.
Եթէ ոչ՝ հայրը, մայրը միեւնոյն
Անկարող էին ծնունդ տալ այսքան
Տարբեր զարմերի: Բայց դուք նրա հետ
Էլ չխօսեցի՞ք:

ԱՍՊԵՏ

Ո՛չ:

ՔԷՆՏ

Թագաւորը

Դեռ չէ՞ր գնացել:

ԱՍՊԵՏ

Ո՛չ, չէր գնացել,

Նա յետոյ մեկնեց:

ՔԷՆՏ

Լաւ, պարո՛ն: Լիրը,

Այն խեղճ թշուառը, այս քաղաքում է:
Նա մերթ, երբ ուշքը վերադառնում է,
Յիշում է, թե մենք ինչու ենք եկել,
Եւ նա ոչ մի կերպ չի համաձայնում
Տեսնել աղջկան:

ԱՍՊԵՏ

Ինչո՞ւ, ազնի՛ւ տէր:

ՔԷՆՏ

Մի անհուն ամօթ տանջում է նրան.
Այն խստութիւնը, որով նա զրկեց
Իր հեզ աղջկան իր օրհնութիւնից
Եւ յանձնեց նրան դժնի աստղերին,
Նրա սրբազան իրաւունքները
Տալով շնասիրտ իր աղջիկներին:
Այնպիսի ժահրոտ խոցեր են սրանք
Իր հոգու համար, որ բուռն ամօթից
Չի համարձակում նա տեսնել նրան:

ԱՍՊԵՏ

Աւա՛ղ, խե՛ղճ արքայ:

ՔԷՆՏ

Ոչինչ չէ՞ք լսել

Դուք Ալբանիի եւ Կորնվալի
Չօրքերի մասին:

ԱՍՊԵՏ

Մօտենում են մեզ:

ՔԷՆՏ

Ես ձեզ կտանեմ մեր տէր Լիբի մօտ՝
Թողնելով, որ դուք հոգ տանէք նրան,
Մի զօրեղ պատճառ ստիպում է ինձ
Դեռ քիչ էլ մնալ այսպէս ծպտուած:

Երբ ես ճանաչուեմ՝ դուք չէք սփսոսայ,
Որ ինձ հետ այսպէս ծանօթ էք եղել:
Դէ, եկէ՛ք ինձ հետ:

Դուք են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Վրան Դուվրի բանակում
Մտնում են Կորդելիան, բծիչը եւ զինուորներ:

ԿՈՐԳԵԼԻԱ

Աւա՛ղ, նա ինքն է. մի փոքր առաջ
Տեսել են նրան այնպէս մոլեգին,
Ինչպէս կատաղի, բազմայուզ մի ծով:
Տեսել են նրան բարձր երգելիս,
Ծակասին պսակ վայրի խոտերից,
Գիծ վարսակներից, կոտուկներից,
Մոլեխիւնդներից, որոմից, կկուի
Ծաղկից, եղինջից եւ ամեն տեսակ
Անպէտք խոտերից, որ պարարտ հողում
Բուսանում են, անում:
(Մի սպայի).

Ուղարկի՛ր մի վաշտ,

Թող լաւ խուզարկեն բարձր խոտերի
Ամէն անդաչափ եւ բերեն նրան
Մեր աչքի առջեւ:
(Բժշկին).

Ի՞նչ հնար արդէօք կարող է գտնել
Մարդկային միտքը՝ ետ տալու համար
Նրանից իլուած դատողութիւնը:
Ով բուժէ նրան՝ ինձանից նա թող
Ստանայ իմ ողջ հարստութիւնը:

Մի սպա դուք է գնում:

Այն խեղճ թշուառը, այս քաղաքում է:
Նա մերթ, երբ ուշքը վերադառնում է,
Յիշում է, թե մենք ինչու ենք եկել,
Եւ նա ոչ մի կերպ չի համաձայնում
Տեսնել աղջկան:

ԱՍՊԵՏ

Ինչո՞ւ, ազնի՛ւ տէր:

ՔԷՆՏ

Մի անհուն ամօթ տանջում է նրան.
Այն խստութիւնը, որով նա զրկեց
Իր հեզ աղջկան իր օրհնութիւնից
Եւ յանձնեց նրան դժնի աստղերին,
Նրա սրբազան իրաւունքները
Տալով շնասիրտ իր աղջիկներին:
Այնպիսի ժահրոտ խոցեր են սրանք
Իր հոգու համար, որ բուռն ամօթից
Չի համարձակում նա տեսնել նրան:

ԱՍՊԵՏ

Աւա՛ղ, խե՛ղճ արքայ:

ՔԷՆՏ

Ոչինչ չէ՞ք լսել

Դուք Ալբանիի եւ Կորնվալի
Չօրքերի մասին:

ԱՍՊԵՏ

Մօտենում են մեզ:

ՔԷՆՏ

Ես ձեզ կտանեմ մեր տէր Լիրի մօտ՝
Թողնելով, որ դուք հոգ տանէք նրան,
Մի գօրեղ պատճառ ստիպում է ինձ
Դեռ քիչ էլ մնալ այսպէս ծպտուած:

Երբ ես ճանաչուեմ՝ դուք չէք սպիտակ,
Որ ինձ հետ այսպէս ծանօթ էք եղել:
Դէ, եկէ՛ք ինձ հետ:

Դուք են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Վրան Դուլրի բանակում

Մտնում են Կորդելիան, բժիշկը եւ զինուորներ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Աւա՛ղ, նա ինքն է. մի փոքր առաջ
Տեսել են նրան այնպէս մոլեգին,
Ինչպէս կատաղի, բազմալոյզ մի ծով:
Տեսել են նրան բարձր երգելիս,
Ծակատին պասկ վայրի խոտերից,
Գիծ վարսակներից, կոտորակներից,
Մոլեխիւններից, որոմից, կկոփ
Ծաղկից, եղինջից եւ ամէն տեսակ
Անպէտք խոտերից, որ պարարտ հողում
Բուսնում են, աճում:
(Մի սպայի).

Ուղարկի՛ր մի վա՛շտ.

Թող լա խուզարկեն բարձր խոտերի
Ամէն անդաշտի եւ բերեն նրան
Մեր աչքի առջեւ:
(Բժշկի՛ն).

Ի՞նչ հնար արդէօք կարող է գտնել
Մարդկային միտքը՝ ետ տալու համար
Նրանից խլուած դատողութիւնը:
Ով բուժէ նրան՝ ինձանից նա թող
Ստանայ իմ ողջ հարստութիւնը:

Մի սպա դուք է գնում:

Գլխատերի աչքերն հանելուց յետոյ
Անխոհեմ բան էր ողջ թողնել նրան.
Ուր հասնում է նա՝ բոլոր սրտերը
Յուզում է մեր դէմ: Էդմոնդը կարծեմ
Գթալով նրա դժբախտութեանը՝
Գնաց, որ վերջ տայ նրա մութ կեանքին
Եւ տեղեկանայ դրա հետ մէկտեղ
Թշնամու ուժին:

ՕՍՎԱԼԴ

Ես էլ եմ գնում
Նրա ետեւից, որ նամակը տամ:

ՌԵԳԱՆ

Վաղը մեր զօրքը ճանապարհ կընկնի,
Սպասի՛ր այստեղ, ճանապարհները
Վտանգատր են:

ՕՍՎԱԼԴ

Չեմ կարող, տիկի՛ն:

ՌԵԳԱՆ

Նա ի՞նչ է արդեօք գրում Էդմոնդին.
Դու չէ՞իր կարող նրա պատգամը
Լեզուով հաղորդել: Թերեւս մի բան...
Չգիտեմ թէ ինչ... քեզ շատ կսիրեմ,
Եթէ նամակը թոյլ տաս բանալու...

ՕՍՎԱԼԴ

Տիկի՛ն, աւելի կյօժարեի...

ՌԵԳԱՆ

Գիտեմ, տիրուհիդ չի սիրում մարդուն,
Այդ լաւ գիտեմ ես, եւ վերջին անգամ
Երբ այստեղ էր նա՝ սիրոյ ակնարկներ,
Խօսուն հայեացքներ արձակում էր միշտ

Ազնիւ Էդմոնդին, գիտեմ, նրա հետ
Դու մտերիմ ես:

ՕՍՎԱԼԴ

Ե՞ս... Ո՛չ, տիրուհի՛:

ՌԵԳԱՆ

Ինքս լաւ գիտեմ, թէ ինչ եմ ասում:
Դու մտերիմն ես նրա, լաւ գիտեմ.
Ուրեմն լսի՛ր այս խորհուրդս դու.
Ես այրի եմ արդ. Էդմոնդը եւ ես
Խոստում ենք տուել արդէն իրարու.
Նա աւելի շուտ ինձ կյարմարի,
Քան քո տիրուհուն: Մնացածը դու
Ի՛նքդ հասկացիր: Երբ նրան գտնես՝
Խնդրում եմ յանձնես նրան ահա այս:
(Տալիս է մի մատանի).

Իսկ երբ տիրուհուդ պատմելու լինես՝
Այս ամէնն ասա՛ խնդրում եմ նրան,
Որ խելքն հաւաքի: Դէ, գնա՛ւ բարով:
Եթէ պատահմամբ բան լսես այն կոյր
Մատնիչի մասին՝ իմացա՛ծ եղիր,
Որ նրա կեանքին վերջ դնողը մեծ
Շնորհ կստանայ:

ՕՍՎԱԼԴ

Ես շատ կուզէի
Հանդիպել նրան եւ ցոյց տալ, թէ ո՞ւմ
Կուսակիցն եմ ես:

ՌԵԳԱՆ

Դէ, գնաս բարով:

Դուրս եմ գնում:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

Դաշտ Դովրի շոջակայքում
Մտնում են Գլոստերը եւ Էդգարը՝ իբրեւ շինականներ:

ԳԼՈՍՏԷՐ

Ե՞րբ պիտի հասնենք ծայրը բլուրի:

ԷԴԳԱՐ

Դուք այս րոպէիս վ եր էք բարձրանում,
Մի՞թէ չէք տեսնում՝ ինչպէս ենք յոգնում:

ԳԼՈՍՏԷՐ

Բայց գետինն այստեղ ինձ հարթ է թում:

ԷԴԳԱՐ

Ժայռ է սոսկալի, ա՛հ, ծովի ձայնը
Մի՞թէ չէք լսում:

ԳԼՈՍՏԷՐ

Ո՛չ, ուղիղն ասած:

ԷԴԳԱՐ

Ուրեմն ձեր այդ զգայարանն էլ
Տկարացել է աչքերի ցաւից:

ԳԼՈՍՏԷՐ

Գուցէ, բայց կարծես ձայնդ փոխուել է,
Եւ դու խօսում ես անլի խելօք
Եւ առաջուանից սահուն մի ոճով:

ԷԴԳԱՐ

Դուք սխալուում էք. ես ոչ մի բանով
Չեմ փոխուել, միայն հագուստս եմ փոխել:

ԳԼՈՍՏԷՐ

Ո՛չ, ինձ թում է, որ առաջուանից
Դու լաւ ես խօսում:

ԷԴԳԱՐ

Նստեցէ՛ք, պարո՛ն:

Ահա գագաթը: Կանգնեցէ՛ք հանդարտ:
Ի՛նչ ահռելի է, մարդու գլուխը
Ինչպէ՛ս է դառնում, երբ նայում է ցած,
Այսպիսի մի խոր անդունդի վրայ:
Սեւ ագուաները եւ որիները,
Որոնք ճախրում են խորութեան կէտին՝
Թում են հազիւ բզէզների չափ:
Նոյն տեղում ահա, ժայռերից կախուած,
Մի մարդ ծովային սամիթ է քաղում.
Սոսկալի արհեստ: Նա ինքն իր գլխից
Մեծ չի նրելում: Իսկ ձկնորսները,
Որոնք քայլում են ծովի եզերքին՝
Հազիւ մկների մեծութիւն ունեն:
Եւ խարիսխ գցած այն հսկայ նարը
Հազիւ թում է իր մակոյկի չափ,
Իսկ իր մակոյկը՝ խարսխափայտի,
Որ շատ է փոքրիկ տեսութեան համար:
Ծովափնեայ չնչին խիճերի վրայ
Ծաշող կոհակի ձայնը չի հասնում
Այս խօլ բարձունքին: Էլ ես չեմ նայի,
Գուցէ գլուխս սկսի դառնալ,
Եւ ես նուազած ներքեւ գորուեմ
Դէպի անդունդը:

ԳԼՈՍՏԷՐ

Կանգնեցրո՛ւ դու ինձ, ուր կանգնած ես արդ:

ԷԴԳԱՐ

Լաւ, առա՛ջ եկէք, տուէ՛ք ձեր ձեռքը:
Այժմ դուք միայն մի քայլ էք հեռու

Անդունդի ափից: Եթէ ինձ տային
Ամէն ինչ, որ կայ լուսնեակի ներքոյ՝
Չէի կամենայ ես ցատկել անգամ
Իմ կանգնած տեղում:

ԳԼՈՍՏԷՐ

Բա՛ց թող իմ ձեռքը: Ահա, բարեկա՛մ,
Քեզ այլ մի քսակ, միջին մի զոհար,
Որ արժէք ունի խեղճ մարդու համար.
Թող փերիները եւ աստուածները
Քեզ ընծայով այդ բախտաւոր անեն:
Գնա՛, հեռացի՛ր, հրաժե՛շտ ասա,
Մեկնի՛ր դու այնպէս, որ այդ ես լսեմ:

ԷԴԳԱՐ

Մնացէք բարո՛վ, յարգելի պարո՛ն:

Գնալ է ձեռացնում:

ԳԼՈՍՏԷՐ

Ձեզանից անշափ շնորհակալ եմ:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Եթէ ես նրա անյուսութեան հետ
Խաղում եմ այսպէս լոկ այն պատճառով,
Որ նրան բուժեմ:

ԳԼՈՍՏԷՐ

(Ծունկի գալով).

Ահե՛ղ աստուածներ,
Ես հրաժեշտ եմ տալիս աշխարհին,
Եւ արդ, ձեր առաջ, անվրդով հոգով,
Թօթափում եմ իմ սրտի վրայից
Իմ կսկիծը մեծ: Եթէ ինձ համար
Մի հնար լինէր կրել տակալին

Եւ չմաքառել, պայքար չմղել
Ձեր մեծ կամքի դէմ, ես թող կտայի՛
Կեանքիս պատրոյզի զագրելի մասը
Ինքնիրեն մարեր: Եթէ Էդգարը
Դեռ կենդանի է՝ օգնեցէ՛ք նրան:
Այժմ, ո՛վ ընկեր, դէ մնաս բարո՛վ:

ԷԴԳԱՐ

Գնացի, տե՛ր իմ: Մնացէք բարո՛վ:

Գլոստերը ցատկում է եւ ընկնում հարթ գետնի վրայ:

ԷԴԳԱՐ

(Առանձին).

Սակայն չգիտեմ՝
Երեւակայութիւնն արդեօք չի՞ կարող
Հէնց ինքը կեանքի գանձը գործանալ,
Երբ կեանքը ինքը օժանդակում է
Գողութեանը այդ: Եթէ նա լինէր
Այնտեղ, ուր ինքը կարծում էր՝ արդէն
Վաղուց կլինէր միտքը դադարած:
Ո՞ղջ էք, թէ՞ մեռած, լսո՞ւմ էք, պարո՛ն,
Խօսեցէ՛ք, պարոն:
(Առանձին).

Կարող է լինել,

Որ մտել է նա արդէն իսկապէս:
Բայց ոչ. նա ահա ուշքի է գալիս:
Ո՞վ էք դուք, պարո՛ն:

ԳԼՈՍՏԷՐ

Գնա՛, թող մեռնեմ:

ԷԴԳԱՐ

Թէ չլինէիր
Մի սարդի ուտայն, մի փետուր կամ օդ՝
Այս բարձրութիւնից գահավիժելով՝

Մի ձուի նման ջախջախուել էիր:
Բայց դու շնչում ես. կարծր է քո միտքը.
Արիւն չի գալիս, խօսում ես, ողջ ես:
Եթէ տասն կայս ծայր-ծայրի շարեն՝
Չեն կարող հասնել այն բարձրութեանը,
Որից ընկել ես դու ուղիղ գծով:
Հրաշք է, որ դու ապրում ես: Խօսի՛ր:

ԳԼՈՍՏԷՐ

Ընկե՞լ եմ, թե՞ ոչ:

ԷԴԳԱՐ

Կաւճուտ խարակի
Գագաթից այն, տե՛ս, դու ընկել ես վար.
Մի վերե՛ւ նայիր՝ սրածայն արտուտն
Այն բարձրութիւնից տեսանելի չէ,
Ոչ էլ իր ձայնը կարող է լսուել:
Մի վերե՛ւ նայիր:

ԳԼՈՍՏԷՐ

Աւա՛ղ, աչք չուներ.

Ջրկուա՞ծ է արդեօք դժբախտութիւնը
Գոնէ ինքն իրեն մահով վերջ տալու
Բարիքից անգամ: Գէթ սփոփանք է,
Որ թշուառ մարդը կարող է խաբել
Ժանտ բոնատրի կատաղութիւնը
Եւ նրա գոռոզ կամքը խորտակել:

ԷԴԳԱՐ

Տո՛ր ինձ քո ձեռքը, վե՛ր կաց, ա՛յ այդպէս.
Ինչպե՞ս ես արդեօք, ոտքերդ պի՞նդ եմ.
Ահա կանգնեցիր:

ԳԼՈՍՏԷՐ

Ա՛խ, չափազանց լաւ:

ԷԴԳԱՐ

Հրա՛շք կատարեալ: Վերեւում քեզ հետ
Այն ի՞նչ էակ էր, որ մի կողմ գնաց:

ԳԼՈՍՏԷՐ

Մի խեղճ մուրացկան:

ԷԴԳԱՐ

Իսկ ինձ ներքեւից

Այնպէս երեսաց, թէ իր աչքերը
Երկու լրացած լուսիններ էին,
Հազար քիթ ուներ, եւ եղջիրները
Գալարում էին, ինչպէս ալիքներ
Հողմի ժամանակ: Մատանան էր այն:
Հաւատա՛ ուրեմն, ո՛վ բախտաւոր հայր,
Որ հեշտութեամբ եմ ի կատար ածում
Հզօր աստուածներն այնպիսի գործեր,
Որ մարդկանց համար անհնարին եմ:
Նրանք եմ, ահա, քեզ մահից փրկել:

ԳԼՈՍՏԷՐ

Յիշում եմ ողջը, եւ այսուհետեւ
Ես լուռ կկրեմ ամէն վիշտ ու ցաւ,
Մի՛նչեւ որ նրանք ինձ աղաղակեն՝
«Էլ բաւ է, մեռի՛ր»: Իսկ այն էակին,
Որ պատմում ես դու, ես մարդ կարծեցի.
Նա միշտ կրկնում էր «Դե՛ւր, չար դե՛ւր»:
Նա ինքը այնտեղ առաջնորդեց ինձ:

ԷԴԳԱՐ

Թող հոգիդ խաղաղ, համբերող լինի:
Բայց ո՞վ է գալիս:

Մտնում է Լիբը՝ տարօրինակ զարդարուած
վայրի ծաղիկներով:

Առողջ ուղեղը
Երբեք իր տիրոջն այսպես չի պահի:

ԼԻՐ

Ո՛չ, ինձ չեն կարող արգելել դրամ կտրել, որովհետև ես արքայ եմ:

ԷԴԳԱՐ

Օ՛հ, սրտաճմլիկ տեսարան:

ԼԻՐ

Այդ գործում բնութիւնը արհեստից բարձր է: Ահա քեզ քո գլխադրամը: Այն մարդն իր ուղեղը խրտուիլակի նման է շարժում. դէ մի նե՛տ արձակիր ջուլհակի կանգունի չափ. տե՛ս, տե՛ս, ահա մի մուկ. սո՛ւս, սո՛ւս, այս մի կտոր տապակած պահիրը նրա գործը գլուխ կբերի: Ահա իմ ոսկմի ձեռնոցը. ես այն կնետեմ մի հսկայի. բերէ՛ք գեղարդները: Օ՛, լաւ թոար. թոչնի՛կ, ճիշտ նշանին, ճիշտ նշանին: (Էդգարին): Հո՛ւու, ասա՛՛ նշանաբանը:

ԷԴԳԱՐ

Քաղցր մարիորամ:

ԼԻՐ

Անցի՛ր:

ԳԼՈՍՏԷՐ

Ես այդ ձայնը ճանաչում եմ:

ԼԻՐ

Հա՛, Գոնեթի՛լ. Սպիտակ մօրուքո՛վ, նրանք ինձ շոյում են, ինչպէս մի շնիկի, ես ասում եմ, որ ես սպիտակ մազեր ունեմ մօրուքիս մէջ՝ նախքան այնտեղ սեւ մազեր ունենալս: Այդ կամ ոչ ասե՛լ իմ ամէն ասածին: «Այոն» եւ «ոչը» լաւ աստուածաբանութիւն չէր: Հէնց որ անձրեւն ինձ թրջեց եւ հողմն ինձ դողացրեց, երբ որոտը շլոեց իմ հրամանով, նոր միայն ես

տեսայ, նոր միայն հոտոտեցի. թէ նրանք ի՛նչ էին: Գնա՛՛ քա-
նիդ, նրանք իրենց խօսքը պահողը չեն. ինձ ասում էին, թէ ես
ամէն բան էի. այդ սուտ է. ես ջերմին անգամ դիմացողը չեմ:

ԳԼՈՍՏԷՐ

Ես լաւ եմ յիշում այս ձայնը... Մի՞թէ
Թագաւորը չէ:

ԼԻՐ

Այո, թագաւոր.

Գլխից մինչեւ ոտք թագաւոր: Երբ ես
Հայեացք եմ նետում, տես, ո՛նց են դողում
Հպատակներս:
Ես շնորհում եմ այդ մարդու կեանքը:
Ի՞նչ մեղք է գործել, անառակութի՞ւն.
Չպէ՛տք է մեռնի.
Անառակութեան համար՝ մա՞հ, օ՛, ո՛չ.
Թէ՛ սարեակ, թէ՛ ճանն նոյն բանն են անում
Իմ աչքի առջեւ, առանց քաշուելու.
Թող ցոփութիւնը աճի բազմանայ.
Քանզի Գլուստերի ապօրէն որդին
Աւելի սիրով վարուեց իր հօր հետ.
Քան օրինաւոր մահճի մէջ սերած
Իմ աղջիկները:
Ցնծա՛, ցոփութի՛ւն, խառնիխառն, ազատ,
Չէ՞ որ ինձ համար զինուորներ են պէտք,
Նայեցէ՛ք, ահա, այն տիկնոջ դէմքին.
Ի՛նչ անմեղ ժպիտ. նրա երեսը
Կարծել է տալիս, թէ նա ձիւն ունի
Իր ազդրերի մէջ. որ կոտորատուելով
Սուրբ է ձեւանում, սակայն «հեշտութիւն»
Բառն իսկ լսելիս շատագունում է:
Ո՛չ ժանտաքիսը եւ ո՛չ էլ կանաչ
Խոտով գիրացած ճծոյզը երբեք
Գրոհ չեն տալիս արեւի անասնձ
Մի ախորժակով:

Նրանք մէջքից վար կենտավրոսներ են
Եւ կի՞ն՝ մէջքից վեր:

Ինչ վեր է գոտուց՝ աստուածներինն է,
Իսկ գոտուց ներքեւ՝ դէտերինը չար,

Այնտեղ կայ դժոխք, այնտեղ կայ խաւար:

Այնտեղ կայ ծծմբային անդունդ, այրում, եռք, գարշահո-
տութիւն, սպառում: Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, փա՛ն, փա՛ն: Մի մսխալ
մո՛ւշկ տուր, բարի՛ դեղագործ, իմ երեսակայութիւնը մաքրելու
համար: Ահա ձեզ փողը:

ԳԼՈՍԵԼՐ

Օ՛հ, թող համբուրեմ այդ ձեռքը:

ԼԻՐ

Նախ թող սրբեմ. մահացութեան հոտ է գալիս նրանից:

ԳԼՈՍԵԼՐ

Ո՛վ դու կործանուած հրաշակերտ բնութիւն: Մեր ողջ նա-
խարհն էլ այսպէս կմաշուի, կոչնչանայ: Մահաշո՛ւմ ես ինձ:

ԼԻՐ

Ես լաւ եմ յիշում այդ աչքերը: Ինձ շե՛ղ ես նայում: Ո՛չ,
արա՛ ինչ որ կարող ես, կոյր Կուպիդո՛ն, ես չեմ սիրելու այլեւս:
Կարդա՛ ահա այս մեծամարտի հրաւերը, միայն լաւ ուշադրու-
թիւն դարձրու ոճին:

ԳԼՈՍԵԼՐ

Եթէ քո տատերը մի-մի արեգակներ լինէին, դարձեալ ես ոչ
մէկը չէի կարող տեսնել:

ԷԴԳԱՐ

(Առանձին). Եթէ ինձ այս ամէնը պատմէին, ես չէի հաւա-
տայ, բայց ահա այսպէս է, ես սիրտս փշրում է:

ԼԻՐ

Կարդա՛:

ԳԼՈՍԵԼՐ

Ինչպէ՛ս, աչքի խոռոչներո՞վ:

ԼԻՐ

Օհո՛ւ, ա՞յդ ես ուզում ասել. ո՛չ աչք դէմքիդ վրայ, ո՛չ էլ
դրամ՝ գրպանումդ: Քո աչքերը շատ ծանր վիճակի մէջ են,
իսկ քսակդ՝ շատ թեթեւ: Բայց դարձեալ դու տեսնում ես, թէ
ինչպէս են ընթանում աշխարհի գործերը:

ԳԼՈՍԵԼՐ

Ես այդ տեսնում եմ զգալով միայն:

ԼԻՐ

Ի՞նչ է, յիմարացե՞լ ես. մարդ կարող է առանց աչքերի էլ
տեսնել, թէ աշխարհի գործերը ինչպէս են գնում: Ականջնե-
րո՛վդ նայիր, տե՛ս. ինչպէս է այն դատաւորը բարբառում այն
պարզամիտ գողի մասին: Լսի՛ր, ականջիդ ասեմ. փոխի՛ր
նրանց տեղերը եւ ձեռնախփուկի նման ասա՛, թէ որն է դա-
տաւորը, որն է գողը: Դու տեսե՛լ ես, ինչպէս ազարակատի-
րոջ շունը հաշում է մուրացկանի վրայ:

ԳԼՈՍԵԼՐ

Այո, տէ՛ր:

ԼԻՐ

Եւ ինչպէս խեղճ մարդը փախչում է շնից, լաւ, դու դրանում
տեսել ես իշխանութեան իսկական պատկերը. շունն, իբրեւ
պաշտօնեայ, իշխում է ուրիշի վրայ...

Լսիր՛ ռատիկա՛ն, քաշի՛ր դէպի քեզ

Արիւնոտ ձեռքդ: Ինչո՞ւ ես խփում

Կնոջն այդ պոռնիկ: Քո մէջքի՛ն խփիր:

Դու ախտաբորբոք ցանկութիւն ունես

Նոյն լանցանքը հէնց կատարել իր հետ,

Որի պատճառով ծեծում ես նրան:

Վաշխատուն գողին կախել է տալիս,

Յնցոտու միջից փոքրիկ մեղքերը

Շուտ են երևում, բայց պերճ գգեստներն
Ու մուշտակները ծածկում են նրանց:
Ջրահի՛ր մեղքը ոսկե պատեանով
Եւ արդարութեան տէգը պողպատեայ
Անվնաս դարձած՝ կշարդոյի իսկոյն:
Պատի՛ր այդ մեղքը ցնցոտիներով՝
Թ՛գուկի շիղն էլ կխոցէ նրան:
Ոչ մեղատորներ չկան աշխարհում.
Ես ներում եմ այդ նրանց բոլորին:
Լսի՛ր, բարեկա՛մ, ունե՛մ ես դեռ ուժ
Փակելու անարգ գրպարտիչների
Բերանն ու լեզուն:
Գտի՛ր քեզ համար ապակեայ աչքեր,
Եւ իբրեւ խղճուկ մի քաղաքագէտ
Սովորի՛ր կեղծել, որ տեսնում ես այն,
Ինչ որ չես տեսնում: Դէ, շո՛ւտ, դէ, արա՛գ,
Քաշի՛ր կօշիկս, ուժով, հա՛, այդպէ՛ս:

Է՛.ԳԱՐ
(Առանձին).

Օ՛հ, խառնո՛ւրդ մտքի եւ անմտութեան.
Խե՛ղք խենթութեան մէջ:

ԼԻՐ

Թէ ուզում ես լալ

Վիճակիս վրայ՝ ա՛ն իմ աչքերը.
Ես բառական լաւ ճանաչում եմ քեզ.
Անունդ է Գլոստեր, պէտք է համբերես,
Արտասուելով ենք մենք եկել աշխարհ.
Առաջին անգամ հէնց օդ շնչելիս՝
Մենք լաց ենք լինում եւ աղաղակում:
Լսի՛ր, քեզ համար մի քարոզ ասեմ:

ԳԼՈՍՏԷՐ

Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ ինձ:

ԼԻՐ

Երբ ծնում ենք մենք՝

Աղաղակում ենք, թէ եկել ենք այս
Խելագարային բեմում խաղալու:
Սա լաւ գլխարկ է, լաւ գիտ կլիներ՝
Հեծելագօրքի բոլոր ձիերին
Պայտել թաղիքով. պէտք է այս փորձեմ.
Ապա կարշաւեմ փեսաներիս դէմ,
Եւ այն ժամանակ՝ ջա՛րդ, ջա՛րդ, ջա՛րդ, ջա՛րդ ջա՛րդ...

Մտնո՛ւմ է մի սպայ ծառաների հետ:

ՍՊԱՅ

Օ՛հ, նա այստեղ է, բոնեցէ՛ք նրան.
Ամենասիրելի ձեր դուստրը, տէ՛ր իմ...

ԼԻՐ

Ինձ օգնող չկա՞ն, ի՞նչ, գերի՞ եմ ես:
Ուրեմն բախտի խեղկատակն եմ միշտ:
Լաւ վարուիր ինձ հետ, փրկանք կտտանաս.
Դէ՛, վիրաբոյժներ բերէ՛ք ինձ համար.
Վիրատրուած եմ ուղեղիցս ես:

ՍՊԱՅ

Ամէն բան կտան:

ԼԻՐ

Ոչ որ չի՞ օգնում.

Մեն մենակ ե՞մ ես: Օ՛հ, այս կարող է
Ստիպել մարդու, ով արցունք ունի,
Աչքերը ջրի ցնցուղ դարձնել
Եւ թրջել փոշին ճանապարհների:

ՍՊԱՅ

Ազնի՛ւ տէր:

ԼԻՐ

Պէտք է ես արի մեռնեմ,
Որպէս զարդարուած, պճնուած փեսայ.
Դէ, զուարթ լինեմ: Օ՛հ, կորէ՛ք, կորէ՛ք.
Ես թագաւոր եմ, հասկանո՞ւմ էք այս:

ՍՊԱՅ

Դուք թագաւոր էք, իսկ մենք՝ ձեզ հլու:

ԼԻՐ

Դեռ կեանք կա՞յ, ուրեմն, այդ արքայի մէջ:
Իսկ եթէ դուք ինձ ուզում էք բռնել՝
Վազելով միայն կարող էք բռնել:
Սա, սա, սա, սա...

Դուրս է գնում վազելով՝ ծառաները ետեւից:

ՍՊԱՅ

Օ՛հ, դառն, դժնի, գթաշարժ պատկե՛ր,
Ոչ թէ արքայի, այլ անգամ անարգ
Մի թշուառ ճորտի վիճակի համար:
Բայց ունես դու դեռ մի դուստր, որ ողջ
Մարդկային ցեղը ազատում է այն
Հանուր նզովքից, որ միւս երկու
Դուստրերդ բերին մարդկութեան գլխին:

ԷԴԳԱՐ

Բարեւ, ազնիւ տէ՛ր:

ՍՊԱՅ

Տէր ընդ ձեզ, պարո՛ն.
Ի՞նչ էք կամենում:

ԷԴԳԱՐ

Լսել է՞ք, պարո՛ն,
Որ շուտով կոխ կարող է լինել:

ԱՍՊԵՏ

Պարզ է եւ յայտնի, ով ականջ ունի՝
Լսել է արդէն այդ լուրն:

ԷԴԳԱՐ

Ասացէ՛ք,
Որքա՞ն հեռու է միւս բանակը:

ՍՊԱՅ

Մօտ է եւ արագ առաջ է գալիս.
Ժամ առ ժամ արդէն բուն զօրամասը
Այստեղ կլինի:

ԷԴԳԱՐ

Ծնորհակալ եմ,
Հէնց այսբանն էր, տէ՛ր:

ՍՊԱՅ

Թէեւ թագուհին
Յատուկ պատճառով մնում է այստեղ,
Բայց նրա զօրքը քայլել է առաջ:

ԷԴԳԱՐ

Զգացում եմ, տէ՛ր:

Սպան դուրս է գնում:

ԳԼՈՍՏԷՐ

Գթած աստուածներ, մա՛հ տուէք դուք ինձ.
Թոյլ չտաք դարձեալ, որ իմ չար ոգին
Դրդէ ինձ մահուան՝ ձեր կամքից առաջ:

ԷԴԳԱՐ

Լաւ աղօթք է այդ, հայրի՛կ:

ԳԼՈՍՏԷՐ

Բարի մա՛րդ,
Ասա ինձ հիմա, ո՞վ ես արդեօք դու:

ԷՂԳԱՐ

Մի հեզ մարդ՝ բախտի հալածանքներին
Այնքան հնազանդ, որ թե՛ իր նախկին,
Թե՛ այժմ ունեցած վիշտ ու կսկիծով
Դարձել է այլոց վշտի կարեկից:
Տուե՛ք ձեր ձեռքը, եւ ես կտանեմ,
Ձեզ մի օթեան:

ԳԼՈՍՏԷՐ

Ես ձեզ ի սրտե շնորհակալ եմ,
Երկնային շնորհն ու օրհնութիւնը
Թող վարձք լինեն ձեզ:

Մտնում է Օսվալդը:

ՕՍՎԱԼԴ

(Առանձին)

Խոստացուած ընծա՞ն:

Ի՞նչ երջանկութիւն. այդ անարգ գլուխն
Առաջին օրից ստեղծուած է հէնց
Իմ բախտի անշեղ բարձրացման համար:
(Գլխուտէրին)

Ո՞վ դու ծերունի, դժբախտ դաւանա՛ն,
Խորհի՛ր անյապաղ՝ ինչ խորհելու ես.
Քաշուած է սուրը՝ քեզ վախճան քերոյ:

ԳԼՈՍՏԷՐ

Չա՛րկ, մաղթում եմ քո բարերար ձեռքիդ
Հարկատր ուժը:

Էդգարը դիմադրում է:

ՕՍՎԱԼԴ

Յանդուգն գեղջո՛ւկ,
Համարձակում ես դու պաշտպան կանգնել
Յայտնի, բացարձակ մի դաւանանի՞:
Հեռո՛ւ. կարող է քեզ էլ վարակել
Նրա ժանտախտը. թո՛ղ նրա թելը:

ԷՂԳԱՐ

Ես բաց չեմ թողնի, մինչեւ որ մի հասկանալի պատճառ
չլսես:

ՕՍՎԱԼԴ

Բա՛ց թող դրան, թշուառակա՛ն, եթէ ոչ՝ քեզ կսատկացնես:

ԷՂԳԱՐ

Էյ, պարո՛ն, ճամփե՛նդ գնա, թո՛ղ խելն մարդկանց հան-
գիստ: Թե՛ էդպէս մեծ-մեծ բրդելով մարդ կարողանար ինձ
սպանել՝ տասնհինգ օր առաջ ինձ սպանած կլինէին: Տե՛ս,
հա՛. ես խելն հալելոյի մագին չդիպչեա. հեռո՛ւ կաց. արես
գիտենայ, թէ մօտեցել ես՝ ես քեզ ցոյց կտամ, թէ որն է պինդ՝
քո գագա՞թը, թե՞ իմ մահակը: Քեզ պարզն եմ ասում:

ՕՍՎԱԼԴ

Կորի՛ր, կովի թրի՛ք:

ԷՂԳԱՐ

Հիմա ես քո ատամներդ կշարդեմ, մինչեւ որ իմանաս. դէ
ե՛կ մէլդան, ես քո թրից վախեցողը չեմ:

Էդգարը փայտի մի հարուածով գլորում է նրան գետին:

ՕՍՎԱԼԴ

Ա՛հ, թշուառակա՛ն, ինձ սպանեցիր.
Բայց ա՛ն քսակս, եթէ ուզում ես
Քո բախտը շինել՝ թաղի՛ր մարմինս
Եւ մամակը, որ կզոնես ինձ մօտ՝

Յանձնի՛ր Էդմոնդին, Գլոստերի կոմսին.

Այժմ Անգլիոյ բանակում է նա:

Օ՛, տարածամ մահ:

Մտնում է:

Է.Դ.Գ.Ա.Ր

Ես քեզ լաւ գիտեմ.

Դու սրիկայ ես հաճոյակատար.

Տիկնոջդ ախտերին այնքան անձնուէր,

Որքան չարութիւնն ինքը կցանկար:

Գ.ԼՈՍՏԷՐ

Ի՞նչ, մի՞թէ մեռաւ:

Է.Դ.Գ.Ա.Ր

Դու նստի՛ր, հա՛յր իմ

Եւ հանգստացի՛ր: Գրպաններն հիմա

Քննենք. իր ասած նամակները ինձ

Կարող են գուցէ օգտակար լինել:

Այո մեռել է, բայց տխրում եմ ես,

Որ նա չունեցաւ մի ուրիշ դահին:

Դէ, տեսնենք: Թո՛ղ տուր, բարի կնքամո՛ւմ,

Եւ դու, խղճմտա՛նք, մի՛ կշտամբիր ինձ.

Թշնամիների թաքուն մտքերը

Տեսնելու համար մենք սիրտը նրանց

Կնեղքենք սիրով: Նամակ բանալը

Օրինատր է:

Կարդում է նամակը.

«Յիշի՛ր մեր փոխադարձ ուխտը: Դու շատ առիթներ ունես նրա կեանքին վերջ տալու համար: Եթէ կամքդ չթերանայ՝ առիթը եւ տեղը հեշտութեամբ կներկայանան: Մենք ոչինչ արած չենք լինի, եթէ նա յաջողութեամբ վերադառնայ. այն ժամանակ ես նրա գերին կմնամ, իսկ նրա անկողինը՝ իմ բան-

տր: Ազատի՛ր ինձ այդ մահնի զգուէլի ջերմութիւնից եւ բռնի՛ր նրա տեղը իբրեւ վարձ քո ծառայութեան:

~~«Ին անձնուէր աղախինը, որի բաղձանքն է լինել քո կինը»:~~

Ո՛վ անհուն անդունդ կանացի կամքի.

Ազնիւ ամուսնի կեանքի դէմ դառե՛լ

Եւ փոխարէնը եղբօ՞րս դնել:

Այստեղ թաղեմ քեզ, այս աւազի մէջ.

Ո՛վ դու մարդասպան, շնութեան միջնո՛րդ.

Եւ մի յարմար օր այս անարգ թուղթը

Պէտք է երեսայ այն դուքսի առջեւ,

Որի կեանքի դէմ թակարդ ես լարել:

Բախտատր է նա, որ կարող եմ ես

Հաղորդել նրան թէ՛ պաշտօնը քո

Եւ թէ՛ քո մահը:

Էդգարը դուրս է տանում դիակը:

Գ.ԼՈՍՏԷՐ

Մեր թագաւորը խելագարուել է.

Որքա՛ն յամառ է իմ անարգ խելքը,

Որ կանգուն եմ դեռ եւ գիտակցօրէն

Զգում եմ դեռ ես անհուն վշտերս:

Երանի՛ ես էլ խելագարուէի.

Մտածմունքներս գէթ կանջատուէին

Իմ կակիծներից: Մարդուս ցաւերը

Երեսակայութեան մոլորութեան մէջ

Էլ չեն գիտակցում:

Կրկին մտնում է Էդգարը:

Է.Դ.Գ.Ա.Ր

Տուէ՛ք ձեր ձեռքը, ինձ թում է. թէ

Մի թմբկի ձայն է մօտենում հետուից:

Եկէ՛ք ձեզ յանձնեմ մի բարեկամի:

Դուրս են գնում:

Յանձնի՛ր Էդմոնդին, Գլուստրի կոմսին.
Այժմ Անգլիոյ բանակում է նա:
Օ՛, տարածամ մահ:

Մեռնում է:

Է.Դ.ԳԱՐ

Ես քեզ լաւ գիտեմ.
Դու սրիկայ ես հաճոյակատար.
Տիկնոջդ ախտերին այնքան անձնուէր,
Որքան չարութիւնն ինքը կցանկար:

ԳԼՈՍՏԷՐ

Ի՞նչ, մի՞թէ մեռաւ:

Է.Դ.ԳԱՐ

Դու նստի՛ր, հա՛յր իմ
Եւ հանգստացի՛ր: Գրպաններն հիմա
Քննենք. իր ասած նամակները ինձ
Կարող են գուցէ օգտակար լինել:
Այո մեռել է, բայց տխրում եմ ես,
Որ նա չունեցաւ մի ուրիշ դահիճ:
Դէ, տեսնենք: Թո՛ւյլ տուր, բարի կնքամո՛ւմ,
Եւ դու, խղճմտա՛նք, մի՛ կշտամբիր ինձ.
Թշնամիների թաքուն մտքերը
Տեսնելու համար մենք սիրտը նրանց
Կճեղքենք սիրով: Նամակ բանալը
Օրինատր է:

Կարդում է նամակը.

«Յիշի՛ր մեր փոխադարձ ուխտը: Դու շատ առիթներ ունես
նրա կեանքին վերջ տալու համար: Եթէ կամքդ չթերանայ՝
առիթը եւ տեղը հեշտութեամբ կներկայանան: Մենք ոչինչ
արած չենք լինի, եթէ նա լաջողութեամբ վերադառնայ. այն
ժամանակ ես նրա գերին կմնամ, իսկ նրա անկողինը՝ իմ բան-

տր: Ազատի՛ր ինձ այդ մահճի գգուէլի ջերմութիւնից եւ բռնի՛ր
նրա տեղը իբրեւ վարձ քո ծառայութեան:

~~Քո անձնուէր աղախիւնը, որի բաղձանքն է լինել քո կինը:~~

Ո՛վ անհուն անդունդ կանացի կամքի.
Ազնիւ ամուսնի կեանքի դէմ դաւե՞լ
Եւ փոխարէնը եղբօ՞րս դնել:
Այստեղ թաղեմ քեզ, այս աւազի մէջ,
Ո՛վ դու մարդասպան, շնութեան միջնո՛րդ.
Եւ մի յարմար օր այս անարգ թուղթը
Պէտք է երեսայ այն դուքսի առջեւ,
Որի կեանքի դէմ թակարդ ես լարել:
Բախտատր է նա, որ կարող եմ ես
Հաղորդել նրան թէ՛ պաշտօնը քո
Եւ թէ՛ քո մահը:

Էդգարը դուրս է տանում դիակը:

ԳԼՈՍՏԷՐ

Մեր թագատրը խելագարուել է.
Որքա՛ն յամառ է իմ անարգ խելքը,
Որ կանգուն եմ դեռ եւ գիտակցօրէն
Զգում եմ դեռ ես անհուն վշտերս:
Երանի՛ ես էլ խելագարուէի.
Մտածմունքներս գէթ կանչատուէին
Իմ կակիծներից: Մարդու ցաւերը
Երեսակայութեան մոլորութեան մէջ
Էլ չեն գիտակցում:

Կրկին մտնում է Էդգարը:

Է.Դ.ԳԱՐ

Տուէ՛ք ձեր ձեռքը, ինձ թում է. թէ
Մի թմբկի ձայն է մօտենում հեռուից:
Եկէ՛ք ձեզ յանձնեմ մի բարեկամի:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Է.

Վրան ֆրանսիական բանակում
Մտնում են Կորդելիան, Քէնտը եւ մի բժիշկ:

ԿՈՐԴԵԼԻԱ,

Ո՛վ ազնի իմ Քէնտ, ես որքա՞ն ապրեմ
Եւ ի՞նչ կատարեմ, որ բարութեանդ
Լինեմ հատուցած: Կեանքս կարճ է շատ,
Եւ ամէն միջոց՝ ինձ անբարար:

ՔԷՆՏ

Մարդու արածը երբ հասկացուած է,
Վարձատրում է նա արդէն լրի:
Տիկի՛ն, իմ կողմից հաղորդած բոլոր
Լուրերը մաքուր ճշմարտութիւն են:
Ո՛չ յաւելում կայ, ո՛չ պակաս մի բան.
Ծիշտ այդպէս է հէնց:

ԿՈՐԴԵԼԻԱ,

Աւելի պատշաճ մի զգե՛ստ հազիր.
Այդ հագուստները դժնի օրերի
Յիշատակներ են, դէ՛ն՝ նետիր, խնդրեմ:

ՔԷՆՏ

Ներեցէ՛ք, խնդրեմ, բարի՛ տիրուհի,
Այսպէս վաղ յայտնել իմ ով լինելը
Վնասակար է ծրագիրներին:
Ես կհամարեմ շնորհ դէպի ինձ,
Եթէ տակաւին ինձ չճանաչէք,
Մի՛նչէս որ թե՛ ես, թե՛ ժամանակը
Յարմար գտնենք այդ:

ԿՈՐԴԵԼԻԱ,

Թող այդպէս լինի,

Սիրելի իմ լո՛րդ:
(Բժշկին).

Ինչպէ՞ս է արքան:

ԲԺԻՇԿ

Քնած է, տիկի՛ն:

ԿՈՐԴԵԼԻԱ,

Բարի աստուածնե՛ր,

Դուք ապաքինէ՛ք նրա խոշտանգուած,
Եղծուած բնութեան աներումը մեծ:
Օ՛հ, կա՛րգի դրէք այն սխալածայն
Եւ աններդաշնակ գաղափարները
Իմ մանկացած հօր:

ԲԺԻՇԿ

Հաճոյ՞ է արդեօք

Ձերդ մեծութեան, որ թագաւորին
Արթնացնենք քնից. նա երկար քնեց:

ԿՈՐԴԵԼԻԱ,

Ձեր գիտութիւնը թող այդ որոշի,
Վարուցէք այնպէ՛ս, ինչպէս ձեր կամքն է:
Նա հազնուած է:

Լիրին ներս են բերում՝ աթոռի մէջ նստած:

ՄԻ ԱՍՊԵՏ

Այո, տիրուհի՛:

Երբ խոր քնած էր, մենք նոր զգեստներ
Հագցրինք նրան:

ԲԺԻՇԿ

Ազնի՛ տիրուհի,

Նրա մօտ եղէք, երբ կարթնացնենք.
Վստահ եմ, որ նա հանդարտ կլինի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Շատ լաւ:

ԲԺԻՇԿ

Տիրուհի՛, մօտ եկէք, խնդրեմ:

Երաժշտութիւնն աւելի բարձր:

ԿՈՐԴԵԼԻԱ

Հա՛յր իմ սիրելի: Ո՛վ բժշկութիւն,

Կաթի՛ր քո դէղը իմ շրթունքներին,

Թող այս համբոյրս բալասան դառնայ

Այն խոր խոցերին, որ իմ քոյրերը

Քեզ պատճառեցին օրերում քո վեհ:

ՔԷՆՏ

Ո՛վ դու բարեսիրտ, անգի՛ն թագուհի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Եթէ հայր անգամ դու չլինէիր՝

Գլխիդ սպիտակ մազերը պիտի

Շարժէին նրանց կարեկցութիւնը:

Մի՞թէ այնպիսի դէմք է սա, որ մարդ

Ենթարկի նրան անզուսպ հողմերին,

Սոսկալի շանթով զինուած որոտին,

Որ պահակ կանգնի նա զարհուրելի

Կրակի ներքոյ, իբր խեղճ զինուոր՝

Այսպիսի բարակ մի սաղաարտով:

Ցոյց է տալիս նրա մազերը:

Եթէ թշնամու շունն իսկ ինձ կծեր,

Նման գիշերով նա տեղ կգտնէր

Կրակիս առջեւ, իսկ դու, խեղճ հայրիկ,

Ստիպուած էիր օթեան գտնել

Խոզերի, անտուն աղքատների հետ՝

Չոր հարդի վրայ: Աւա՛ղ, հրաշք է,

Որ միանգամից կեանքդ եւ խելքդ
Վախճան չգտան: Չարթնում է ահա.
Խօսեցէ՛ք իր հետ:

ԲԺԻՇԿ

Աւելի լաւ է՝

Դո՛ւք խօսէք, տիկի՛ն:

ԿՈՐԴԵԼԻԱ

Արդեօք ինչպէ՞ս է

Վեհափառ տէրս. ինչպէ՞ս է զգում

Ձերդ մեծութիւնը:

ԼԻՐ

Դուք վատ էք անում,

Որ դուրս էք քաշում ինձ գերեզմանից:

(Կորդելիային).

Դու մի հոգի եւ երանութեան մէջ,

Իսկ եւ կապուած եմ հրէ անիւին,

Եւ իմ սեփական արցունքները ինձ

Այրում են հալած կապարի նման:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ծանաչո՞ւմ էք ինձ, տէ՛ր իմ:

ԼԻՐ

Ես գիտեմ՝

Դու մի ոգի ես: Ե՞րբ վախճանուեցիր:

ԿՈՐԴԵԼԻԱ

Դեռ շատ հեռու է:

ԲԺԻՇԿ

Դեռ նոր է զարթնել.

Թողնենք մի վայրկեան առանձին մնայ:

Հեռանում են անկողնուց:

ԼԻՐ

Որտե՞ղ էի ես եւ ո՞ր եմ հիմա:
Օ՛հ, գեղեցիկ լո՛յս: Խաբուած եմ սաստիկ.
Ես կմեռնէի կարեկցութիւնից,
Թէ մի ուրիշին այսպէս տեսնէի,
Ի՞նչ անեմ հիմա: Չեմ կարող երդուել,
Թէ այս ձեռքերը իմն են: Բայց տեսնեմք.
Այս գնդասեղի ծակոցն զգում եմ:
Երանե՛կ վիճակիս վստահ լինէի:

ԿՈՐԳԵԼԻԱ

Օ՛հ, նայի՛ր ինձ, տէ՛ր, եւ դի՛ր իմ գլխին
Օրհնութեան ձեռքը:

Լիրը ծունկ է չորում Կորդելիայի առաջ.
Կորդելիան արգելում է:

Ո՛չ, տէ՛ր, մի՛ չոքիր:

ԼԻՐ

Ա՛խ, մի՛ ծաղրիր ինձ.
Ես մի շատ յիմար ու խեղճ ծերուկ եմ:
Ութսուն տարեկան, զուցէ անլի.
Ոչ մի ժամ անել եւ ոչ էլ պակաս.
Սակայն, ճի՛շտն ասա, ես վախենում եմ,
Որ իմ ուղեղը խանգարուած լինի.
Ինձ թում է, թէ դուք ինձ ծանօթ էք,
Այս մարդը ես, բայց կասկածում եմ,
Քանզի չգիտեմ, թէ որտե՛ղ է այս,
Յիշողութիւնս չի կարող յիշել
Այս զգեստները, ոչ էլ ես գիտեմ,
Թէ երէկ գիշեր որտեղ քնեցի:
Մի՛ ծաղրիր դու ինձ, որքան որ ճիշտ է,
Որ մի մարդ եմ ես, այնքան վստահ եմ,
Որ այս տիկինը իմ Կորդելիան է:

ԿՈՐԳԵԼԻԱ

Այո՛, ես եմ, հա՛յր:

ԼԻՐ

Արտասուքներդ թրջո՞ւմ են արդեօք.
Այո, ճշմարիտ, խնորրում եմ, մի՛ լար:
Եթէ ինձ համար թոյն ունես պատրաստ՝
Տո՛ւր ինձ, որ խմեմ: Ես իմանում եմ՝
Դու ինձ չես սիրում. քանզի քոյրերդ,
Որքան յիշում եմ, ինձ շատ տանջեցին.
Դու պատճառ ունես, նրանք չունէին:

ԿՈՐԳԵԼԻԱ

Ես պատճառ չունեմ, ո՛չ, ամենեւի՛ն:

ԼԻՐ

Ֆրանսիայո՞ւմ եմ ես:

ՔԷՆՏ

Դուք ձեր սեփական պետութեան մէջ էք:

ԼԻՐ

Մի՛ խաբէք դուք ինձ:

ԲԺԻՇԿ

Միամիտ եղէք,
Բա՛րի տիրուհի, այն մեծ տազնապը,
Ինչպէս տեսնում էք, բժշկուած է արդ.
Բայց այսուհանդերձ վտանգատոր է
Նրան յիշեցնել անցած օրերը:
Խնդրեցէ՛ք ներս գալ, եւ մի վրդովէք
Նրա հանգիստը, մինչ լաւ կազդուրուի:

ԿՈՐԳԵԼԻԱ

Ձեր մեծութիւնը արդեօք կամք չունի՞
Մի քիչ քայլելու:

ԼԻՐ

Պետք է ներես ինձ,
Աղաչում եմ քեզ, մոռացի՛ր եւ ինձ
Ների՛ր, քանզի եւ ծեր եմ եւ տխմար:

Դուրս են գնում Լիրը, Կորդելիան, բժիշկը եւ սպասաւորները:

ԱՍՊԵՏ

Ուրեմն ճի՞շտ է Կորնվալի դուքսի
Սպանուելը, տէ՛ր:

ՔԷՆՏ

Բոլորովին ճիշտ:

ԱՍՊԵՏ

Ո՞վ է իր գօրքի հրամանատարը:

ՔԷՆՏ

Ինչպէս պատմում են՝ Գլոստերի կոմսի
Ապօրէն որդին:

ԱՍՊԵՏ

Էդգարն, ասում են,
Աքսորուած որդին, Քէնտի կոմսի հետ
Գերմանիայում են:

ՔԷՆՏ

Տարբեր լուրեր կան,
Ժամանակ է արդ գգոյշ լինելու,
Պետութեան գօրքը մեծ արագութեամբ
Առաջանում է:

ԱՍՊԵՏ

Այնպէս է թում,
Որ հանդիպումը արհնոուշտ կլինի:
Մճաք բարով, տէ՛ր:

Դուրս է գնում:


ՔԷՆՏ

Յատակագիծս

Եւ նստակա մօտենում եմ արդ
Իրենց կատարման: Կա՛մ լաւ է, կա՛մ վատ
Լինելու, նայած այսօրուայ մարտին:

Դուրս է գնում:





ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Անգլիական բանակը Դուլքի մօտ
Մտնում են թմբուկներով և դրօշակներով Էդմոնդը, Ռեգանը,
ասպետներ և զինուորներ:

ԷԴՄՈՆԴ

Իմացե՛ք դուքսից, թե՛ նա հաստա՞տ է
Իր որոշման մեջ, թե՞ որեւէ թան
Դրդել է նրան փոխել իր միտքը:
Նա փոփոխամիտ և հակասող է.
Լո՛րք բեր ինձ նրա վերջնական կամքից:

Մի սպայ դուրս է գնում:

ՌԵԳԱՆ

Քրոջս ծառային պետք է մի փորձանք
Պատահած լինի:

ԷԴՄՈՆԴ

Երկիրդ կա, տիկի՛ն:

ՌԵԳԱՆ

Լա՛ւ, ազնի՛ւ պարոն, ձեզ քաջ յայտնի է,

Թե՛ որքան բարիք ցանկանում եմ ձեզ.
Ասացե՛ք, բայց ճիշտ. անկե՛ղծ ասացեք...
Չե՞ք սիրում արդեօք քրոջս...

ԷԴՄՈՆԴ

Միայն

Յարգալից սիրով:

ՌԵԳԱՆ

Բայց երբեւիցե՛
Դուք չե՞ք գնացել արգելուած շատով:

ԷԴՄՈՆԴ

Ո՛չ, այդ կարծիքը մոլորում է ձեզ:

ՌԵԳԱՆ

Ես կասկածում եմ, որ դուք նրա հետ
Այնքան միացել, մտերմացել էք,
Որ դուք նրանն էք:

ԷԴՄՈՆԴ

Այդպես չէ, տիկի՛ն.
Երդում եմ պատուով:

ՌԵԳԱՆ

Ա՛խ, նա ինձ համար
Անտանելի է, սիրելի իմ լո՛րդ.
Մի՛ լինէք նրան այդչափ ընտանի:

ԷԴՄՈՆԴ

Միամի՛տ եղէք, ահա նա եկաւ
Իր ամուսնու հետ:

Մտնում են թմբուկներով և դրօշակներով Ալբանին, Գոներիլը և
զինուորներ:

ԳՈՆԵՐԻԼ
(Առանձին).

Ես ատլի շուտ համաձայն եմ այս
կուում պարտութիւն կրել, քան թոյլ տալ,
Որ մեզ անջատէ քոյրս իրարից:

ԱԼԲԱՆԻ

Սիրեցեալ իմ քո'յր, քեզ բարի գալո՛ւստ.
(Էդմոնդին).

Պարո՛ն, լսել եմ, արքան եկել է
Իր աղջկայ մօտ բոլոր նրանց հետ,
Ում որ վարչական մեր խստութիւնը
Առիթ է տուել բողոքել մեր դէմ:
Ինձ անհնար է քաջ հանդիսանալ,
Երբ որ իմ դատը չէ արդար մի դատ:
Եթէ այս գործում մենք զէնք ենք առել՝
Այն պատճառով է, որ Ֆրանսիան
Մտել է այսօր հայրենիքը մեր,
Ոչ այն, որ մեցուկ է հանդիսանում
Մեր թագաւորին եւ ուրիշներին,
Որոնք, կարծում եմ, ունեն շատ արդար
Եւ լուրջ պատճառներ դուրս գալու մեր դէմ:

ԷԴՄՈՆԳ
(Հեզնական).

Դո՛ւքս, խօսում էք դուք շատ ազնիւ կերպով:

ՌԵԳԱՆ

Բայց ի՞նչ կարիք կայ տրամաբանելու:

ԳՈՆԵՐԻԼ

Պէտք է միանանք ընդդէմ թշնամու.
Ներքին անձնական գծտութիւնները
Պէտք է վերանան:

ԱԼԲԱՆԻ

Ուրեմն կազմենք
Ծեր ուսուցիչների խորհրդակցութեամբ
Մեր ծրագիրը:

ԷԴՄՈՆԳ

Լաւ, մի քիչ յետոյ
Ես ձեզ մօտ կգամ:

ՌԵԳԱՆ

Քո՛յր, կգա՞ս մեզ հետ:

ԳՈՆԵՐԻԼ

Ո՛չ:

ՌԵԳԱՆ

Ծատ լարմար է, խնդրեմ, ե՛կ մեզ հետ:

ԳՈՆԵՐԻԼ

(Առանձին).

Օհո՛, հասկացայ: Ծատ լաւ, գալիս եմ:

Ուզում է դուրս գնալ, երբ մտնում է Էդգարը՝ ծպտեալ:

ԷԴԳԱՐ

Ձեր բարձրութիւնը եթէ արժանի
Համարի խօսել մի խեղճ մարդու հետ,
Թող լսէ նրան:

ԱԼԲԱՆԻ

(Գնացողներին).

Ես ձեզ կհասնեմ:

Խօսի՛ր:

Էդմոնդը, Ռեգանը, Գոներիլը եւ հետետրոյնները դուրս են գնում:

ԲԺԻՇԿ

Ճար կայ, տիրուհի՛, բնութեան բուժիչ
Քունն է, եւ դրան նա կարօտ է խիստ:
Եւ դրա համար այնպիսի ազդու
Խոտեր կան բուրեան, որ ընդունակ են
Անգամ տրտմութեան աչքը փակելու:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛վ սուրբ գաղտնիքներ, ո՛վ երկրի բոլոր
Թաքնուած ուժեր եւ զօրութիւններ,
Դո՛ւրս արձակուեցէք արցունքներիս հետ,
Օգնութի՛ն տուէք եւ ապաքինում
Բարի ծերունու դժբախտութեանը:
Գնացէ՛ք խնդրեմ, փնտրեցէ՛ք նրան,
Կարող է յանկարծ զայրոյթը անգուսպ
Կործանել նրա կեանքը, որ չունի
Ոչ մի առաջնորդ:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նոր լուր, տիրուհի՛.
Բրիտանեան զօրքը առաջանում է:

ԿՈՐԴԵԼԻԱ

Այդ վաղուց գիտենք եւ պատրաստ ենք մենք
Նրանց ընդունել: Օ՛հ, սիրելի հայր,
Քեզ համար եմ լոկ ես եկել այստեղ.
Մե՛ծն Ֆրանսիան գթաց իմ սուգին
Եւ արցունքներին իմ թախանձական:
Մեզ ոչ թէ փառքի սյն տենչն է զինել,
Այլ սէրը միայն, սէրը կաթոգին
Եւ ծերուկ մեր հօր իրատունքները:
Ա՛խ, գէթ նրանից մի լուր առնէի,
Տեսնէի նրան:

Դուրս են գնում:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

Ռեզանի պալատը
Մտնում են Ռեզանը եւ Օսվալդը:

ՌԵԳԱՆ
Եղբօրս զօրքը ճանապարհ ընկա՞ւ:

ՕՍՎԱԼԴ
Այո, տիրուհի՛:

ՌԵԳԱՆ
Եւ ի՞նքն էլ անձամբ:

ՕՍՎԱԼԴ
Այո, տիրուհի՛, մեծ դժուարութեամբ:
Ձեր բոլորն անելի արի զինուոր է:

ՌԵԳԱՆ
Իսկ լորդ Էդմոնդը չխօսե՞ց արդեօք
Ձեր տիրուհու հետ:

ՕՍՎԱԼԴ
Օ՛, ո՛չ, տիրուհի:

ՌԵԳԱՆ
Քրոջս գրած նամակում նրան
Ի՞նչ պէտք է լինի:

ՕՍՎԱԼԴ
Չգիտեմ, տիկի՛ն:

ՌԵԳԱՆ
Անշուշտ կարելուք մի պատճառ ունէր,
Որ այնքան արագ մեկնեց այստեղից:

ԷՂԳԱՐ

Նախքան սկսեք ճակատամարտը՝
Բացե՛ք նամակն այս: Թե յաղթող լինե՛ք՝
Թմբուկի ձայնով կանչեցե՛ք նրան,
Ով այս ձեզ բերեց:
Թե պետ ձեր աչքին խղճուկ եմ թում,
Բայց ես մի մարտիկ հանդես կբերեմ,
Որ կապացուցի այստեղ գրուածը:
Իսկ եթէ պարտուե՛ք՝ ձեր դերն այս կեանքում
Արդէն վերջացած կլինի, եւ էլ
Անմիտ կդառնան դատերը ձեր դէմ:
Բախտը ձեզ օգնէ՛:

ԱԼԲԱՆԻ

Կա՛ց, մինչեւ կարդամ:

ԷՂԳԱՐ

Արգելուած է ինձ. առիթը երբ գայ՝
Թող մուկետիկը ձայն տայ մի անգամ,
Եւ ես կբերամ:

Դուրս է գնում:

ԱԼԲԱՆԻ

Լաւ, գնաս բարո՛վ:

Մի ակնարկ նետեմ նամակի վրայ:

Էդմոնդը կրկին ներս է գալիս:

ԷՂՄՈՆԴ

Թշնամին ահա երեսաց, գօրքը
Ծարքի՛ բերեցեք: Ահա թշնամու
Բոլոր ուժերի մօտաւոր հաշիւն,
Որ ձեռք է բերուած խոր խուզարկութեամբ:
Կարիք կայ, սակայն, որ արդ շտապենք:

ԱԼԲԱՆԻ

Պատրաստ ենք հասնել իր ժամանակին:

Դուրս է գնում:

ԷՂՄՈՆԴ

Ես սէր եմ ուխտել երկու քոյրերին,
Իսկ նրանք իրար ատում են այնպէս,
Ինչպէս խայթուողը ատում է իժին:
Ո՞ր մէկին առնեմ, մէկի՞ն, երկուսի՞ն:
Ոչ մէկի՞ն գուցէ:

Ոչ մէկին, սակայն, ես չեմ ստանայ,
Եթէ երկուսն էլ կենդանի մնան:
Այրու հետ կապուել նշանակում է
Կատաղեցնել նրա քրոջը,

Եւ շատ դժուար է այդ գլուխ բերել,
Քանի դեռ ողջ է իր ամուսինը:
Առայժմ սակայն դեռ օգտագործենք
Նրա օգնութիւնն այս պատերազմում,
Իսկ յետոյ կինը եթէ կամենայ
Ազատուել նրա ներկայութիւնից,
Թող մի ճար գտնի, որով անյապաղ
Կարենայ նրան մէջտեղից հանել:
Իսկ այժմ նա լոկ այն է մտորում,
Որպէսզի Լիրին եւ Կորդելիային
Ցոյց տայ օգնութիւն եւ կարեկցութիւն...
Բայց յաղթանակից յետոյ երբ նրանք
Ընկնեն իմ ձեռքը, չեն տեսնի երբէք
Գթութեան երես: Բաւական է, արդ
Պաշտպանուել է պէտք եւ ոչ թէ դատարկ
Տրամաբանել:

Դուրս է գնում:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Աղմուկ ներսից, բեմի վրայով անցնում են թմբուկներով եւ դրօշակներով Լիրը, Կորդելիան՝ իրենց գօրքերի հետ: Նրանցից յետոյ մտնում են Էդգարն ու Գլուստերը:

ԷԴԳԱՐ

Ե՛կ, հա՛յր, ընդունի՛ր ծառի հովանին,
Իբրեւ բարերար մի հանգստավայր,
Եւ աղօ՛թք արա, որ արդարութեան
Գործն յաղթանակի: Ետ գամ եթէ ես՝
Կբերեմ ինձ հետ սփոփիչ լուրեր:

Էդգարը գնում է...*

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Մտնում է յաղթական թմբուկներով եւ դրօշակներով Էդմոնդը:
Լիրը եւ Կորդելիան, որպէս գերիներ, հետեւում են նրան:
Զինուորներ, սպաներ եւ այլն

ԷԴՄՈՆԴ

Մի քանի սպայ թող տանեն սրանց
Եւ լաւ պահպանեն մինչեւ յայտնուի
Նրանց տերերի գերագոյն կամքը:

ԿՈՐԴԵԼԻԱ

Շատերն են եղել մեզանից առաջ,
Որ ազնի գործի ձգտելու համար
Արժանացել են վատագոյն բախտի:
Քեզ համար միայն, ո՛վ թշուառ արքայ,
Դառնանում եմ ես:
Եթէ ես մենակ լինէի այստեղ, կարհամարհէի

* Մեքենագիր օրհնակում այսուհետեւ 11 տող պակաս է (Հ.Բ.):

Կեղծատր բախտի թշնամանանքը:
Չե՞՞նք կարող արդեօք տեսնել մենք մեր այն
Դուստրերին կամ այն քոյրերին:

ԼԻՐ

Ո՛չ, ո՛չ,

Ո՛չ, գնանք բանտը, երկուսս մենակ
Կերգենք միասին, ինչպէս թռչուններ
Վանդակում փակուած:

Երբ դու ինձանից օրհնութիւն խնդրես,
Չորած քո առջեւ՝ ինքս քեզանից
Ներում կհայցեմ. այսպէս մենք կապրենք,
Կաղօթենք, կերգենք եւ հին հէքեաթներ
Կպատմենք իրար եւ կծիծաղենք
Այն թիթեռների վրայ ոսկերես,
Որ որպէս խղճուկ թշուառականներ
Խօսում են ճղճիմ գործերի մասին,
Լուրերի մասին այն պալատական.
Մենք էլ նրանցից կիմանանք այդ սին
Գործերի մասին՝ թէ ով է ընկել,
Ով է բարձրացել կամ հարստացել,
Ո՛ւմ գործերն են վատ եւ ո՛ւմ՝ յաջողակ,
Եւ այդ գործերի էութիւնը լոկ
Դիտելով՝ մենք մեզ կբացատրենք
Իրերի գաղտնիքն, ինչպէս Աստուծոյ
Երկու ընտրեալներ կամ առաքեալներ...
Եւ այսպէս, բանտի պարիսպների մէջ
Կմաշենք բազում մեծամեծների
Խմբեր ու դասեր, որոնք լուսնի հետ
Կելնեն ու կիջնեն, կելնեն ու կիջնեն...

ԷԴՄՈՆԴ

Հեռացրէ՛ք սրանց:

ԼԻՐ

Ո՛վ իմ Կորդելիա,

Այսպիսի վեսմ գոհողութիւններն
Աստուածներն իրենք կնդրուկով կօծեն:
Արդեօք իսկապէ՞ս գտել եմ ես քեզ.
Ով մեզ իրարից անջատել ուզէ՝
Պէտք է երկնքից կրակ բերէ ցած
Եւ մեզ այստեղից հրով հալածէ՝
Աղուէսներին եւ ինչպէս հալածում:
Սրբի՛ր աչքերդ, բորոտութիւնը
Կկրծէ նրանց մարմինն ու կաշին,
Նախքան կարենան արտասուել տալ մեզ:
Նախքան այդ՝ նրանք կմեռնեն քաղցից:
Դէ, գնա՛նք:

Լիրը եւ Կորդելիան դուրս են գնում՝
շրջապատուած պահակներով:

ԷԴՄՈՆԴ

Մո՛տ եկ, գնդապետ: Լսի՛ր, թուղթն այս ա՛ն
Եւ մեկնի՛ր դու բանտ նրանց ետեւից,
Քեզ մի աստիճան բարձրացրել եմ ես,
Եթէ կատարես ինչ որ այս գրքում
Հրամայուած է, փառքի շափողը
Կբանաս քո դէմ: Իմացի՛ր դու լաւ.
Այնպէս եւ մարդիկ, ինչպէս աշխարհը,
Զինուորի համար անվայել բան է
Լինել փափկասիրտ: Այս գործը, որ քեզ
Յանձնարարում եմ, վե՛ճ չի պահանջում.
Կա՛մ՝ այո, կա՛մ՝ ոչ. կա՛մ կկատարես,
Կա՛մ բախտ որոնիր այլ միջոցներով:

ԳՆԴԱՊԵՏ

Համաձայն եմ, տէ՛ր:

ԷԴՄՈՆԴ

Ուրեմն՝ ի գո՛րծ.
Եւ քեզ երջանիկ մի մարդ համարիր,

Եթէ կատարես իմ հրամանը:
Լսո՞ւմ ես հիմա, հէ՛նց իսկոյն եւեթ
Ինչպէս գրուած է՝ այնպէս էլ կանես:

ԳՆԴԱՊԵՏ

Ես սայլ չեմ կարող քաշել կամ ուտել
Չոր խոտ, բայց եթէ գործն այդ մի մարդու
Ուժերից վեր չէ, ես կկատարեմ:

Դուրս է գնում:

Յեփորներ. մտնում են Ալբանին, Գոհերիլը,
Ռեզանը եւ զինուորներ:

ԱԼԲԱՆԻ

(Էդմոնդին).

Դուք մեծ քաջութիւն ցոյց տուիք այսօր,
Բախտն էլ ձեզ, միլո՛րդ, լաւ առաջնորդեց.
Գերի վերցրիք դուք այն անձերին,
Որոնք այս կուում ոսոխներ էին:
Մենք պահանջում ենք այժմ, որ նրանց
Յանձնէք մեր կամքին, եւ մենք նրանց հետ
Կվարուենք այնպէս, ինչպէս վայել է
Թէ՛ նրանց դիրքին. թէ՛ մեր սեփական
Ապահովութեան:

ԷԴՄՈՆԴ

Ես յարմար գտայ,

Տէ՛ր իմ, զառամեալ այդ թագաւորին
Առնել խորագոյն կալանքի ներքոյ,
Նրա տարիքը, առաւել եւս
Նրա տիտղոսը՝ հմայքներ ունեն
Միամիտ, ուսիկ սրտերի համար
Եւ ընդունակ եմ մեր դէմ դարձնել
Այն միզակները, որ հլու եմ մեզ:
Այդ նոյն պատճառով ես ուղարկեցի
Նաեւ թագուհուն: Պատրաստ եմ նոքա

Վաղը կամ այլ օր ներկայանալ ձեզ,
Ուր ժողով կազմէք: Բայց այժմ մենք դեռ
Թափում ենք ահա արիւն ու քրտինք,
Դեռ ուզմի դաշտում դիեր կան ընկած
Բարեկամների. ամենից արդար
Պատերազմները անէծք են բոլոր
Այն անձանց համար, որ զգացել են
Նրանց խոցերը: Թէ՛ Կորդելիայի
Եւ թէ՛ հօր դատը պէտք է կայանայ
Մի յարմար տեղում:

ԱԼԲԱՆԻ

Ներեցէ՛ք, պարո՛ն:

Ես այս կուի մէջ համարում եմ ձեզ
Մի պարզ հպատակ եւ ոչ թէ եղբայր:

ՌԵԳԱՆ

Մենք այդ տիտղոսը բարեհաճում ենք
Ընորհել նրան: Կարծում եմ՝ հարկ էր
Մեր ցանկութիւնը մեզանից լսել,
Նախքան բարբառել այդքան բարձրաձայն:
Նա առաջնորդեց մեր բանակներին
Ե՛ւ իմ անունից, ե՛ւ իմ փոխարէն:
Կարող է նման մի հրամանատար
Վեհութեամբ կանգնել եւ ձեր եղբայրը
Անուանել իրեն:

ԳՈՆԵՐԻԼ

Ծատ մի՛ք տաքանա.

Նա իր սեփական արժանիքներով
Աւելի բարձր է, քան ձեր շնորհած
Այդ պաշտպանութեամբ:

ՌԵԳԱՆ

Ընորհի տուածս իրաւունքների
Նա հաւասար է լաւագոյններին:

ԳՈՆԵՐԻԼ

Ամենամեծը հէնց այն կլիներ,
Որ պսակուէիք:

ՌԵԳԱՆ

Ծաղրը շատ անգամ գուշակութիւն է:

ԳՈՆԵՐԻԼ

Կամա՛ց, քո՛յր, կամա՛ց,
Այն աչքը, որով տեսել էք դուք այդ՝
Քիչ շիւ է եղել:

ՌԵԳԱՆ

Տկար եմ, տիկի՛ն,

Եթէ ոչ՝ սրտանց ես ձեզ կտայի
Ձեր պատասխանը:
(Էդմոնդին).

Զօրապե՛տ իմ, ա՛ն

Զօրքերս բոլոր եւ երկիրներս,
Տիրի՛ր նրանց հետ նաեւ ինձ: Ահա՛
Բերդն անձնատուր է լինում լիովին,
Վկայ է աշխարհ, որ քեզ՝ ինձ վրայ
Կարգում եմ ահա տէր եւ ամուսին:

ԳՈՆԵՐԻԼ

Ուրեմն յոյս ունես տիրանա՞լ նրան:

ԱԼԲԱՆԻ

(Գոնեքիլին).

Այդ քեզանից չէ կախուած, տիրուհի՛:

ԷԴՄՈՆԴ

Եւ ոչ էլ կախուած քո բարի կամքից:

ԱԼԲԱՆԻ

Դեռ կա՛ց, խօ՛սք լսի՛ր:

Էդմո՛նդ, քեզ ահա ձերբակալում եմ,
Իբրեւ պետական մի դատաճանհ,
Եւ այս ոսկեգօծ օձին էլ քեզ հետ:

Ցոյց է տալիս Գոներիլին, ապա դառնալով Ռեգանին.

Գալով պահանջիդ, գեղեցիկ քո՛չր իմ,
Ես ժխտում եմ այն յօգուտ իմ կնոջ:
Երկրորդ դաշինքով նա նշանուած է
Այս պարսիկի հետ: Եւ ես, որ նրա
Ամուսինն եմ, արդ հակառակ եմ ձեր
Ամուսնութեանը, իսկ դուք, տիրուհի՛,
Եթէ ունէք կամք ամուսնանալու,
Ուրեմն ի՛նձ հետ սիրաբանեցէք:
Իմ տիկինն արդէն հարսնախօսուած է:

ԳՈՆԵՐԻԼ

Այս ի՞նչ կատակ է:

ԱԼԲԱՆԻ

Զինուած ես, Գլոստէ՛ր,

Թող հնչէ փողը, եթէ դուրս չգայ
Ոչ ոք՝ երեսիդ խփելու համար
Քո պիղծ, ակներեւ, անթի դաւերը,
Պատրաստ եմ ինքս, ահա գրաւը:

Զգում է նրան իր ձեռնոցը.

Սիրող ճեղքելով ես կապացուցեմ,
Նախքան մի փշուր հաց ճաշակելս,
Որ դու ոչնչով պակաս չես, քան այն,
Ինչ որ ասացի:

ՌԵԳԱՆ

Ա՛խ, ես հիւանդ եմ:

ԳՈՆԵՐԻԼ

(Առանձին).

Թէ չլինէիր, ես ոչ մի թոյնի
Չէի հաւատայ:

ԷԴՄՈՆԴ

Ահա փոխարէճն իմ երաշխիքը.

Զգում է իր ձեռնոցը.

Եթէ աշխարհում գոճէ մէկը կայ,
Որ ինձ դաւանան կոչել խիզախի,
Նա ստախօս է, որպէս սրիկայ,
Կանչի՛ր քո փողով, ով էլ որ դուրս գայ,
Նրա կամ քո դէմ, կամ թէ բլթրիդ՝
Ես կպաշտպանեմ ճշմարտութիւնը
Եւ իմ պատիւը:

ԱԼԲԱՆԻ

Է՛յ դու, մունետի՛կ:

ԷԴՄՈՆԴ

Մունետի՛կ, դէ շո՛ւտ:

Մտնում է մունետիկը:

ԱԼԲԱՆԻ

Յոյսդ դիր միայն քո անձի՛ վրայ.
Քո զինուորները խմբուած են այնտեղ
Լոկ իմ անունով եւ այժմ նրանք
Իմ անունից էլ արձակուած են տուն:

ՌԵԳԱՆ

Հիւանդութիւնս սաստկանում է խիստ:

ԱԼԲԱՆԻ

(Իր թիկնապահներին)

Նա շատ հիւանդ է, տարէ՛ք վրանս:

Ռեզանին տանում են:

Դէ ե՛կ, մումնետի՛կ, փո՛ղ հնչեցրէք,

Իսկ դու բարձրաձայն կարդա՛ այս թուղթը:

ՄԻ ՍՊԱՅ

Հնչեցրո՛ւ փողդ:

Փողը հնչում է:

ՄՈՒՆԵՏԻԿ

(Կարդում է). «Եթէ կայ գօրքի շարքերում մի որեւէ աստիճանատր կամ դիրքի տէր մարդ, որը կամենում է հաստատել ընդդէմ Էդմոնդի, ինքնակալ կոմս Գլոստերի, որ նա յանցատր է բազմաթիւ դաւաճանութիւններով, թող դուրս գայ փողի երրորդ հնչիւնին. Էդմոնդը պատրաստ է ինքն իրեն պաշտպանելու»:

ԷԴՄՈՆԴ

Հնչեցրո՛ւ:

Առաջին փող

ՄՈՒՆԵՏԻԿ

Կրկի՛ն:

Երկրորդ փող

ՄՈՒՆԵՏԻԿ

Կրկի՛ն:

Երրորդ փող

Փողի ձայն ներսից, Էդգարը մտնում է զինուած, նրա առջեւից քայլում է մի փողհար:

ԱԼԲԱՆԻ

(Փողհարին)

Հարցրո՛ւ նրանից իր նպատակը.

Ինչո՞ւ դուրս եկաւ այս փողի ձայնին:

ՄՈՒՆԵՏԻԿ

Ո՞վ ես դու, անունդ ու աստիճանդ.

Եւ ի՞նչ պատճառով պատասխանեցիր

Այս մարտակոչին:

ԷԴԳԱՐ

Ես ամուն չունեմ.

Դաւաճանութեան ատամը նրան

Կրծել է, մաշել, որդնակեր արել.

Բայց ես ազնիւ եմ, որքան նա, ում դէմ

Ես եկայ ահա մենամարտելու:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ է այդ մարդը:

ԷԴԳԱՐ

Ո՞վ է այն մարդը,

Որ ձայն է տալիս յանուն Էդմոնդի,

Գլոստերի կոմսի:

ԷԴՄՈՆԴ

Ես եմ. ի՞նչ ունես ասելու դու ինձ.

ԷԴԳԱՐ

Դո՛ւրս քաշիր սուրդ, որ եթէ յանկարծ

Խօսքերս խոցեն անբասիր մի սիրտ՝

Ձեռքդ կարենայ վրէժխնդիր լինել.

Ահա եւ իմը:

Քաշում է սուրը:

Տես, այս է ահա
Պատուիս, երդումիս եւ ասպետութեանս
Միակ իրաւունքն ու ասպաւէնը:
Հաստատում եմ ես ահա քո ուժիդ,
Հասակիդ, դիրքիդ, բարձրութեանդ ընդդէմ
Հակառակ քո այդ յաղթական սրիդ,
Որ դաւաճան ես, անհաւատարիմ
Դու աստուածների, քո հօր, քո եղբօր
Եւ ազնուագոյն այս իշխանի դէմ,
Որ դու՛ քո գլխի բարձրագոյն կէտից
Մինչեւ ոտքերիդ տակ փռուած փոշին,
Գորտի պէս ժահրոտ մի դաւադիր ես:
Եթէ ասես «ոչ», այս սուրն, այս ձեռքը,
Եւ իմ ունեցած արիութիւնը
Պարտք են համարում քո սրտի վրայ
Հաստատել, որ դու մի ստախօս ես:

ԷԴՄՈՆԴ

Խոհեմութիւնը դրդում էր, որ ես
Նախ իմանայի անունդ, բայց քո
Դէմքը գեղեցիկ, պատերազմասէր
Եւ լեզուդ, որ ինձ յոյս են ներշնչում,
Որ ունես իրօք դու ազնիւ ծագում,
Ինձ թոյլ են տալիս ուշ չդարձնել
Այդ առարկութեանց վրայ, թէեւ ես,
Ըստ ասպետական կարգ ու կանոնի,
Կարող էի այդ պատրուակ բերել
Արհամարհելու խօսքերդ, բայց ես
Զգուանքով ահա ետ եմ շարտում՝
Քո դէմքին բոլոր քո ասած զազիր
Մեղադրանքը դաւաճանական,
Քո դժոխային ստախօսութեամբ
Հէնց քեզ եմ խոցում, քանի որ դրանք
Ծեղում են իրենց նշանի կէտից
Եւ վերք չեն տալիս իմ սրտին երբէք.
Սակայն իմ սրով ես նրանց առաջ

Ծամփայ կբանամ, ուր նրանք ընդմիջտ
Կմեխուեն, ընդմիջտ կհանգստանան:
Հնչեցէ՛ք, փողե՛ր:

Փողեր. մենամարտում են, Էդմոնդը ընկնում է:

ԱԼԲԱՆԻ

Խնայի՛ր, խղճա՛:

ԳՈՆԵՐԻԼ

Խարուեցիր, Գլո՛ստէր,

Չէիր պարտաւոր դու դուրս գալ անյայտ
Ախոյեանի դէմ: Ո՛չ, դու պարտուած չես,
Այլ գոհ ես միայն մի խարդախ դաւի
Եւ խաբէութեան:

ԱԼԲԱՆԻ

Փակեցէ՛ք, տիկի՛ն, ձեր բերանը դուք.
Եթէ ոչ, ես այս թղթով կփակեմ:
Բռնի՛ր այս, պարո՛ն:

**Թուղթը ցոյց է տալիս Էդմոնդին, յետոյ Գոնեթիլին, որ շանք է
անում խլել այն, բայց իզուր:**

Դու ստո՛ր, քան այլ որեւէ անուն,
Կարդա՛ սեփական քո չարութիւնը,
Մի՛ պատոհիր, տիկի՛ն, ես նկատում եմ,
Որ ծանօթ է քեզ:

Տալիս է նամակը Էդմոնդին:

ԳՈՆԵՐԻԼ

Դիցուք ծանօթ է.

Օրէնքն իմ կողմն է եւ ոչ քո կողմը,
Ո՞վ կյանդոզի ինձ դատապարտել:

ԱԼԲԱՆԻ

Ճիւղ, այս թուղթը դու չե՞ս ճանաչում:

ԳՈՆԵՐԻԼ

Իզուր ես դու այդ հարցնում ինձանից:

Դուրս է գնում:

ԱԼԲԱՆԻ

(Մի սպայի).

Հետեւի՛ր նրան, նա լուսափատ է,
Կիսացնորուած:

ԷԴՄՈՆԴ

Բոլոր մեղքերը,

Որոնց մէջ դու ինձ ամբաստանեցիր,
Կատարել եմ ես եւ դեռ ատելին,
Դեռ շատ ատելին. ժամանակը լոկ
Կյայտնէ դրանք. դա անցաւ... ես էլ:
Բայց ասա՛ դու ինձ, ո՞վ ես դու, օ՛, դու,
Որին բախտն ահա շնորհեց իմ դէմ
Այս յաղթանակը, եթէ դու ազնիւ
Մարդ ես ծնունդով՝ ես ներում եմ քեզ:

ԷԴԳԱՐ

Թող այդ ներումը փոխադարձ լինի.
Էդմո՛նդ, ես արեամբ նոյնքան տոհմիկ եմ,
Որքան դու ինքդ. թէ ատելին չեմ,
Ապա ես իմ դէմ գործած մեղքերդ
Աւելի են մեծ: Անունս է Էդգար.
Քո հօր որդին եմ: Աստուածները միշտ
Արդարադատ են. նրանք մեր սիրած
Մոլութիւնները գործիք են շինում՝
Մեզ մտրակելու, պատժելու համար:
Այն պիղծ ու մոլի անկողինը, ուր
Մեր հայրը մի օր քեզ ծնունդ տուեց,
Նրանից խլեց լույսը աչքերի:

ԷԴՄՈՆԴ

Դու ճիշտ ասացիր. ճշմարիտ է այդ:
Բոլորեց անին իր շրջադարձը,
Եւ այստեղ եմ ես:

ԱԼԲԱՆԻ

(Էդգարին).

Ինձ թում էր, թէ

Քայլուածքդ է միայն կոստիւ տալիս
Արքայավայել մի ազնութիւն:
Պէտք է քեզ գրկեմ. թող կսկիծ ու ցաւ
Սիրտս յօշոտեն, եթէ երբեւէ
Ատել եմ ես քեզ կամ քո հօրը խեղճ:

ԷԴԳԱՐ

Յարգելի՛ իշխան, այդ լաւ գիտեմ ես:

ԱԼԲԱՆԻ

Ո՞ր էիր պահուել, ինչպէ՞ս իմացար
Հօրդ պատահած դժբախտութիւնը:

ԷԴԳԱՐ

Նրա հետ ես այն կրեցի, միտ՛ող:
Լսեցէ՛ք հիմա մի կարճ պատմութիւն,
Եւ երբ վերջանայ, երանի՛ սիրտս
Պայթի, դադարի: Որպէսզի խոյս տամ
Այն արինահեղ դատավճիռից,
Որ այնքան մօտից հալածում էր ինձ
(Ինչ քաղցր է կեանքը, որ յօժար ենք մենք
Ամէն ժամ կրել մահուան տազնաւը,
Քան թէ մի անգամ մեռնել, վերջանայ).
Ես հազա խեղճի ցնցոտիներ խելճ,
Ինքս ինձ տուի այնպիսի մի տեսք,
Որ շներն անգամ խոյս էին տալիս:
Հէնց այդ զգեստով ես հանդիպեցի
Հօրս, որ դեռ նոր կորցրել էր իր

Անգին աչքերի լոյսը կաթոգին.
Ես իսկոյն դարձայ նրան ուղեկից
Եւ առաջնորդող. ես հաց մուրացի,
Փրկեցի նրան յուսալքումից,
Եւ (ի՛նչ սխալմունք) երբէք ես նրան

Յայտնի չարեցի իմ ով լինելը:

Բայց, կէս ժամ առաջ, երբ զինուած էի,
Թէ՛ւ մեծայոյս, բայց ոչ լիովին
Վստահ արդ տարած իմ լաղթանակին,
Խնդրեցի նրան, որ ինձ շնորհի
Իր օրհնութիւնը եւ ծայրէծայր,
Պատմեցի նրան թափառաշրջիկ
Իմ պանդխտութեան պատմութիւնը ողջ.
Բայց նրա սիրտը՝ արդէն կիսաբեկ,
Աւա՛ղ, անկարող լինելով կրել
Ցնծութիւն ու վիշտ՝ երկու ծայրայեղ
Կրքերի պայքար, ժպտաց ու պայթեց:

ԷԴՄՈՆԴ

Քո այդ խօսքերը սիրտս շարժեցին,
Եւ գուցէ նրանք լինեն բարեբեր.
Բայց շարունակի՛ր, ինձ թում է, թէ
Դեռ շատ բան ունես դու մեզ պատմելու:

ԱԼԲԱՆԻ

Եթէ անլի տխրալի բաներ
Ունես ասելու՝ քեզ համար պահիր.
Այլեւս չունեմ ես ուժ լսելու:

ԷԴԳԱՐ

Սա մի վերջակէտ կարող էր լինել
Այն անձանց համար, որ վիշտ չեն սիրում:
Բայց կայ մի ուրիշ այր աղէտաւոր,
Որի վիշտը մեծ չափ չի ճանաչում՝
Գերազանցելով ծայրայեղն անգամ:
Մինչդեռ գոռալով ես ողբում էի

Լ՛օտ եկաւ մի մարդ, որ տեսել էր ինձ
Ամենանուաստ իմ վիճակի մէջ
Եւ խորշել էր իմ ընկերութիւնից.
Տեսնելով սակայն, թէ ո՞վ է այդքան
Տառապանք կրած մարդը, նա ուժգին
Փաթաթունեց վզիս եւ այնպէս ոռնաց,
Կարծես երկինքն էր ուզում սասանել:
Գրկեց նա հօրս եւ պատմեց ապա
Թէ՛ իր, թէ՛ Լիբի՛ արքայի մասին
Այնքան սրտաշարժ մի եղելութիւն,
Որի նմանը մարդ չի լսել դեռ.
Պատմելիս նրա վիշտը սաստկացաւ,
Եւ կեանքի թելերն արդէն թուլացած
Կտրատում էին, երբ փողը հնչեց,
Եւ ես ստիպուած թողեցի նրան:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ էր այդ մարդը:

ԷԴԳԱՐ

Քէնտն էր, ազնի՛ տեր.
Աքսորուած Քէնտը, որ ծպտեալ տեսքով
Հետեւում էր միշտ այն թագաւորին.
Որ նրան քշեց: Կատարում էր նա
Ծառայութիւններ, որ անվայել են
Անգամ ստրուկին:

Շտապով մտնում է մի ասպետ՝ մի արինաշաղախ դաշոյն
ձեռքին:

ԱՍՊԵՏ

Օգնութի՛ւն, շտա՛ւյ,
Օգնութեա՛ն հասէք:

ԷԴԳԱՐ

Ի՞նչ, ի՞նչ օգնութիւն:

Անգին աչքերի լոյսը կաթոգին.
Ես իսկոյն դարձայ նրան ուղեկից
Եւ առաջնորդող. ես հաց մուրացի,
Փրկեցի նրան յուսալքումից,
Եւ (ի՛նչ սխալմունք) երբէք ես նրան
Յայտնի չարեցի իմ ով լինելը:
Բայց, կէս ժամ առաջ, երբ զինուած էի,
Թէ՛ն մեծայոյս, բայց ոչ լիովին
Վստահ արդ տարած իմ յաղթանակին,
Խնդրեցի նրան, որ ինձ շնորհի
Իր օրհնութիւնը եւ ծայրէիծայր,
Պատմեցի նրան թափառաշրջիկ
Իմ պանդխտութեան պատմութիւնը ողջ.
Բայց նրա սիրտը՝ արդէն կիսաբեկ,
Աւա՛ղ, անկարող լինելով կրել
Ցնծութիւն ու վիշտ՝ երկու ծայրայեղ
Կրքերի պայքար, ժպտաց ու պայթեց:

ԷԴՄՈՆԴ

Քո այդ խօսքերը սիրտս շարժեցին,
Եւ գուցէ նրանք լինեն բարեբեր.
Բայց շարունակի՛ր, ինձ թում է, թէ
Դեռ շատ բան ունես դու մեզ պատմելու:

ԱԼԲԱՆԻ

Եթէ անլի տխրալի բաներ
Ունես ասելու՝ քեզ համար պահիր.
Այլեւս չունեն՝ ես ուժ լսելու:

ԷԴԳԱՐ

Սա մի վերջակէտ կարող էր լինել
Այն անձանց համար, որ վիշտ չեն սիրում:
Բայց կայ մի ուրիշ այր աղէտաւոր,
Որի վիշտը մեծ չափ չի ճանաչում՝
Գերազանցելով ծայրայեղն անգամ:
Մի՛նչդեռ գոռալով ես ողբում էի

Մօտ եկաւ մի մարդ, որ տեսել էր ինձ
Ամենանուաստ իմ վիճակի մէջ
Եւ խորշել էր իմ ընկերութիւնից.
Տեսնելով սակայն, թէ ո՞վ է այդքան
Տառապանք կրած մարդը, նա ուժգին
Փաթաթուեց վզիս եւ այնպէս ոռնաց,
Կարծես երկինքն էր ուզում սասանել:
Գրկեց նա հօրս եւ պատմեց ապա
Թէ՛ իր, թէ՛ Լիրի՛ արքայի մասին
Այնքան արտաշարժ մի եղելութիւն,
Որի նմանը մարդ չի լսել դեռ.
Պատմելիս նրա վիշտը սաստկացաւ,
Եւ կեանքի թելերն արդէն թուլացած
Կտրատում էին, երբ փողը հնչեց,
Եւ ես ստիպում թողեցի նրան:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ էր այդ մարդը:

ԷԴԳԱՐ

Քէնտն էր, ազնի՛ւ տէր.

Աքսորում Քէնտը, որ ծպտեալ տեսքով
Հետեւում էր միշտ այն թագաւորին,
Որ նրան քշեց: Կատարում էր նա
Ծառայութիւններ, որ անվայել են
Անգամ ստրուկին:

Շտապով մտնում է մի ասպետ՝ մի արինաշաղախ դաշոյն
ձեռքին:

ԱՍՊԵՏ

Օգնութի՛ւն, շտա՛ւս,
Օգնութեա՛ն հասէք:

ԷԴԳԱՐ

Ի՞նչ, ի՞նչ օգնութիւն:

ԱԼԲԱՆԻ

Դէ խօսի՛ր, ա՛յ մարդ:

ԷԴԳԱՐ

Ի՞նչ է այս դաշոյնն արիւնաշաղախ:

ԱՍՊԵՏ

Դեռես տաք է. նա դեռ ծխում է...
Նոր է դուրս եկել հէնց նրա սրտից...

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ, մա՛րդ, ո՞վ մեռաւ, խօսի՛ր:

ԱՍՊԵՏ

Ձեր կիճը, տէր իմ, ձեր կիճը մեռաւ,
Եւ նրա քոյրն էլ հէնց նրա ձեռքով
Թունաւորուած է: Նա խոստովանեց:

ԷԴՄՈՆԴ

Երկուսի հետ էլ նշանուած էի.
Այժմ երեքով ամուսնանում ենք
Հէնց նոյն վայրկեանում:

Մտնում է Քէնտը:

ԱԼԲԱՆԻ

Ողջ են, թէ մեռած՝
Թող բերեն նրանց մարմիններն այստեղ:

Ներս են բերում Գոնեթիլի եւ Ռեզանի մարմինները:

Երկնային արդար այս դատաստանը
Թէեւ լցնում է մեզ զարհուրանքով,
Բայց մեր սրտերի գույթը չի շարժում:

ԷԴԳԱՐ

Ահա Քէնտը, տէ՛ր:

ԱԼԲԱՆԻ

Աւա՛ղ, այս նա է.

Պարագաները մեզ թոյլ չեն տալիս
Ողջունել անգամ, ինչպէս մեր բարի
Կենցաղն ու կարգն են պահանջում:

ՔէՆՏ

Ես լոկ

Իմ տէր արքային մի բարի գիշեր
Մաղթելու համար եմ այստեղ եկել:
Այստեղ չէ՞ միթէ:

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչ մոռացութիւն:

Ո՞ր է թագաւորն, Էդմո՛նդ, եւ ո՞ր է
Կորդելիան, ասա՛: Քէ՛նտ, տեսնո՞ւմ ես դու
Այս տեսարանը:

ՔէՆՏ

Աւա՛ղ, այս ի՞նչ է:

ԷԴՄՈՆԴ

Բայց այսուհանդերձ ես սիրուած էի,
Իմ սիրոյ համար ահա սրանցից
Մէկը թոյն տուեց միսին, ապա
Ինքն էլ կամովին անձնասպան եղաւ:

ԱԼԲԱՆԻ

Ծիշտ է: Ծածկեցէ՛ք նրանց դէմքերը:

ԷԴՄՈՆԴ

Հազի թէ կեսնքս դեռ շունչ ունի քիչ:
Եւ կամենում եմ, ընդդէմ բնութեան,
Մի բարիք գործել: Մարդ ուղարկեցէ՛ք...
Բայց իսկոյն, իսկոյն... դէպի ամբողջ.
Գրաւոր արուած իմ հրամանը

Մահ է սպառնում թե՛ արքայ Լիլիան,
Թե՛ Կորդելիային: Մարդ ուղարկեցէ՛ք,
Քանի դեռ ուշ չէ:

ԱԼԲԱՆԻ

Օ՛հ, շտապեցէ՛ք,
Վազեցէ՛ք իսկոյն, դէ շո՛ւտ, շտապէ՛ք:

ԷԴԳԱՐ

Բայց ո՞ւմ մօտ, միլո՛րդ:
(Էդմոնդին)։

Ո՞ւմ է յանձնուած.

Մի նշա՛ն տուէք, որ հնազանդեն:

ԷԴՄՈՆԴ

Լաւ մտածեցիր, ա՛ն տուրս եւ տուր
Հարիւրապետին:

ԱԼԲԱՆԻ

Դէ, շո՛ւտ, շտապի՛ր,
Ինչպէս քո կեանքը փրկելու համար:

Էդգարը գնում է:

ԷԴՄՈՆԴ

Ես եւ քո կինը հրամայել ենք,
Որ Կորդելիային նա բանտում կախէ
Եւ յայտարարէ, թէ ինքն է իրեն
Յուսահատուելով խեղդամահ արել:

ԱԼԲԱՆԻ

Աստուածները թող ազատեն նրան.
Քիչ հեռո՛ւ տարէք սրան այստեղից:

Էդմոնդին տանում են:

Մտնում է Լիլը՝ մեռած Կորդելիան նրա թեւերի մէջ:

ԼԻՐ

Ոռնացէ՛ք դէ դուք, ոռնացէ՛ք հիմա,
Անվերջ ոռնացէ՛ք, օ՛հ ի՛նչ քարտէլէն
Մարդիկ էք, եթէ ես ունենայի
Ձեր լեզուները եւ ձեր աչքերը,
Այնպէս կանէի, որ կճարճատեր
Երկնի կամարը հիմնովին, ընդմիջտ:
Օ՛հ, արդէն գնա՛ց, գնա՛ց յաիտեան.
Մանաչում եմ ես՝ մեռած է մարդը,
Թէ կենդանի է... Իմ դուստրը արդէն
Այնպէս է մեռած, ինչպէս այս հողը:
Հայելի՛ տուէ՛ք, թէ շունչը նրա
Պղտորէ նրան կամ մթնացնէ՛
Ուրեմն նա դեռ կենդանի է... դէ՛...

ՔԷՆՏ

Ա՞յս է աշխարհի վերջին օրն արդեօք,
Վերջին դատաստանն...

ԷԴԳԱՐ

Թէ՞ պատկեր է սա այն արհաւիրքի:

ԼԻՐ

Փետուրը մի քիչ
Ծարժում է, օ՛հ, նա կենդանի է դեռ:
Եթէ ողջ լինի նա՝ այդ այնպիսի
Երջանկութիւն է մեծագոյն, որ դա
Կարող է լինել հատուցում բոլոր
Վշտերի համար, որ կրել եմ ես:

ՔԷՆՏ

(Արքայի առջեւ ծունկ չոքելով).
Ո՛չ, բարի իմ տէ՛ր:

ԼԻՐ

Հեռացի՛ր, խնդրեմ:

ԷՂԳԱՐ

Սա ազնիւ Քէնոն է, ձեր բարեկամը:

ԼԻՐ

Կրա՛կ թող թափուի բոլորիդ գլխին,
Դուք, մարդասպաններ եւ դաւաճաններ.
Ես կարող էի ազատել նրան,
Բայց արդ նա գնաց այլեւս յափտեան:
Կորդե՛լիա, դո՛ւստր իմ, սպասի՛ր մի քիչ.
Դէ ի՞նչ ես ասում: Միշտ նրա ձայնը
Քնքուշ է եղել, ե՛ւ հեզ, ե՛ւ խոնարհ.
Դա կնոջ համար գանձ է թանկագին:
Ես սպանեցի այն սրիկային,
Որ քեզ կախում էր:

ՍՊԱՅ

Ծիշտ է, սպանեց:

ԼԻՐ

Ի՞նչ, չսպանեցի՞. եղել են օրեր,
Երբ իմ պատուական սայրաստր սրով
Ես գետնահար եմ արել բոլորին.
Այժմ ծեր եմ եւ. այսքան ցաւ ու վիշտ
Ինձ ուժատել են:
(Քէնոնին).

Ո՞վ ես դու. լաւ չեն

Աչքերս այնքան էլ, քեզ ուղիղն ասեմ:

ՔԷՆՏ

Եթէ կայ երկու մարդ, որոնց վրայ
Փորձել է բախտը իր ամբողջ ուժը՝
Անչափ սիրելով եւ արհամարհելով,
Դրանցից մէկին տեսնում էք ահա:

ԼԻՐ

Աչքս մթնել է. Քէնտը չե՞ս արդեօք:

ՔԷՆՏ

Ձեր ծառայ Քէնտը. Ո՞ր է Կայուսը,
Որ ծառայում էր ձեզ նուիրաբար:

ԼԻՐ

Նա մարդ էր ազնիւ, կարող եմ երդուել,
Գիտէր քաջաբար կոռել ու զարկել.
Մեռել է արդէն եւ փտել:

ՔԷՆՏ

Օ՛, ո՛չ.

Ես այդ մարդն եմ հէնց, իմ բարի՛ արքայ:

ԼԻՐ

Կտեսնենք...

ՔԷՆՏ

Ես ձեր բախտի խորտակման
Եւ տառապանքի առաջին օրից
Հետեւել եմ ձեր դժնի քայլերին:

ԼԻՐ

Ուրախ եմ տեսնել:

ՔԷՆՏ

Ի՞նչ ուրախութիւն.

Ամէն ինչ մութ է, մոայլ, մահաբեր,
Ձեր մեծ դուստրերը իրենք կանխեցին
Իրենց պատիժը եւ մեռան նրանք
Յուսարման մէջ:

ԼԻՐ

Այո, կարծում եմ:

ԱԼԲԱՆԻ

Նա չի իսանում, թէ ինչ է խօսում.

Իզուր ենք հարցեր մենք տալիս նրան:

ԷԴԳԱՐ

Բոլորովին զուր:

Մտնում է մի սպայ:

ՍՊԱՅ

Էդմոնդը մեռա:

ԱԼԲԱՆԻ

Այդ կարեւոր չէ այժմ ամենեւին.

Դուք, ազնիւ լորդեր եւ բարեկամներ,

Լսեցէ՛ք մեր կամքն ու ցանկութիւնը.

Ամէն սփոփանք, որ կարող ենք տալ

Այս մեծ դժբախտին, պէտք է որ տրուի:

Իսկ մենք որոշել ենք այսուհետեւ,

Որքան դեռ ողջ է այս վեհ ծերունին,

Վեհապետական մեր իշխանութիւնն

Յանձնել վերստին մինչեւ մահ նրան:

(Էդգարին եւ Քէնտին).

Իսկ դուք կստանաք ձեր բոլոր նախկին

Իրաւունքները՝ յաւելումներով

Եւ փառք ու պատուով, որոնց իսկապէս

Դուք արժանի էք: Ամէն բարեկամ

Իր բարի գործի վարձքը կստանայ,

Ամէն թշնամի՝ իր յանցանքների

Քաւութեան բաժակն: Օ՛, տեսէ՛ք, տեսէ՛ք:

Մատնանշում է Լիթին:

ԼԻԻ

Եւ իմ մանկիկը կախուած, խեղդամահ,

Ո՛չ, ո՛չ, կեանք չկայ... եւ ինչո՞ւ պիտի

Ապրեն աշխարհում շուն, ձի, օձ, մկնիկ,

Իսկ դու չշնչես. օհ, էլ չե՛ս դառնայ

Դու երբէ՛ք, երբէ՛ք, երբէ՛ք ու երբէ՛ք.

Բա՛ց արեք, խնդրեմ, իմ այս կոճակը.

Շնորհակալ եմ. տեսնո՞ւմ էք դուք այս.

Նայեցէք սրան. նրա շրթունքներն...

Ա՛հ, տեսէ՛ք, տեսէ՛ք:

Մեռնում է:

ԷԴԳԱՐ

Նա ուշաթափուեց.

Տէ՛ր իմ, օ՛հ, տէ՛ր իմ:

ՔԷՆՏ

Պայթի՛ր, սի՛րտ, պայթի՛ր.

Ե՞րբ պիտի պայթես:

ԷԴԳԱՐ

Տէ՛ր, աչքերդ բա՛ց:

ՔԷՆՏ

Մի՛ տանջէք հոգին, օ՛հ, թողէ՛ք անցնի.

Ով կամենում է այս դառն աշխարհի

Չարչարանքների անիւին գասած

Դեռ պահել նրան անլի երկար՝

Նա թշնամի է նրան:

ԷԴԳԱՐ

Հա՛, գնա՛ց:

ՔԷՆՏ

Չարմանալի է, որ նա դեռ այսքան

Դիմացաւ. օ՛, նա բռնի էր ապրում:

ԱԼԲԱՆԻ

Տարէ՛ք այստեղից. այժմ մեզ միայն

Սուգն է մնացել:

(Քէնտիճ եւ Էդգարիճ).

Ո՛վ դուք, իմ ազնի

Բարեկամներս, կառավարեցէ՛ք

Այս արնաշաղախ պետութիւնը դուք,

Արինաշաղախ այս տէրութիւնը:

ՔԷՆՏ

Ես ճանապարհ եմ ընկնելու շուտով.

Կանչում է ահա թագաւորը ինձ,

Եւ չպէտք է ես ասեմ նրան՝ ոչ:

ԱԼԲԱՆԻ

Պէտք է դժնդակ այս ժամանակի

Ծանր բեռան տակ համբերող լինենք,

Եւ ասենք լոկ այն, ինչ սիրտն է զգում,

Ոչ թէ այն, ինչ որ հարկ է ասելու:

Ամենից ծերը ամենից ատէլ

Տառապանք կրեց: Մենք որ կրտսեր ենք,

Ո՛չ կապրենք այդքան, ո՛չ էլ կտեսնենք:

ՎԵՐՉ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Չարենց եւ «Արքայ Լիր» – Հ. Բախչինեան ----- 5

Արարուած առաջին	----- 17
Արարուած երկրորդ	----- 67
Արարուած երրորդ	----- 106
Արարուած չորրորդ	----- 143
Արարուած հինգերորդ	----- 190

**ՇԷՔՍՊԻՐ
ԱՐՔԱՅ ԼԻՐ**

Ողբերգություն հինգ արարուածով

Համակարգչային էջադրումը՝

ԱՆԺԵԼԱ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կազմի ձեւադրումը՝

ԴԱԻԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ԷԴՄՈՆԴ

Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, բաժանուցե՛ք:

ՔԷՆՏ

(Դստնայով դեպի Էդմոնդը). Եթե կամենում էք, համեցե՛ք, փոքրի՛կ պարոն, համեցե՛ք, ես ձեզ միս կուտեցնեմ, դե, երիտասա՛րդ պարոն, առա՛ջ եկեք:

ԳԼՈՍՏԷՐ

Սու՛ր, զե՛նք, ի՞նչ է պատահել այստեղ:

ՌԵԳԱՆ

Սրանք թագաւորի եւ իմ քրոջ նամակաբերներն են:

ԿՈՐՆՎԱԼ

Ինչի՞ մասին է ձեր վեճը, խօսեցե՛ք:

ՕՍՎԱԼԴ

Շունչս կտրուել է, միլո՛րդ:

ՔԷՆՏ

Զարմանալի չէ, այնքան քաջութիւն ցոյց տուիր, որ... դու, նուա՛ստ թշուառական, բնութիւնը քեզ ուրանում է, պէտք է որ մի դերձակ քեզ շինած լինի:

ԿՈՐՆՎԱԼ

Դու զարմանալի մարդ ես, դերձակն էլ մա՞րդ շինէ:

ՔԷՆՏ

Այո՛, պարո՛ն, դերձակը, մի քարտաշ կամ ներկարար, դժուար թէ կարողանային մի այսքան անպիտան բան շինել, եթէ երկու ժամ էլ աշխատէին:

ԿՈՐՆՎԱԼ

Ասացե՛ք, սակայն, ինչի՞ց ծագեց ձեր վեճը:

ՕՍՎԱԼԴ

Այս ծեր թշուառականը, որի կեանքը խնայեցի՛ լարգելով նրա ծեր մօրուքը...

ՔԷՆՏ

Դու շան ձա՛գ, դու անօգուտ տա՛ն: Միլո՛րդ, եթէ թոյլ կտաք, ես այս կոպիտ սրիկային սանդի մէջ կծե՛ծեմ եւ ծեփ շինելով՝ արտաքնոցի պատը կծեփեմ: Դո՛ւ խնայեցիր իմ սպիտակ մօրուքը, դո՞ւ...

ԿՈՐՆՎԱԼ

Լոհ՛ր, անպիտա՛ն, բիրտ թշուառկա՛ն, Պատկառել չգիտե՞ս:

ՔԷՆՏ

Այո՛, տէ՛ր, գիտեմ, Բայց բարկութիւնն էլ ունի իր անխախտ Իրաւունքները:

ԿՈՐՆՎԱԼ

Բայց ինչո՞ւ ես դու այդպէս բարկացել:

ՔԷՆՏ

Որ մի այսպիսի խեղճ թշուառական, Համարձակում է սուր կրել վրան, Երբ ազնութեան նշոյլ չի կրում: Այս նենգ, ժպտադէմ ստահակները Մկների նման կրծում են այն սուրբ Կապերը, որոնք ոչ ոք չի կարող Քանդել այլապէս: Շոյում են սրանք Ամենայն մի կիրք, որ իրենց տիրոջ Սրտին հաճելի եւ ցանկալի է: Կրակի վրայ իող են սրսկում Եւ ձիւն կուտակում սրտի վրայ սառ, Ժխտում, հաստատում, ալկիոնի պէս Իրենց կտուցը միշտ շուռ են տալիս

